

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 309-Ա որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	6
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	11
ԱՐՏԱՔԻՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ.....	15
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	19
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	26
Զ Բ Ո Ս Ա Շ Ր Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն.....	41
ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	45
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ	53
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	68
ՄՇԱԿՈՒՅԹ.....	76
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	86
ՏՐԱՆՍՊՈՐՏ.....	95
ՔԱՂԱՔԱՇԻՆ ՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	104
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	130
ԽԵԼԱՑԻ ԵՐԵՎԱՆ	138
ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	140
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	153
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	163
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	181
ԷՐԵՐՈՒՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	191
ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	198
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՖԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	208
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	219
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	233
ՆՈՒԲՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	242
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	250
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	268

ՆԱԽԱԲԱՆ

Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաքի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1084.0 հազ. մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն:

Երևանում տեղական ինքնակառավարումը հիմնվում է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված սկզբունքների վրա՝ ապահովելով Երևանի բոլոր վարչական շրջանների համաչափ և կայուն զարգացումը:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները: Երևանը հանդիսանում է նաև կարևորագույն տրանսպորտային հանգույց:

Երևանի զարգացման 2021 թվականի ծրագիրը նպատակ ունի ապահովել բնակչության կենսական շահերը և բարեկեցությունը, մարդկային զարգացումը՝ երաշխավորելով երևանցիների կյանքի որակի բարելավումը:

Երևանը պետք է լինի մաքուր, կանաչ ու բարեկարգ, աշխատանքի և կարգուկանոնի, հարմարավետ, ավանդույթների և ապագայի քաղաք, որտեղ ապահովված կլինի հասարակության յուրաքանչյուր անդամի անվտանգ և արժանավայել կյանքը, ինքնաարտահայտման հնարավորությունը, բավարարված կլինեն սոցիալական ապահովության կարիք ունեցող քաղաքացիների նվազագույն անհրաժեշտ կարիքները:

Զարգացման ծրագրի իրականացման գրավականը հանդիսանում է քաղաքացիների վստահությունը վայելող և արդյունավետ գործող քաղաքային իշխանությունը, ինչպես նաև Երևանի ավագանին, որոնք հիմնված են իրավունքների և ազատությունների հարգման, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանն ակտիվ երկխոսության միջոցով կառավարման գործընթացներին մասնակից դարձնելու վրա:

Ծրագիրը բովանդակում է քաղաքային տնտեսության ոլորտների և Երևան քաղաքի վարչական շրջանների ներկա վիճակը, հիմնախնդիրները և նախատեսվող տարեկան աշխատանքները՝ նախանշելով զարգացման հիմնական ուղղությունները:

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Երևանի քաղաքաշինական նոր ռազմավարության (City Development Strategy) մշակման անհրաժեշտություն,
2. Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մշակված նախագծերի գործող համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմում /գոնհինգ/ ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջնահերթ մշակման գոտիներ առանձնացնելու սկզբունքով,
3. Մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում,
4. Վերելակային տնտեսության արդիականացում,
5. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգի ամբողջական արդիականացման մեկնարկի ապահովում,
6. Զբոսաշրջիկների համար տեղանքների և տրանսպորտային ուղիների հասանելիությունը բարձրացնելու նպատակով օտար լեզուներով ուղեցույցերի և էլեկտրոնային քարտեզների կազմում, համապատասխան փողոցների և զբոսաշրջանային վայրերի նշաններով կահավորում, այդ թվում զբոսաշրջային ծառայություններ մատուցող ընկերությունների գովազդային վահանակներին նույնաձև կահավորում,
7. Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանում և ավելացում, ռոռգման համակարգի արդիականացում, նոր ռոռգման ցանցերի կառուցում,
8. Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում, մայրակաղաքի կանաչ ֆոնդի երիտասարդացում,
9. Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում և ծառայությունների որակի բարձրացում,
10. Բժշկական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում,
11. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում՝ մասնավորապես արտակարգ դրությունների իրավիճակում,
12. Կայուն և սոցիալական միջավայրի ապահովում, բնակչության առանձին նպատակային խմբերի համար տեղական սոցիալական ծրագրերի կազմում և իրագործում,
13. «Համայնքային սոցիալական աշխատողի ինստիտուտի ներդրում, սոցիալական ապահովության համակարգի բարելավում»,
14. Նախակրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում,
15. Նախադպրոցական կրթության որակի բարձրացում, ներառականության խթանում,
16. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում,

17. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում,
18. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում,
19. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում,
20. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում, կառավարման օպտիմալացում և ծառայությունների որակի բարելավում,
21. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովում,
22. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատման պահպանում,
23. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և տեղական հանրաքվեների միջոցով,
24. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում,
25. Ծրագրերի պլանավորման և իրականացման ընթացքում Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով առաջացած նոր իրողությունների, մարտահրավերների, ի հայտ եկած նոր շահառու խմբերի կարիքների հաշվի առնում:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Ներկայումս Երևան քաղաքում գործում է թվով 8911 առևտրի, 2515 հանրային սննդի, 3186 կենցաղային ծառայության օբյեկտ, 183 հյուրանոցային համալիր, 11 սպառողական և 23 գյուղատնտեսական արտադրանքի շուկա, 20 հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման սրահ:

Վերը նշված հանրային սննդի օբյեկտներից թվով 306-ի հետ կնքվել է հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն իրականացնելու պայմանագիր, որից 76.2%-ը Կենտրոն վարչական շրջանի տարածքում գործող հանրային սննդի օբյեկտների հետ, իսկ 23.8%-ը մնացած 11 վարչական շրջանների տարածքներում գործող օբյեկտների:

Երևան քաղաքում գործող հանրային սննդի օբյեկտների 40.75%-ը, հյուրանոցների 37.1%-ը, կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 33.0%-ը կենտրոնացված են Կենտրոն վարչական շրջանում, առևտրի օբյեկտների 61.1%-ը՝ Արաբկիր, Կենտրոն, Մալաթիա-Մեքաստիա և Շենգավիթ վարչական շրջաններում:

Գյուղատնտեսական արտադրանքի առևտրի շրջանառության մեծ ծավալն իրականացվում է խոշոր առևտրի օբյեկտներում և խանութներում, իսկ գյուղատնտեսական արտադրանքի շուկաները թերձանրաբեռնված են և կատարվող առևտրի շրջանառությունը հասնում է փոքր ծավալների:

Հիմնախնդիրներ

1. Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքը բացառելու նպատակով հսկողության ուժեղացում,
2. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում,
3. Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն,
4. Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական դաշտի կարգավորում:

2021թ. նախատեսվող աշխատանքներ՝

1. Առևտրի, սպասարկումների և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում,

2. Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում,
3. Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում,
4. Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում,
5. Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում:

1. «Առևտրի, սպասարկումների և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում»

Ծրագրի նպատակը	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առևտրի և սպասարկման ոլորտի առանձին օրենսդրական ակտերի ոչ կատարելագործված, դրանցում ոլորտի նկատմամբ սահմանված կանոնների ու ներկայացվող պահանջների թերի լինելը բացասաբար են անդրադառնում աշխատանքների արդյունավետության ու որակի վրա և ավելացնում ոլորտում իրականացվող գործառույթներից բխող ռիսկերը: Մասնավորապես՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակված չեն առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման կարգերը, ուստի օրենսդրական կարգավորումից հետո կմշակվեն ոլորտը կարգավորող համապատասխան կանոններ և նորմատիվ իրավական ակտեր: Առաջարկություններ կներկայացվեն նաև առևտրի և սպասարկման վերաբերյալ այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	Աշխատանքների կատարելագործում և արդյունավետ հսկողության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ,	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականի ընթացքում

իրականացման ժամանակացույց	
---------------------------	--

2.«Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում»

Ծրագրի նպատակը	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին բացօթյա ապօրինի առևտուրը վտանգում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների արտանետումների հետևանքով գյուղատնտեսական մթերքները արագ որակազրկվում են, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում բնակչության առողջությանը: Առողջապահության նախարարության կողմից արձանագրվել են բնակչության շրջանում թունավորման բազմաթիվ դեպքեր, որոնք առաջացել են փողոցներից գյուղմթերքներ գնելու և սպառելու հետևանքով:</p> <p>Բացօթյա ապօրինի առևտուրը առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնի և տրանսպորտի երթևեկին, երբեմն ստեղծում ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման իրավիճակ: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով նրանց շրջանում դժգոհություններ: Առևտուր իրականացնելու համար անհրաժեշտ զանազան պարագաների տեղադրման հետևանքով աղճատվում է քաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղագիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր:</p> <p>Ուստի օրենսդրական պահանջներն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջիկա տարվա ընթացքում կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև 2020 թվականին բացօթյա ապօրինի առևտուրը կանխարգելելու ուղղությամբ մշակված օրենսդրական նախագծերն անհրաժեշտության դեպքում կլրամշակվեն և կդրվեն շրջանառության մեջ:</p>
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ ոստիկանության հետ
Ծրագրի անմիջական նպատակը	Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականի ընթացքում:
---	---

3. «Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն
Ծրագրի համառոտ նկարագրությունը	2011 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանի և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ, մատչելի մթերքներով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանում, Կասյան փողոցի սկզբնամասում և Կենտրոն վարչական շրջանի «Մալիբու» սրճարանի հարևանությամբ, ինչպես նաև Հրազդան մարզադաշտի հարևանությամբ հաջողությամբ գործունեություն են իրականացրել գյուղատնտեսական մթերքների սեզոնային տոնավաճառները, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները: Առաջիկա տարվա ընթացքում Երևան քաղաքի մնացած վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղմթերքների նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ
Ծրագրի անմիջական նպատակը	Գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականի ընթացքում

4.«Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման կանոնակարգում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն:
----------------	--

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ուսումնասիրությունները ցուց են տվել, որ գործող հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման հետևանքով երբեմն խոչընդոտվում է հետիոտնի երթևեկը, որն առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը, ուստի 2020 թվականին հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպումը կանոնակարգելու վերաբերյալ մշակված օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումից հետո կմշակվեն համապատասխան կարգավորումներ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականի ընթացքում

5.«Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Չնայած վերջին տարիների ընթացքում Երևան քաղաքում իրականացվել են առևտրի և սպասարկման ոլորտի մեծ թվով կրպակների ապամոնտաժման աշխատանքներ, սակայն դեռևս ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում, փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) մի մասը: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, ապօրինի, հողամասի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն ՀՀ ոստիկանության հետ:

Ծրագրի անմիջական նպատակը	Չգործող, լքյալ, ապօրինի, հողամասի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների և տաղավարների ապամոնտաժում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականի ընթացքում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Երևան քաղաքում բնակչությանը արտահիվանդանոցային և հիվանդանոցային անվճար բժշկական օգնություն և սպասարկման ծառայություններ են մատուցվում ավելի քան 115 առողջապահական կազմակերպությունների կողմից, որից 30-ը գործում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ, դրանցից 4-ը բժշկական կենտրոն է (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 3 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց), 1-ը՝ դիապանսեր, 1-ը՝ շտապ բուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 1-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա: Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 24-ը մատուցում են ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն:

Երևան քաղաքի բնակչությանը որակյալ բուժօժանդությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հազեցվածությունը: Երևանի ենթակայության պոլիկլինիկական բուժհաստատություններից 7-ը հազեցած են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, 15-ը՝ միջին հազեցվածության են, հիվանդանոցային ծառայություններից՝ 2-ը հազեցած են, 4-ը՝ միջին հազեցվածության են:

Շարունակական բնույթ ունեցող «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում 2013-2020 թվականների ընթացքում Երևանի ենթակայության բուժհաստատությունները հազեցվել են 707 անուն նոր բուժսարքավորումներով, այդ թվում՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ և ֆիզիոթերապևտիկ սարքավորումներով, բժշկական պարագաներով /վիրահատական սեղաններ, լամպ, զինեկոլոգիական աթոռներ և այլն/ և այլ անհրաժեշտ սարքավորումներով և պարագաներով: Ծրագրի իրականացման արդյունքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններից սկսեցին օգտվել ոչ միայն սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձինք՝ պետական պատվերի շրջանակներում, այլ նաև վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից օգտվող քաղաքացիներ, որն էլ իր հերթին նպաստեց նաև վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների ծավալի ավելացմանը:

Վճարովի հիմունքներով մատուցվող ծառայությունների ծավալի ավելացումը հնարավորություն է ընձեռում ստանալ լրացուցիչ եկամուտներ, ինչն էլ իր հերթին հնարավորություն է

ընձեռում ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր՝ հետագա զարգացման համար, մասնավորապես ընկերություններն իրենց միջոցների հաշվին իրականացրել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Միաժամանակ՝ 2020 թվականին Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված լարված համաճարակային իրավիճակն իր տնտեսական հետևանքներն է թողել ինչպես տնտեսության, այնպես էլ առողջապահական ոլորտի վրա, արդյունքում՝ Երևանի ենթակայության առողջապահական ընկերությունները հայտնվել են ծանր ֆինանսական վիճակում և ընթացիկ գործունեությունը ապահովել են շնորհիվ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացված եկամուտների, որը, իրավիճակով պայմանավորված, 2020 թվականին 2019 թվականի հետ համեմատ ունի նվազման միտում:

2019 և 2020 թվականներին իրականացվել է «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակայանների հիմնանորոգման աշխատանքներ:

Պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում, բուժհաստատությունների զարգացման համար լավագույն ուղղություն դիտարկելով հավատարմագրային կառավարման ինստիտուտը, Երևանի ենթակայության «Քանաքեռ-Զեյթուն» ծննդատուն ՓԲԸ-ն հանձնվել է հավատարմագրային կառավարման՝ բուժհաստատության տեխնիկական բազայի հագեցման, հիմնանորոգման աշխատանքների իրականացման և կադրերի վերապատրաստման նպատակով: Երևանի ենթակայության հիվանդանոցային ծառայությունների զարգացման նպատակով նախատեսվում է հետագայում դիտարկել նաև մասնավոր հատվածի կողմից Երևանի ենթակայության հիվանդանոցային բուժհաստատությունները հավատարմագրային կառավարման հանձնելու ծրագրեր:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող սոցիալապես անապահով բուժաշխատողների համար կազմակերպվել է վերապատրաստման գործընթաց, արդյունքում՝ 2014 թվականից առ այսօր վերապատրաստվել են թվով՝ 338 բժիշկ և 290 բուժքույր: 2020 թվականին նախատեսվում է վերապատրաստման գործընթաց կազմակերպել 100 բժշկի և 100 բուժքրոջ համար:

Համակարգչային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտությունները պետության կողմից երաշխավորված դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված չլինելու պատճառով հասանելի չեն հասարակության լայն շերտերի համար, ուստի սոցիալական լարվածությունը որոշ չափով մեղմելու նպատակով Երևան քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել մագնիսա-ռեզոնանսային և կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, ընդ որում կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայությունից 2014-2019 թվականներին օգտվել է 1088 քաղաքացի, իսկ մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունից 2018-2019 թվականներին օգտվել է 156 քաղաքացի: 2020 թվականի համար ձեռք է բերվել 150 կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, 100 մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն:

Հիմնախնդիրներ

1. Բժշկական ծառայությունների որակի բարելավում,
2. Բժշկական հաստատությունների շենքային պայմանների բարելավում,
3. Մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացում,
4. Տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով, գույքի արդիականացում,
5. Վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական և ոչ բժշկական ծառայությունների ծավալի ավելացում, վերջիններից ստացված մուտքերից աշխատակիցներին լրավճարների տրամադրում,

6. Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում,

7. Երևանի ենթակայության բուժհաստատություններում աշխատող բժիշկների, բուժքույրերի և դեղագետների վերապատրաստում:

2021թ. նախատեսվող աշխատանքներ`

1. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում,

2. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում,

3. Բնակչությանը կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում:

1. «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Բուժհաստատությունների տեխնիկական հագեցում, այդ թվում՝ վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխանող բժշկական սարքավորումներով և պարագաներով																								
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վաղ շրջանում հիվանդությունների հայտնաբերման և դրանց հետագա բարդությունների կանխարգելման և արդյունավետ բուժման նպատակով նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր-գործիքային սարքավորումներ, մասնավորապես՝ ժամանակակից թվային ռենտգեն ապարատներ, ուլտրաձայնային հետազոտման սարքեր՝ 3 տվիչներով, լաբորատոր-ախտորոշիչ սարքավորումներ, աչքի պաթոլոգիաների կանխարգելման, համալիր ախտորոշման և վերջնական արդյունք ապահովելու նպատակով նախատեսվում է Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների բոլոր ակնաբուժական կաբինետները հագեցնել ճեղքային լամպերով:																								
Համագործակցություն																									
Ծրագրի անմիջական նպատակ*	<p>Ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է ձեռքբերել ներքոթվարկյալ սարքավորումները.</p> <table border="0" data-bbox="487 1491 1461 1879"> <tr> <td>1</td> <td>Թվային ռենտգեն ապարատ`</td> <td>8</td> <td>հատ</td> </tr> <tr> <td>2</td> <td>Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով`</td> <td>2</td> <td>հատ</td> </tr> <tr> <td>3</td> <td>Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով`</td> <td>6</td> <td>հատ</td> </tr> <tr> <td>4</td> <td>Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով`</td> <td>1</td> <td>հատ</td> </tr> <tr> <td>5</td> <td>Կոագուլոմետր`</td> <td>5</td> <td>հատ</td> </tr> <tr> <td>6</td> <td>Լաբորատոր ցենտրիֆուգ`</td> <td>8</td> <td>հատ</td> </tr> </table>	1	Թվային ռենտգեն ապարատ`	8	հատ	2	Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով`	2	հատ	3	Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով`	6	հատ	4	Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով`	1	հատ	5	Կոագուլոմետր`	5	հատ	6	Լաբորատոր ցենտրիֆուգ`	8	հատ
1	Թվային ռենտգեն ապարատ`	8	հատ																						
2	Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով`	2	հատ																						
3	Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով`	6	հատ																						
4	Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով`	1	հատ																						
5	Կոագուլոմետր`	5	հատ																						
6	Լաբորատոր ցենտրիֆուգ`	8	հատ																						

	7 Բինոկուլյար մանրադիտակ`	8 հատ
	8 Ճեղքային լամպ`	6 հատ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի ենթակայության բուժհաստատություններ, Երևան քաղաքի բնակիչներ	
Ծրագրի սկիզբը և վարտը, իրականացման ժամանակացույցը	2021 թվական	

2. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Երևանի ենթակայության բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում	
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Առողջապահության ոլորտի գերակա ուղղություններից է սահմանվել Երևանի ենթակայության առողջապահական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևանի ենթակայության բուժհաստատություններում կատարել շենքային պայմանների բարելավման աշխատանքներ` անխտիր ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի ապահովմանը, մատչելի մուտքերին:	
Համագործակցություն		
Ծրագրի անմիջական նպատակ*	Ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Արշակունյաց պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա», «Նորագավիթ պոլիկլինիկա» և «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում կատարել սանհանգույցների հիմնանորոգման (ընդ որում հաշմանդամություն ունեցող անձանց համար սանհանգույցից օգտվելու մատչելիության ապահովմամբ), դռների փոխարինման և «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2-րդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներ:	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան ենթակայության բուժհաստատություններ, Երևան քաղաքի բնակիչներ	
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021 թվական	

*Ծրագիրը համակարգող ստորաբաժանում աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն

3. «Բնակչությանը կոմայուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Երևանի բնակչության համար կոմպյուտերային և մազնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունների տրամադրումն է:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կոմպյուտերային /ԿՏ/ և մազնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի /ՄՌՏ/ հետազոտությունները շատ կարևոր են առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար: Նշված ծառայությունների ձեռքբերումը հնարավորություն կտա որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի բնակիչների համար ձեռք բերել Կոմպյուտերային և մազնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտության ծառայություններ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ /քանակ/	Ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է ձեռքբերել. 1. Կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն /ԿՏ/՝ 150 հատ, 2. Մազնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն /ՄՌՏ/՝ 100 հատ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021 թվականի հունվար ամսից մինչև դեկտեմբերի 25-ը

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդային դաշտը կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի պահանջներով՝ «Գովազդի մասին» օրենք, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի նոյեմբերի 18-ի N 37-Ն որոշում, «Արտադրողի (վաճառողի կատարողի) կողմից տեղեկատվություն զետեղելու ցուցանակին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 19.03.2002 թվականի N 270 որոշում:

Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար վճարվող տեղական տուրքի դրույքաչափերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 179-Ն որոշմամբ:

Երևան քաղաքի վարչական շրջանների տարածքում գովազդային գործունեություն է իրականացնում թվով 162 մասնագիտացված գովազդային կազմակերպություն, տեղադրված (տեղաբաշխված) գովազդային վահանակների թիվը 1762 հատ է՝ ընդամենը 31.670 քմ մակերեսով:

Երևանում գտնվող շենք/շինությունների վրա գովազդ տեղադրած տնտեսվարող սուբյեկտների թիվը կազմում է 8434 հատ, իսկ շենք/շինությունների վրա տեղադրված գովազդի ընդհանուր մակերեսը կազմել է 35.706,169 քմ:

Երևան քաղաքում տեղադրված է ընդհանուր 2696 «Երևան» գրվածքով նստարան, 1930 հատ ձուլվածքով աղբաման, 370 հատ հասարակ նստարան:

Հիմնախնդիրներ

1. Գովազդային տարածքների հաշվառման, իրավական դաշտին համապատասխանեցման անհրաժեշտություն՝ Երևանի բյուջե համապատասխան մուտքերի ապահովում,
2. Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգման անհրաժեշտություն,
3. Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտություն,
4. Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացման անհրաժեշտություն,
5. Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման աշխատանքներ,
6. Պատմամշակութային շենքերի գովազդային անձնագրերի մշակման շարունակականության ապահովման անհրաժեշտություն,
7. Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակման անհրաժեշտություն,
8. Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնման անհրաժեշտություն,
9. Երևան քաղաքի կահավորում արդեն իսկ տեղադրված գույքի՝ նստարան, աղբաման և այլն վերանորոգում և արդիականացում,
10. Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգման, նկարազարդման անհրաժեշտություն,
11. Արտաքին ձևավորման միասնական չափանիշների ձևավորման անհրաժեշտություն՝ բնակիչների մասնակցության ապահովմամբ:

2021թ. նախատեսվող ծրագրեր

1. Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին,
2. Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում,
3. Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով,
4. Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում:

1. «Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին»

Ծրագրի նպատակը	Շենքերի վրա գովազդների կանոնակարգված տեղադրում, որը բխում է
----------------	---

	շենքի ճարտարապետական առանձնահատկություններից և խաղի հստակ կանոնների սահմանում նոր գովազդների տեղադրման համար:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Յուրաքանչյուր շենքի համար նախագծվում է գովազդի համար նախատեսված բոլոր տեղադիրները, գովազդի չափսերը, պատրաստման նյութը և տեսակը: Տնտեսվարողներին կտրվի խելամիտ ժամանակ իրենց գովազդները համապատասխանեցնելու գովազդային անձնագրի պահանջներին:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	2021 թվականին Կենտրոն վարչական շրջանում նախատեսվում է մրցութային կարգով իրականացնել թվով 150 հատ շենքերի գովազդային անձնագրերի պատվիրում:
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք, համատիրություններ, տնտեսվարողներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. ապրիլ-դեկտեմբեր

2. «Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում»

Ծրագրի նպատակը	Գովազդի տեղադրման հստակ չափորոշիչների մասին տեղեկատվության տրամադրում ըստ առանձին շենքերի, թույլտվությունների ստացման ժամանակի կրճատում և հարմար եղանակ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը:
Համագործակցություն	«Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ
Ծրագրի անմիջական նպատակ	2021 թվականին նախատեսվում է իրականացնել նոր էլեկտրոնային կայքի գործարկում
Ծրագրի հիմնական շահառուները	Գովազդային կազմակերպություններ և տնտեսվարողներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման	2021թ. հունվար-դեկտեմբեր

Ժամանակացույց	
---------------	--

3. «Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով»

Ծրագրի նպատակը	Բնակչության հարմարավետ կենսակերպի գույքի ավելացում և պոտենցիալ գովազդային տարածքների ավելացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակչության հարմարավետ կենսակերպի ապահովման բազմաթիվ տարրեր, ինչպիսիք են օրինակ քաղաքային կահույքը, կանգառասրահները և վերգետնյա անցումները, կարող են կառուցվել որպես փոխհատուցում գովազդային տարածքների տրամադրմամբ:
Համագործակցություն	Մասնավոր ներդրողներ
Ծրագրի անմիջական նպատակ	2021 թվականին նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանվական գառների և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում:
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնք, մասնավոր կազմակերպություններ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. ապրիլ-դեկտեմբեր

4.«Գովազդային վահանակների մրցութային կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում»

Ծրագրի նպատակը	<ul style="list-style-type: none"> • Տուրքերի և վարձավճարների հստակ տարեկան պլանավորում, • Տուրքերի հավաքագրման արդյունավետության և չափաբաժնի ավելացում, • Գովազդային վահանակների կրճատում համայնքի եկամուտների ավելացմանը զուգահեռ, • Գովազդային վահանակների տեղադիրների և տեսակի սահմանում ըստ համայնքի նպատակահարմարության՝ հաշվի առնելով փողոցների արտաքին տեսքը, • Վահանակների տրամադրման արդար մեխանիզմի սահմանում, • Ոչ արդյունավետ կառավարիչների փոխարինում արդյունավետ կառավարիչներով:
----------------	---

<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Այսօր գովազդային վահանակներ տնօրինող կազմակերպությունների գործունեությունից է կախված արտաքին գովազդից համայնքի եկամուտների չափը: Մա դժվարություններ է ստեղծում համայնքի եկամուտների պլանավորման գործընթացում և հնարավորություն չի տալիս ավելի արդյունավետ կառավարիչների մուտք գործել շուկա: Հարկավոր է՝</p> <ul style="list-style-type: none"> • Նախապես սահմանել գովազդային վահանակների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ էլնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից, • Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև:
<p>Համագործակցություն</p>	
<p>Ծրագրի անմիջական նպատակ</p>	<p>2021 թվականին նախատեսվում է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ մրցութային կարգով գովազդային նոր վահանակների տեղադիրների լոտերի սահմանումներ:</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>համայնք</p>
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</p>	<p>2021թ. ապրիլ-դեկտեմբեր</p>

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի բնապահպանական քաղաքականության հիմնական նպատակը մայրաքաղաքի շրջակա բնական միջավայրի պահպանությունը, պաշտպանությունը և բարելավումն է՝ քաղաքային տնտեսության կայուն, առողջ և համաչափ զարգացման և բնակչության բարեկեցության ապահովման համար:

Երևան քաղաքում շրջակա միջավայրի կառավարումը պայմանավորված է դրա հիմնական բաղկացուցիչ տարրերի՝ հողային ռեսուրսների, մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների և կենսաբազմազանության մշտադիտարկման, դրանց վիճակի բարելավման ուղղությամբ ՀՀ օրենսդրությամբ վերապահված գործառույթների հետևողական իրականացման մակարդակով:

Երևանի կենսաբազմազանությունը սերտորեն կապված է բնապահպանական ակտիվների որակի, ինչպես նաև կանաչ տարածքների գոյության հետ: Ներկայումս Երևանն ունի 86 քաղաքային նշանակության այգի: Երևանի կանաչ տարածքները պաշտոնապես կազմում են մոտ 6760 հա (2015թ.), ինչը քաղաքի ընդհանուր մակերեսի 30%-ն է: Մրա մեջ մտնում են հանրային և մասնավոր

տարածքները և կանաչ բուսականության ամեն տեսակի ծածկերը, ներառյալ՝ ծաղկաթմբերը և սիզամարգերը: Ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է շուրջ 869 հա: Մեկ բնակչին բաժին ընկնող կանաչ տարածքը կազմում է շուրջ 7,8 քմ, ինչը ցածր է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից խորհուրդ տրվող նվազագույն արժեքից՝ 9 քմ-ից: Ավելին, կանաչ տարածքները ոչ միշտ են լավ փոխկապակցված, ինչը կարող է լրացուցիչ խոչընդոտ ստեղծել կենսաբազմազանության պահպանման համար:

Քաղաքային կանաչ տնկարկների վրա անթրոպոգեն գործոնների ազդեցության բարձր աստիճանը (ուրբանիզացված տարածքներին բնորոշ), առկա ծառատեսակների մեջ ոչ արժեքավոր տեսակների գերակշռումը, ծեր և հիվանդ ծառերի մեծ զանգվածն օրինաչափորեն հանգեցնում են բուսականության վիճակի վատթարացմանը, հիվանդություններով և վնասատուներով վարակմանը և տնկարկների աստիճանական ոչնչացմանը: Արդյունքում, մթնոլորտում գազերի, փոշու և ծխի բարձր պարունակությունները, ինչպես նաև օդի և հողի ջերմային և ջրային ռեժիմների առանձնահատկությունները բացասաբար են ազդում բնակչության կենսունակության և առողջության վրա:

Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցություն առաջացնող շուրջ 630 կազմակերպություն: Մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են նաև Երևան քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, որոնք հասել են շուրջ 600000-ի, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողատարումները, հողի էրոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն:

Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ, ինչը կլիմայի փոփոխության հիմնական գործոններից է: Համաձայն կանխատեսումների, մինչև 2100 թվականը ջերմաստիճանը կբարձրանա 1.7°C, իսկ տեղումների մակարդակը կնվազի 10 մմ-ով:

Կանաչապատ տարածքների բարելավման և ընդլայնման, մթնոլորտային օդի աղտոտման նվազեցման և հողապաշտպան միջոցառումների իրականացման նպատակով ներկայումս քաղաքը որդեգրել է հետևյալ գլխահեն քաղաքականության իրագործումը.

1. կայուն և արժեքավոր ծառատեսակների ընտրություն՝ գազի, փոշու, ծխի և այլ աղտոտիչների նկատմամբ,
2. գեղազարդ և մշտադալար ծառատեսակների ընտրություն՝ հաշվի առնելով դրանց տնկման տարածքի միկրոկլիմայական և էկոլոգիական պայմաններն ու առանձնահատկությունները,
3. հողերի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումներ՝ թփաշերտով մեկուսացում փողոցին հարող տարածքից,
4. կանաչ ցանկապատերի ներդրման մշակույթ տարբեր հարկաշարքային բուսականության տեղադրությամբ,
5. միամյա մեծաքանակ ծաղիկների փոխարինումը բազմամյա և սեզոնային հերթագայմամբ ծաղկող թփերով լանդշաֆտային ճարտարապետային մոտեցմամբ:

2020թ. ընթացքում տնկվել է 250.000 պատնեշային և սեզոնային հերթագայմամբ ծաղկող թփեր Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում:

Կանաչ տարածքների բարելավման և ընդլայնման նախապայման է հանդիսանում ոռոգման ցանցի կառուցումը և արդիականացումը: 2019-2020 թվականներին իրականացվեց Երևան քաղաքի ոռոգման ցանցի գույքագրում, որի արդյունքում պարզվեց, որ ցանցի ընդհանուր երկարությունը ներկայումս կազմում է շուրջ 321 կմ, որից շուրջ 70 կմ գտնվում է վթարային, 9 կմ՝ խցանված, 152 կմ՝ մաշված և միայն 90 կմ է գտնվում նորմալ վիճակում: Հետևապես, ոռոգման ցանցի վերակառուցումը, արդիականացումը, ինչպես նաև ոռոգման նոր ջրագծերի կառուցումը հրատապ խնդիրներ են: 2021 թվականին կվերակառուցվի շուրջ 30 կմ վթարային ոռոգման ցանց:

Շրջակա միջավայրի վրա ոչ պակաս ազդեցություն ունի մայրաքաղաքի ջրային ավազանի էկոլոգիական վիճակը, որի հիմնական բաղադրիչներն են հանդիսանում Երևանյան լիճը և Հրազդան գետը: Ներկայումս Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է մեծ քանակությամբ կենցաղային և պոլիէթիլենային աղբի, ներհոսող կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական կեղտաջրերի շնորհիվ տարբեր քիմիական տարրերի ՍԹԿ նորմերի նկատմամբ բարձր պարունակությունների առկայությամբ:

2021 թվականի ծրագրով նպատակ է հետապնդվում մաքրել Երևանյան լճի և Հրազդան գետի առափնյա տարածքներում տարածված վնասակար բույսերը, այդ թվում՝ իրականացնել եղեգների ոչնչացման միջոցառումներ, բարեկարգել հարակից տարածքը և ռեկրեացիոն գոտին վերածել Երևան քաղաքի սիրված ու հաճելի այցելության վայրերից մեկը: Ծրագիրն ունի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև ռեկրեացիոն գոտու առողջապահական նորմերի ապահովման ուղղվածություն:

Հիմնախնդիրներ

1. Մայրաքաղաքի հնացած, հիվանդ, չոր, տապալման ենթակա և/կամ ինվազիվ ծառերի փոխարինում առավել գեղազարդ, արժեքավոր ծառատեսակներով,
2. Նոր ոռոգման ցանցերի կառուցում,
3. Մայրաքաղաքի տարբեր հատվածներում բուֆերային անտառաշերտի ստեղծում, կանաչ տարածքների ավելացում,
4. Հողի էրոզիայի դեմ կանխարգելիչ միջոցառումներ,
5. Կենցաղային աղբի տեսակավորման, աղբի վերամշակման ապահովման մշակույթի ձևավորում:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Երևանյան լճի և Հրազդանի կիրճի էկոլոգիական վիճակի բարելավում,
2. Աբովյանի անվան 0.8 հա պուրակի վերականգնում,
3. Ուղղաձիգ կանաչապատում,
4. Ծառերի կադաստրային տեղեկագրի ստեղծում,
5. Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում,
6. Կանաչապատման տարբեր մոտեցումների կիրառում,
7. Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում,

- 8. Ոռոգման ցանցի վերակառուցում,
- 9. Երևան քաղաքում աղբի տեսակավորում:

1. «Երևանյան լճի և Հրազդանի կիրճի էկոլոգիական վիճակի բարելավում»

Ծրագրի նպատակը	Երևանի ջրային ավազանի էկոլոգիական վիճակի բարելավում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մաքրել Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքները կուտակված ճահճային բուսականությունից, կենցաղային աղբից և արտադրական թափոններից, նախատեսել աղբառսիչ միջոցառումներ և տեղադրել լողացող մարմինները հավաքող ճաղավանդակներ:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն տվյալ աշխատանքերի իրականացման համար մրցույթում հաղթած կազմակերպությունների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Երևանյան լճի և Հրազդանի կիրճի մաքրում տարատեսակ աղբից ու թափոններից:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի և հարակից համայնքների բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021-2022թթ-ի ընթացքում:

2. «Աբովյանի անվան 0.8 հա պուրակի վերականգնում»

Ծրագրի նպատակը	Բարեկարգել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյանի անվան պուրակը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կիրականացվեն Աբովյանի անվան պուրակի բարեկարգման, կանաչ տարածքների վերականգնման, նոր արդիական ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Պուրակի վերականգնում՝ համաձայն հաստատված նախագծի:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ին:

3. «Ուղղաձիգ կանաչապատում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում և կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային ուղղաձիգ կանաչապատում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մագլցող, փաթաթվող բույսերի տնկման միջոցով կիրառել ուղղաձիգ կանաչապատում, ստեղծել միայնակ կամ խմբակային եղանակով տնկարկներով կանաչ հատվածներ, քանի որ վերոհիշյալ բույսերն աճում և բազմանում են շատ արագ՝ ստեղծելով գեղեցիկ դեկորատիվ պատկերներ: 2021 թվականին կիրականացվի շուրջ 500ք.մ. ծավալով ուղղաձիգ կանաչապատում մայրաքաղաքի տարբեր վերգետնյա հետիոտնային անցումներում և գառիթափ լանջերին:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Կանաչ զանգվածի ավելացում կանաչ պատի միջոցով և նորագույն կանաչապատման տեխնոլոգիաների ներդրում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ին:

4. «Ծառերի կադաստրային տեղեկագրի ստեղծում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի կանաչ տարածքների գույքագրում, ԱՏՀ հենքով տվյալների բազայի ստեղծում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մասնագիտական գործիքների միջոցով կիրականացվի ոռոգման ցանցի, կանաչ տարածքների, ծառերի քարտեզագրում, գույքագրում, ինչի միջոցով հնարավոր կլինի հստակ և թվային տեղեկատվություն ունենալ, որն էլ իր հերթին կնպաստի կանաչ տարածքների առավել արդյունավետ խնամքին և սպասարկմանը, նոր կանաչ տարածքների ստեղծմանը:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Ունենալ լրացված ոռոգման ցանցի, ծառերի անձնագիր յուրաքանչյուր փողոցի, զբոսայգու, պուրակի և անտառպուրակի համար:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում, շարունակվող:

ավարտը, իրականացման ժամանակացույց	
-----------------------------------	--

5. «Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել և ավելացնել յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող կանաչ մակերեսը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բարելավել և ավելացնել (4.5 հա) ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Որակյալ կանաչ տարածքների ավելացում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչություն, զբոսաշրջիկներ, հյուրեր, այցելուներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում:

6. «Կանաչապատման տարբեր մոտեցումների կիրառում»

Ծրագրի նպատակը	Ստեղծել ծաղկանոցներ և կանաչ ցանկապատեր, որոնք համալրված կլինեն բազմամյա ծաղկասածիլներով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կանաչ տարածքների, սիզամարգերի գեղազարդում ծաղկող թփերով և կանաչ ցանկապատերով (շուրջ 12000 գծ.մ.)՝ նպատակ ունենալով բարելավել մայրաքաղաքի կանաչ զանգվածը:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Ճանապարհի նկատմամբ պաշտպանի և տարանջատող շերտի ստեղծում՝ գազակլանիչ և գեղատեսիլ թփերով:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում:

7. «Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար նորագույն սարքավորումներ, որոնք կնպաստեն մատուցվող կանաչապատման
----------------	--

	ծառայությունների որակի բարձրացմանը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր տեխնիկայի ձեռքբերումը հնարավորություն կստեղծի հատուկ տեխնիկայի միջոցով Երևան քաղաքում իրականացնել կանաչ տարածքների բարձր որակի խնամք:
Համագործակցություն	Ծրագրի շրջանակներում կիրականացվի համագործակցություն մասնագիտացված ընկերության հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Նախատեսվում է 2021թ-ին ձեռք բերել կանաչապատման ծառայությունների համար տեխնիկա:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում:

8. «Ոռոգման ցանցի վերակառուցում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում վթարված և խցանված ջրագծերի վերանորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Տարբեր փողոցներում և պուրակներում ջրային կորուստներից խուսափելու, տարածքը որակյալ ոռոգման ջրով ապահովելու համար կիրականացվի մաշված, վթարված, խցանված խողովակների փոխարինում և վերականգնում: 2021 թվականին նախատեսվում է շուրջ 30 կմ ոռոգման ջրագծի վերակառուցում՝ կիրառելով ոռոգման արդիական մոտեցումներ:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Կանաչ տարածքների ոռոգում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում:

9. «Երևան քաղաքում աղբի տեսակավորում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում աղբի տեսակավորման մշակույթի ձևավորում բնակչության շրջանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքում աղբի տեսակավորման (ապակի, պլաստիկ, թուղթ) համար համապատասխան գունազատմամբ աղբամանների

	տեղադրում քաղաքի ընդհանուր շուրջ 120 կետերում՝ բոլոր վարչական շրջաններում, տեսակավորված աղբի հավաքում և հանձնում վերամշակող կազմակերպություններին: Աղբի տեսակավորման մշակույթի ձևավորման համար քաղաքացիների իրազեկման արշավի կազմակերպում:
Համագործակցություն	Ծրագիրն ամբողջությամբ կիրականացվի «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի միջոցով՝ համաձայն սահմանված սկզբունքների:
Ծրագրի անմիջական նպատակը	Վերամշակման ենթակա աղբը տարանջատել ընդհանուր աղբից, վերամշակման միջոցով նվազեցնելով աղբի ծավալը և նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը աղտոտումից:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակչությունը:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021թ-ի ընթացքում:

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության 2019-2023թթ. ծրագիրը նոր առաջնահերթություններ է նախանշել երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտներում: Երեխաների պաշտպանության ոլորտում բարեփոխումների նպատակն է իրականացնել երեխաների պաշտպանության համակարգի և նրանց իրավունքների գործուն իրացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծման համալիր միջոցառումներ՝ հիմնվելով նախորդ փորձառության, ինչպես նաև առաջնորդվելով երկրի միջազգային հանձնառություններով և ոլորտում գործող միջազգային պարտավորություններով, իսկ սոցիալական պաշտպանության ոլորտում՝ քաղաքացիների կենսամակարդակի և սոցիալական վիճակի բարելավմանը, սոցիալական իրավունքների լիարժեք և արդյունավետ իրացմանը՝ հիմնված հավասար հնարավորությունների և աշխատանքի քաջալերման սկզբունքի վրա: Այս համատեքստում Երևանի քաղաքապետարանում Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N258-Ա որոշմամբ ստեղծվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչությունը՝ սոցիալական ապահովության վարչության և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի փոխարեն: Նոր համակարգի ներդրման երկրորդ փուլը կիրագործվի 2021 թվականի ընթացքում և կառուցվածքային փոփոխությունների արդյունքում 12 վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների փոխարեն կստեղծվի երեխաների, սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժինները՝ որում կներդրվի հոգեբանի, սոցիալական աշխատողի հաստիքներ:

Այսպիսով, նոր համակարգը ներդնելու արդյունքում առաջնային կոլիտարկվեն սոցիալական պաշտպանության ոլորտում ավելի արդյունավետ կառավարումը՝ մասնավորապես, համապատասխան գործիքակազմի, ֆինանսական, մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների

ձևավորումը, որի մշակումը սկսվել է 2020 թվականին և կշարունակվի 2021 թվականի ընթացքում: Այս գործընթացների համար կարևոր է պետական մարմինների, Երևանի քաղաքապետարանի, միջազգային և հասարակական կազմակերպությունների ու մասնավոր հատվածի համագործակցությունը, ինչպես նաև ժամանակակից և արդյունավետ տեղեկատվական ու մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի առկայությունը:

Իրականացված ծրագրերի հասցեականությունը և համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ պետք է ներդնել տեղական սոցիալական ծրագրեր կազմելու և դրանք պատվիրակելու մեխանիզմներ:

Հասարակության սոցիալական իրավիճակի բնութագիրը լավագույնս տրվում է հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության ցուցանիշների միջոցով: Հաշվի առնելով 2020 թվականին երկրում ստեղծված վիճակը՝ անհրաժեշտ է իրականացնել խորքային ուսումնասիրություն, որի արդյունքում աղքատության, գործազուրկների թիվը կենթարկվի կտրուկ փոփոխության, որն էլ ի ցույց կդնի սոցիալական հիմնախնդիրների ամբողջ առանցքը:

Համաձայն ՀՀ ՎԿ-ի՝ Երևան համայնքում 2020թ հունվարի 1-ի դրությամբ բնակվում է 1.081.800 բնակիչ որից՝ տղամարդ՝ 499.686, կին՝ 582.114, երեխաներ՝ 232.877 (տղաները՝ 122.355, աղջիկները՝ 110.522) իսկ կենսաթոշակատուների թիվը կազմում է 181.435:

Հարկ է նշել նաև, որ հաշվի առնելով բազմաչափ աղքատությունը, ինչը հիմնված է զրկանքների առկայության վրա, օրինակ՝ բնակարանային պայմանների բացակայություն, որակյալ ծառայությունների անմատչելիություն կամ կրթության հնարավորությունների բացակայություն, ընտանիքները և երեխաները դառնում են ավելի խոցելի և պահանջում են թիրախավորված լուծումներ իրենց ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքն ապահովելու համար:

Աղքատության վրա ազդող գործոններն ուղղակի կապ ունեն աղքատության մակարդակի և տնային տնտեսությունում երեխաների թվի հետ. որքան շատ է երեխաների քանակը, այնքան բարձր է աղքատության մակարդակը և աղքատության ու ծայրաստիճան աղքատության մեջ հայտնվելու ռիսկը: Ուստի, 2021 նախատեսվում է համապատասխան ծրագրերի միջոցով լրացուցիչ ուշադրության և հոգածության ներքո պահել այդ թիրախներին՝ առաջնահերթություն տալով երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը:

Աղքատության հաղթահարման լավագույն և արժանապատիվ միջոցը աշխատանքն է: Սակայն, գործազրկության մակարդակը 2020թ. տվյալներով կազմել է մայրաքաղաքի աշխատունակ տարիքի բնակչության շուրջ 19.8%-ը: Հասկանալի պատճառներով տարեվերջում այս թիվը կտրուկ կբարձրանա, քանի որ թե՛ COVID 19-ը, թե՛ պատերազմական իրավիճակը կթողնեն իրենց բացասական հետևանքները (կնկատվի աղքատության, հաշմանդամության, գործազրկության կտրուկ աճ):

Երևանի քաղաքապետարանը որպես երեխաների պաշտպանության ոլորտում քաղաքականության կիրառող՝ աջակցություն է իրականացնում ապահիստիտուցիոնալացման և երեխայի խնամքի այլընտրանքային ձևերի զարգացմանը՝ կարևորելով նաև հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը և նրանց խնամքն ընտանեկան միջավայրում կազմակերպելը:

Թեև վերջին տարիներին երեխաների խնամքի շուրջօրյա հաստատությունների վերակազմավորման քաղաքականության արդյունքում նվազում է այդ հաստատություններում երեխաների թիվը, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը մասնագիտացված հաստատություններում աճում է՝ կենսաբանական ընտանիք վերադառնալու, խնամակալության, խնամատարության և որդեգրման հանձնելու գրեթե անհնարինությամբ պայմանավորված:

Խնամատարության նոր ընթացակարգով սահմանված մասնագիտացված խնամատարության համակարգը հնարավորություն է ստեղծում հաշմանդամություն ունեցող երեխաների խնամքը ընտանիքներում կազմակերպելու համար: Ճգնաժամային /օրինակ՝ պատերազմի ժամանակ/ և արձակուրդային խնամատար ինստիտուտի միջոցով արագ արձագանքման մեխանիզմ է ներդրվում խնամքի հաստատություն երեխայի մուտքը կանխարգելելու, ինչպես նաև փաստացի առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումն ապահովելու նպատակով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքով ամրագրված նոր պահանջներին համաձայն՝ Երևան քաղաքում որդեգրողների, խնամատար ծնողների, խնամակալների կամ հոգաբարձուների ընտանիքներում դաստիարակության հանձնված երեխաների խնամքի նկատմամբ իրականացվող մշտադիտարկումը նպաստում է երեխայի իրավունքի ոտնահարման կանխարգելմանը:

Ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման համալիր ծրագրի նպատակն է՝ ամրագրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրենց կենսաբանական ընտանիքներում ապրելու իրավունքի իրացմանն ուղղված և դրա անհնարինության դեպքում, ընտանեկանին մոտ այլընտրանքային խնամքի ծառայությունների տեսականու և ցանցի ընդլայնումն ապահովող համապարփակ միջոցառումների ցանկը, սահմանել դրանց կատարման համար պատասխանատու մարմինները, կատարման ժամկետները, ֆինանսավորման աղբյուրները, թիրախներն ու արդյունքները առաջիկա տարիների համար:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Երևան համայնքը աջակցում է մայրաքաղաքում պետական սոցիալական ծրագրերի իրագործմանը, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է տեղական և անհատական սոցիալական ծրագրերի մշակումը, իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը, պետական սոցիալական ծրագրերի շրջանակում համապատասխան նպաստների նշանակումը, աջակցում է կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին համապատասխան սոցիալական ծառայությունների տրամադրմանը: Նախանշված աշխատանքների ռազմավարությունն ուղղված է մայրաքաղաքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանը և պահպանմանը:

Երևան համայնքը խիտ բնակեցված լինելով առանձնանում է իր սոցիալական խնդիրներով՝ մասնավորապես պայմանավորված 2020 թվականի ընթացքում առաջացած նոր մարտահրավերներով (COVID 19-ի պանդեմիա, ԼՂՀ-ում սանձահարված պատերազմ և այլն):

Աշխատաշուկայում կան զբաղվածության ապահովման դժվարություններ, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երիտասարդների շրջանում: Բացակայում է պետական-մասնավոր հատվածների միջև, այդ թվում՝ աշխատանքի տեղավորման ծառայություններ մատուցող ոչ պետական կազմակերպությունների հետ գործակալության գործընկերային և փոխշահավետ համագործակցությունը:

Հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմում է 57173 անձ, (տղամարդ-29.573, կին-27.600), երեխաներ 2.560 (տղաները – 1.680 աղջիկները - 880): Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելի պայմանների, որակյալ ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Ուշադրության կարիք ունեն նաև ԼՂՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողները:

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները Երևան համայնքում բաշխվել են անհամաչափորեն, ինչպես նաև խնամքի կարիք ունեցող տարեցներին մատուցվող սոցիալական և առողջապահական ծառայությունների որակը եղել է ոչ բավարար և անմատչելի: Տարեցների իրազեկվածությունը սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ եղել է ցածր:

Կառավարության առաջնահերթություններին համընթաց՝ ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու նպատակով անհրաժեշտ է մշակել և համայնքում կյանքի կոչել ծնելիության խրախուսման, երիտասարդ և երեխաներ ունեցող ընտանիքների աջակցության նոր ծրագրեր:

Թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով աջակցություն կտրամադրվի բազմազան, երիտասարդ և այլ ընտանիքներին պատկանող խմբերին:

Երևանում բնակվում են նաև սիրիական հակամարտության հետևանքով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից և այլ երկրկրներից ՀՀ ներգաղթած անապահով և կարիքավոր ընտանիքներ:

Սոցիալական կարևորագույն խնդիր է նաև անօթևանների հետ տարվող աշխատանքում առաջացող դժվարությունները՝ օրենսդրական բացերի և ծառայությունների կազմակերպման հետ կապված տեխնիկական խնդիրների պատճառով: Այս ուղղությամբ աշխատանքներ են տարվում Երևան համայնքի, ՀՀԱՄՀ նախարարության, ՀՀ ոստիկանության հետ: Չնայած տարվող աշխատանքներին՝ դեռևս չլուծված են մնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց խնդիրները:

Արդիական է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին /օրինակ՝ COVID, ռազմական դրության, շենքերի փլուզման և այլն/աջակցության տրամադրումը:

Երևանի քաղաքապետարանը պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում իրականացնում է սոցիալական համալիր ծառայությունների կազմակերպումն ու իրականացումը, առանձնացված ստորաբաժանում հանդիսացող տարածքային մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային բաժինների (ՄՍՏԲ) միջոցով (հիմք.2015թ. հունիսի 4-ի հ.582-Ն ՀՀ կառ. որոշման 4-րդ): Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2020 թվականի սեպտեմբերի 22-ի ՀՕ-409-Ն օրենքի՝ նախատեսվում է, որ 2021 թվականի ապրիլի 1-ից ՄՍՏԲ-ները կանցնեն ՀՀ ԱՄՀՆ ենթակայության տակ:

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության արդյունավետ կառավարման համակարգի ներդրման՝ ներառյալ սոցիալական աշխատանքի, տնական սոցիալական պլանավորման, սոցիալական ծառայությունների մոնիթորինգի և գնահատման գործառնությունների ուժեղացման, ինչպես նաև համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով՝ թվայնացման և ֆինանսավորման անհրաժեշտություն:
2. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտություն:
3. Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովման համալիր աջակցության անհրաժեշտությունը երեխաների կենսաբանական ընտանիքներին՝ որպես առաջնահերթություն ղիտելով երեխայի խնամքը կենսաբանական ընտանիքում կազմակերպումը, ինչպես նաև խնամքի ձևերի աջակցման ու ընդլայնման անհրաժեշտությունը՝ այդ թվում որդեգրման, խնամատարության և խնամակալության միջոցով:
4. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման մեխանիզմների մշակման, կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն:
5. Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և շահերի պաշտպանության, սոցիալական ներառմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:
7. Արժանապատիվ ծերացմանն ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտություն՝ ներառյալ որակյալ սոցիալական ծառայությունների ընդլայնում:
8. Ժողովրդագրական իրավիճակի զարգացման բացասական միտումները մեղմելու, ավելին՝ բարելավելու նպատակով՝ քաղաքականության իրականացման անհրաժեշտություն, բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքների աջակցության՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:
9. Հայրենադարձ և փախստական ընտանիքների համար, հասարակական ինտեգրման նպատակով թիրախային ծրագրերի մշակման և իրականաման անհրաժեշտություն:
10. Անօթևանների աջակցության նպատակով սոցիալական ծառայությունների տրամադրման մեխանիզմների մշակման և իրականացման անհրաժեշտություն:
11. Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:
12. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կազմակերպման և իրականացման անհրաժեշտություն:

2021թ. նախատեսվող աշխատանքներ՝

1. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ամբողջական ներդրում,
2. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն,
3. Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում,
4. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր,
5. Համագործակցության շրջանակում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն,
6. Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում,
7. Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն,
8. Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների համար աջակցության ծրագրեր,
9. Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն,
10. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմակերպում և իրականացում,
11. Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած և սայլակի օգնությամբ տեղաշարժվողների բնակարաններում ֆիզիկական միջավայրի բարեհարմարեցումների պիլոտային ծրագիր,
12. Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած անձանց մասնագիտական հմտությունների փոխանցման և զբաղվածության ապահովման ծրագիր,
13. Ադրբեջանի սանձազերծած պատերազմին մասնակցած զինվորների, զորակոչվածների և կամավորների ու նրանց ընտանիքների հետպատերազմական տրավմայի վերացման նպատակով հոգեբանական աջակցության ծրագիր:

1. Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ամբողջական ներդրում

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման նպատակով ամբողջական համակարգի ներդրում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ներդրված երեխաների և սոցիալական պաշտպանության նոր համակարգի տեղայնացման ընթացքում առաջացած և վեր հանված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է՝ <ol style="list-style-type: none"> 1. Համայնքային ծառայողների, սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստումներ, 2. Վարչական շրջաններում երեխաների, սոցիալական պաշտպանության և առողջապահության բաժինների ներդրում, 3. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների,

	<p>ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացմանը միտված աշխատաժողովների կազմակերպում,</p> <p>4. Երևան համայնքի երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի ներդրման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակում /օրինակ էլեկտրոնային հարթակ, տեղական սոցիալական ծրագրեր, մշտադիտարկում, փորձագետների ներգրավում և այլն/,</p> <p>5. Սոցիալական աշխատողների համար նյութատեխնիկական միջոցների ապահովում 12 վարչական շրջանների համար:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:
Ծրագրի անմիջական պատակ	Երեխաների և սոցիալական պաշտպանության նորաստեղծ համակարգի ներդրման երկրորդ փուլ, վարչական շրջանների համապատասխան բաժինների կառուցվածքային փոփոխություններ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական պաշտպանության ոլորտի աշխատակիցներ, համայնքային ծառայության սոցիալական ոլորտի դերակատարներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին

2. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն

Ծրագրի նպատակը	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների, արտակարգ, տեխնաձին դրությամբ պայմանավորված /օրինակ պատերազմ, համաճարակ/ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>1.Քաղաքային մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ներգրավում:</p> <p>2.Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանություն:</p> <p>3.Երեխայի պաշտպանության ոլորտում գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն:</p> <p>4.Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար վերապատրաստումներ՝ միասնական պրակտիկայի ձևավորում:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն

Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներ, ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.

3.Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում

Ծրագրի նպատակը	Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում համալիր աջակցության միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>1.Մանկավրության կանխարգելման նպատակով փորձնական ծրագրի իրականացում 5 ընտանիքների համար.</p> <ul style="list-style-type: none"> • Կացարանի տրամադրման կազմակերպում • Կացարանի վարձավճարի, կոմունալ վճարների փոխհատուցում 3 ամսյա կտրվածքով • Աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների նպատակով վերապատրաստման կազմակերպում • Երեխաների տարիքային խմբակներում ներգրավվածության, մանկապարտեզ/դպրոց հաճախման կազմակերպում <p>2.Խնամատարության տեսակների, խնամատար ընտանիքի խրախուսման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի և դաստիարակության պայմանների վերահսկողության, պայմանագրային պարտականությունների կատարման վերաբերյալ վերապատրաստումներ և այլ միջոցառումներ:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներ, ծնողներ, օրինական ներկայացուցիչներ, ինչպես նաև համապատասխան աշխատակիցներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021 թ.

4.Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր

Ծրագրի նպատակը	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղությամբ նպատակային ծրագրերի, ինչպես նաև ծառայությունների պատվիրակման կազմակերպումը և իրականացումը (առաջնային
----------------	---

	թիրախ՝ 1-ճայրահեղ աղքատ ընտանիք, 2-աղքատ ընտանիք):
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>1. Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավման ուղղությամբ նպատակային ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է՝</p> <p>1.1 Սոցիալական աջակցության ձևերի ընդլայնում՝ զարգացնելով անհրաժեշտ ծառայությունները և ոչ դրամական աջակցությունը: Սոցիալական աջակցության ծառայությունները պետք է խթանեն անապահով ընտանիքների կարողությունների զարգացումը՝ նրանց ինքնաբավ դարձնելուն ուղղված և արժանապատիվ ու սեփական վաստակ ունեցող ընտանիք ձևավորելու համար,</p> <p>1.2 իրականացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կամ ընտանիքի կարիքների գնահատում,</p> <p>1.3 Անհատական սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում,</p> <p>1.4 Տեղական սոցիալական ծրագրերի մշակում և իրականացում,</p> <p>1.5 Վերը նշված երկու կետերը ապահովելու նպատակով ծառայությունների պատվիրակում, ինչպես նաև կամավոր լիազորությունների շրջանակում ավագանու հաստատած կարգի համաձայն աջակցության տրամադրում,</p> <p>2. Ելնելով հասարակության սոցիալական բևեռացվածության և աղքատության մեղմացման, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներից ոչ ոքի չանտեսելու սկզբունքներից՝ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ տոնական և հիշատակի օրերին:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:
Ծրագրի անմիջական նպատակ	Երևան համայնքի սոցիալական կարիքների արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում:
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք կամ ընտանիքները (շուրջ 5000 շահառու)
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

5. Համագործակցության շրջանակում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն

Ծրագրի նպատակը	Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ձեռներեցության ծրագիրը իրականացվում է հետևյալ փուլայնությամբ. 1. Ծրագրի իրականացման նպատակով ընտանիքի գիտելիքների,

	<p>ունակությունների և կարողությունների գնահատում, 2.Շնորհված ընտանիքի համար մշակվում է ձեռներեցության ծրագիր, 3.Ըստ անհրաժեշտության վերապատրաստման դասընթացների անցկացում՝ զինելով համապատասխան գիտելիքներով և կարողություններով, 4.Ծրագրի կազմակերպում և իրականացում, 5.Ստացված արդյունքների ամփոփում,</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, գործատուներ՝ որոնք իրականացնում են սոցիալ-տնտեսական ծրագրեր և տրամադրում դրամաշնորհներ ինքնազբաղվածության, սոցիալական գործընկերության և ձեռներեցություն սկսելու համար:
Ծրագրի անմիջական նպատակ	Զբաղվածության խթանում (պիլոտային 5 ընտանիք):
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, համագործակցող կազմակերպություններ և այլն:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

6.Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում

Ծրագրի նպատակը	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների տրամադրում (օրինակ՝ պատվիրակման միջոցով):
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>Ծառայությունների տրամադրումը կիրականացվի բացառապես ծառայությունները մատուցող կազմակերպությունների հետ մրցակցային սկզբունքով, համապատասխան մրցութային կարգով՝ տեղական սոցիալական ծրագրերի և կարիքների գնահատման հիման վրա ու պատվիրակման միջոցով:</p> <p>1.Տնանկների համար նախատեսված շուրջօրյա խնամքի կենտրոն, 2.Հաշմանդամության խումբ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կենտրոն, 3.Ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցություն, 4.Տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոն (փոքր տներ):</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:
Ծրագրի անմիջական նպատակ	Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում (շուրջ 400-500 շահառու):
Ծրագրի հիմնական	Տարբեր սոցիալական խմբեր:

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

7. Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն

Ծրագրի նպատակը	Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության նպատակով՝ աջակցություն բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	1. Բազմազավակ ընտանիքներին աջակցության ծրագրերի մշակում և իրականացում: 2. Բազմազավակ և երիտասարդ ընտանիքներին աջակցության նպատակով վերապատրաստումների իրականացում/մոդուլների մշակում, տնտեսվարում, ծնողավարության հմտություններ և այլն/ 3. Աջակցություն երիտասարդ, անապահով ընտանիքներին/1 տարվա ամուսնություն, ամուսինների տարիքային հանրագումարը՝ 70տ. և ամուսնության վկայագրի առկայության դեպքում կտրամադրվի կենցաղային տեխնիկա՝ ըստ առաջնային անհրաժեշտության/:
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:
Ծրագրի անմիջական նպատակ	Ժողովրդագրական իրավիճակի բարելավում (շուրջ 1500-2000 ընտանիք):
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմազավակ, երիտասարդ և նորաստեղծ ընտանիքների անդամներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

8. Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների համար աջակցության ծրագրեր

Ծրագրի նպատակը	Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների հասարակական ինտեգրում՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	1. Փախստական ընտանիքներին բնակարանների վարձակալության մասնակի փոխհատուցում 30 ընտանիք/ 1 ընտանիքին հատկացնելու 6 ամսով, ամիսը՝ 60.000դ./, 2. Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների

	կարիքի գնահատում, սոցիալական ծառայությունների տրամադրում/140 ընտանիք/ 3.Փախստական ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով՝ կոմունալ վարձերի մասնակի փոխհատուցում/50+50 ընտանիք, 1 ընտանիքին հատկացվելու է 4 ամսով, ամիսը՝ 35.000 դրամ:
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն:
Համագործակցություն	ԿԴԻՀ-ում հայրենադարձ և փախստական ընտանիքներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքում բնակություն հաստատած հայրենադարձ և փախստական ընտանիքներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

9.Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն

Ծրագրի նպատակը	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության ծրագրի մշակում և իրականացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	1.Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին առաջնային աջակցություն(օր. կենցաղային և սննդային փաթեթների տրամադրում, կոմունալ ծախսերի, բնակվարձի փոխհատուցում և այլ առաջնային ծառայությունների տրամադրում՝ ըստ գնահատված կարիքի), 2.Տարերային կամ տեխնաձին աղետներից տուժած ընտանիքներին տրամադրվող առաջնային աջակցություն/փլուզում, հրդեհ, ջրհեղեղ և այլն/, 3.Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:
Համագործակցություն	Համապատասխան ոլորտի գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, մասնավոր ընկերություններ, գործատուներ և այլն:
Ծրագրի հիմնական շահառուները	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում աջակցություն/շահառուների թիվը ըստ իրավիճակի/:
Ծրագրի սկիզբ և ավարտ,	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

իրականացման ժամանակացույց	
---------------------------	--

10. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմակերպում և իրականացում

Ծրագրի նպատակը	Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում՝ աջակցել ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումներին:
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>1. Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում՝</p> <p>1.1 կարիքավոր բնակչության հայտնաբերման, հաշվառման, ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անձի (ընտանիքի) սոցիալական կարիքների գնահատման, սոցիալական գործի կազմման (այդ թվում և էլեկտրոնային եղանակով), պետական նպաստների նշանակման կազմակերպում և իրականացում,</p> <p>1.2 սոցիալական պաշտպանության ոլորտում անձի իրավունքների և դրանց իրականացման, սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրվող ծառայությունների մատուցում,</p> <p>1.3 բազմամասնագիտական աշխատանքային խմբերի (աջակցող ցանցի) համագործակցությամբ սոցիալական դեպքի վարման գործընթացի կազմակերպման, տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների գործունեության ապահովում:</p> <p>2.Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման աջակցություն:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ և այլն
Ծրագրի անմիջական նպատակ	Սոցիալական, ընտանեկան նպաստի, հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում (միջինը 14000 շահառու)
Ծրագրի հիմնական շահառուները	Սոցիալապես անապահով /անձիք/ ընտանիքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին:

11. Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած և սայլակի օգնությամբ տեղաշարժվողների բնակարաններում ֆիզիկական միջավայրի բարեհարմարեցումների պիլոտային ծրագիր

Ծրագրի նպատակը	Ադրբեջանական ագրեսիայի հետևման մարտերում ստացած վիրավորման արդյունքում հաշմանդամության սայլակով տեղաշարժվող անձանց համար իրենց բնակարանների մատչելիության ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հենաշարժողական հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ստիպված են լինում տեղաշարժվել սայլակով: Նրանց ազատ ու անկաշկանդ տեղեւարժն ու հարմար կենսապայմաններ ապահովելու համար կարևոր է ոչ միայն քաղաքի և հանրային վայրերի մատչելիությունը, այլև իրենց իսկ բնակության շենքերի և տների: Հաշվի առնելով այն, որ հաշմանդամությունը նաև սոցիալական այլ խնդիրների է հանգեցնում, ուստի անհրաժեշտ է Երևանի շահառու բնակիչներին աջակցել իրենց բնակարանների մատչելիության ապահովման նպատակով, մասնավորապես՝ ա. Շենքի մուտքերը թեքահարթակներով կահավորելու, բ. շենքի մուտքի դռները լայնացնելու, գ. տան ներսի դռները լայնացնելու, դ. սանհանգույցները հարմարեցնելու հարցում: Յուրաքանչյուր բնակարանի բարեհարմարեցման ենթակա հատվածները կորոշվեն գնահատման արդյունքում:
Համագործակցություն	Աջակցություն վիրավոր զինվորներին ՀԿ, ՀՀ, ԱՆ, ՀՀ ԱՍՀՆ
Ծրագրի անմիջական նպատակը	Փորձական ծրագրի շրջանակներում ապահովել մատչելիություն նշված կատեգորիաներով առնվազն 10-ական հատ:
Ծրագրի հիմնական շահառուները	2020թ. ադրբեջանական ագրեսիայի հետևման մարտերում վիրավորում ստացած և արդյունքում հենաշարժողական խնդիրների մատճառով սայլակով տեղաշարժվող անձինք:
Ծրագրի սկիզբ և ավտ, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-դեկտեմբեր

12. Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած անձանց մասնագիտական հմտությունների փոխանցման և զբաղվածության ապահովման ծրագիր

Ծրագրի նպատակը	Ադրբեջանական ագրեսիայի հետևման մարտերում հաշմանդամություն ստացած անձանց աշխատանքային հմտությունների փոխանցում և զբաղվածության ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պատերազմի հետևանքով ծրագրի շահառուները ձեռք են բերել հաշմանդամություն, ինչի արդյունքում նրանք կորցրել են ֆիզիկական որոշ կարողություններ: Հասարակության մեջ նրանց վերաինտեգրման, աշխատանքային շուկայում իրենց տեղը գտնելու, սոցիալական կարիքները հոգալու համար անհրաժեշտություն է առաջացել աջակցել շահառուներին նոր հմտությունների և գիտելիքների ձեռքբերման աշխատաշուկայում մրցակցության

	մեծացման հարցում: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է շահառուների կարիքների և հմտությունների գնահատում, քարտեզագրվելու են աշխատանքային հմտությունների ուսուցման, վերամասնագիտացման և զբաղվածության ապահովման ծրագրերը, որի արդյունքում շահառուներն ուղղորվելու են մասնակցելու այդ ծրագրերին:
Համագործակցություն	ՀՀ ԱՍՀՆ, ԲՈՒՀ-եր, մասնավոր ընկերություններ, ՀԿ-ներ
Ծրագրի անմիջական նպատակը	Աջակցել 30 շահառուի մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ու զբաղվախության ապահովմանը:
Ծրագրի հիմնական շահառուները	2020թ. ադրբեջանական ագրեսիայի հետևողման մարտերում ստացած վիրավորման հետևանքով տարբեր տիպի հաշմանդամություն ձեռքբերած անձինք:
Ծրագրի սկիզբ և ավտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրն իրականացվելու է 2021թ. ընթացքում:

13. Ադրբեջանի սանձազերծած պատերազմին մասնակցած զինվորների, զորակոչվածների և կամավորների ու նրանց ընտանիքների հետպատերազմական տրավմայի վերացման նպատակով հոգեբանական աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակ	Աջակցել ադրբեջանական ագրեսիայի հետևողման մարտերին մասնակցած զինվորների, զորակոչվածների և կամավորների ու նրանց ընտանիքների հետպատերազմյան տրավմայի վերացմանը, հասարակություն նրանց վերաինտեգրմանը, բնականոն կյանքին վերադարձին:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պատերազմի մասնակից յուրաքանչյուր անձ հասարակություն է վերադառնում ընկճախտով, հետպատերազմական տրավմայով, նրանք դառնում են մտածկոտ, դյուրագրգիռ, երկար ժամանակ նրանց հետապնդում են ամենատարբեր վախեր, ինչը դժվարացնում է նրանց վերադարձը բնականոն կյանքին, շփումն ըստանիքում և դրանից դուրս: Սա հանգեցնում է հասարակությունից անձի օտարմանը, սոցիալական խնդիրների կուտակմանը: Պատերազմից վերադարձած անձինք հաճախ շփման խնդիրներ են ունենում իրենց ընտանիքի անդամների հետ, ինչի արդյունքում լարվում են ծնողի և որդու, կնոջ և ամուսնու հարաբերությունները: Վերջինիս դեպքում հարաբերությունների վատթարացումը հանգեցնում է նաև ամուսնալուծության: Շահառուների՝ հետպատերազմյան տրավման հաղթահարելու նպատակով կիրականացվի աջակցության ծրագիր, որի շրջանակում սոցիալական աշխատանքի միջոցով կբացահայտվեն աջակցության կարիք ունեցող անձինք, նրանց կտրամադրվի հոգեբանական աջակցություն, կձևավորվեն ինքնօգնության խմբեր:

Համագործակցություն	ՀՀ ԱՍՀՆ, Հոգեբանական աջակցություն իրականացնող կամզակերպություններ և մասնավոր ընկերություններ, միջազգային կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	100 շահառուի տրամադրել հոգեբանական աջակցություն և նպաստել նրանց հետպատերազմական տրավմայի հաղթահարմանը:
Ծրագրի հիմնական շահառուները	2020թ. ադրբեջանական ագրեսիայի հետմղման մարտերին մասնակցած զինվորներ, զորակոչիկներ և կամավորներ, նրանց ընտանիքները, ովքեր հոգեբանական աջակցություն չեն ստացել:
Ծրագրի սկիզբ և ավտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրն իրականացվելու է 2021թ. ընթացքում:

Զ Բ Ո Ս Ա Շ Ր Ջ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

COVID-19-ի նոր տիպի կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ իրավիճակի պայմաններում, Երևան քաղաքի զբոսաշրջության ոլորտում իրականացվել են մի շարք ծրագրեր և նախաձեռնություններ: Երևան քաղաքը 2018 թվականից անդամակցում է Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիային (WTCF), և չնայած համավարակի ստեղծած խոչընդոտներին առցանց հարթակում շարունակվում է ակտիվ համագործակցությունը: Այս համագործակցության շրջանակներում իրականացվել են փորձի փոխանակման ծրագրեր, ներկայացվել են COVID-19-ի հաղթահարման մյուս քաղաքների փորձերն ու ռազամավարական ծրագրերը, կազմակերպվել են մի շարք միջոցառումներ առցանց տիրույթում: Հաշվի առնելով համավարակի բացասական ազդեցությունը անդամ քաղաքների տնտեսությունների վրա՝ Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիայի որոշմամբ անդամ քաղաքները, ներառյալ Երևանն ազատվել են 2020 թվականի համար նախատեսված անդամավճարից:

Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ առցանց զբոսաշրջությունը խթանելու նպատակով Երևան քաղաքի քույր և գործընկեր քաղաքների նախաձեռնությամբ իրականացվել է խաչաձև մարքեթինգային (cross-promotion) նախագիծ:

Այս նախագծի փոխադարձ պայմանավորվածության համաձայն՝ Երևանի քույր քաղաքների, մասնավորապես, Կիևի, Օդեսսայի (<https://odessa-journal.com>) և Մանկտ Պետերբուրգի պաշտոնական սոցիալական հարթակներում, զբոսաշրջային հավելվածներում, առցանց պարբերականներում ներկայացվել է Երևան քաղաքի տեսարժան վայրերի գրավչությունն ու զբոսաշրջային ներուժը, և համապատասխանաբար, Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական և քաղաքացիների սպասարկման կենտրոնի ֆեյսբուքյան կայքէջում (Yerevan Tourism Information and Support Center) ներկայացվել է վերոնշյալ քաղաքների զբոսաշրջային ներուժը:

COVID-19-ի բռնկմամբ պայմանավորված՝ Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների աշխատակիցները տեղեկատվության տրամադրումը իրականացրել են հեռավար ձևաչափով՝ առցանց տիրույթում: Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ֆեյսբուքյան էջում հրապարակվել են Հայաստանում և արտերկրում գործող զբոսաշրջային և մշակութային կառույցների վիրտուալ շրջայցեր, ինչպես նաև

Երևանի քույր և գործընկեր ավելի քան 50 քաղաքների զբոսաշրջային ներուժի վերաբերյալ տեղեկատվություն: Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ այս տարի չի գործել «Երևան Միթի Տուր» պաշտոնական զբոսաշրջային երթուղին և մասնակիորեն փակ են եղել Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնները:

Հիմնախնդիրներ

1. Երևանի զբոսաշրջային նկարագրի Հայաստանի սահմաններից դուրս պատշաճ ներկայացման բացակայություն,
2. Երևանի զբոսաշրջային գրավչություն ունեցող վայրերի վերաբերյալ տեղեկատվության սակավություն,
3. Զբոսաշրջիկների նախասիրությունների ուսումնասիրության և դրանց համապատասխան համակարգված միջոցառումների բացակայություն,
4. Սպասարկման ոլորտում ներգրավված մարդկային ներուժի շարունակական վերապատրաստման անհրաժեշտություն,
5. Զբոսաշրջության բնագավառում պետություն-մասնավոր հատվածի ակտիվ համագործակցության ոչ բավարար մակարդակ,
6. Զբոսաշրջային ենթակառուցվածքների թերի զարգացվածություն,
7. Հանգստի և ռեկրեացիոն գոտիների ոչ պատշաճ մակարդակ,
8. Իրավական նորմերի ապահովում, համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծմամբ, որոնց շրջանակներում պարտադիր կլինեն զբոսաշրջային և ուղևորափոխադրող ծառայություններ մատուցող ընկերությունների հավատարմագրումը:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման բրենդի մշակում,
2. Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում,
3. Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում,
4. Մարքեթինգային քաղաքականության իրականացում:

1. «Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման բրենդի մշակում»

Ծրագրի նպատակը	Ներկայացնել Երևան քաղաքը մեկ միասնական կերպարով և գաղափարախոսությամբ:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել բաց մրցույթների և հանրային քննարկումների միջոցով, որի արդյունքում կընդունվի լավագույն

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>առաջարկը: Այս ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում:</p>
<p>Համագործակցությունը</p>	<p>Երևան քաղաքի ավագանի, հասարակական կազմակերպություններ</p>
<p>Օրագրի անմիջական նպատակը</p>	<p>Երևան քաղաքի ճանաչելիության բարձրացում միջազգային զբոսաշրջային շուկայում:</p>
<p>Օրագրի հիմնական շահառուները</p>	<p>Համաքաղաքացիներ, զբոսաշրջիկներ</p>
<p>Օրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</p>	<p>Օրագիրը նախատեսվում է իրականացնել 2021 թվականին:</p>

2. «Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում»

Օրագրի նպատակը	Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Մույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեդանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:
Համագործակցությունը	Երևանի քույր և գործընկեր քաղաքներ
Օրագրի անմիջական նպատակը	Երևան քաղաքի զբոսաշրջային ներուժի ներկայացում և միջազգային համագործակցության զարգացում:
Օրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, համաքաղաքացիներ, մայրաքաղաքի հյուրեր
Օրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

3. «Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում»

Օրագրի նպատակը	Երևանում էքսկուրսիոն ուղղության զարգացում
Օրագրի համառոտ նկարագրությունը	«Երևան Միթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց: Երևան քաղաքում գործող զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների բարեկարգում և արդիականացում, ինչպես նաև զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման նոր կենտրոնների շահագործում:
Համագործակցությունը	«Երևանտրանս» ՓԲԸ
Օրագրի անմիջական նպատակը	Երթուղիների կատարելագործում, նոր երթուղիների մշակում

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Օրագրի հիմնական շահառուները	Համաքաղաքացիներ և մայրաքաղաքի հյուրեր
Օրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թ.

4. «Մարքեթինգային քաղաքականության իրականացում»

Օրագրի նպատակը	Երևանի ճանաչելիության բարձրացում և հանրահռչակում:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զանազան ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը որպես զբոսաշրջային արդյունք դիրքավորումը, գովազդումը ու ներկայացումը, ինչպես նաև Երևան քաղաքի մասին տեղեկատվական կայքի ստեղծում և կարճամետրաժ հոլովակի պատրաստում:
Համագործակցությունը	Զբոսաշրջային ամսագրեր, զբոսաշրջային կազմակերպություններ, գովազդային կազմակերպություններ
Օրագրի անմիջական նպատակը	Երևանի մասին հոդվածների տպագրում, գովազդային հոլովակների պատրաստում և լուսաբանում
Օրագրի հիմնական շահառուները	Համաքաղաքացիներ, զբոսաշրջիկներ
Օրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններ

Երևանում առկա է 4,932 բազմաբնակարան շենք, որից 4,561-ի կառավարումն իրականացվում է 265 համատիրությունների կողմից, 142-ը լիազորագրային կառավարիչների, 218-ը վարչական շրջանների ղեկավարների:

Վերելակներ

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4,428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից: 2019թ. Երևանի բյուջեի միջոցների հաշվին

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր
փոխարինվել է թվով 20 վերելակ, իսկ 2020թ. նախատեսված է փոխարինել ոչ բարվոք վիճակում գտնվող հին վերելակները:

Տանիքներ

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը կազմում է 1,236,751 քմ, որից 2012-2020թթ. վերանորոգվել է 690,680 քմ, իսկ բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը՝ 2,230,745 քմ, որից 2012-2020թթ. վերանորոգվել է 418,181 քմ:

Շքամուտքեր

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերն ունեն 12,902 մուտքեր, որից 2012-2020թթ. վերանորոգվել են 9,192 մուտք և շքամուտք:

Հիմնախնդիրներ

1. Վերելակային տնտեսության արդիականացման, կառավարման օպտիմալացման և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկման անհրաժեշտություն,
2. Ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում հարթ և թեք տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն,
3. 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող բազմաբնակարան շենքերի ամրացման անհրաժեշտություն,
4. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ,
5. Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն,
6. Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների ընկալման և իրազեկվածության ցածր մակարդակ,
7. Բազմաբնակարան շենքերի անմատչելի միջավայր հաշմանդամություն ունեցող բնակիչների համար:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում,
2. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,
3. Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում,
4. Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում,
5. Սանիտարական մաքրում և աղբահանություն,
6. Նոր կոյուղագծերի, հեղեղատարների կառուցում և գործող ցանցերի վերակառուցում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

7. Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր,
8. Քաղաքային արտաքին լուսավորություն,
9. Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործում, պահպանում և արդիականացում,
10. ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք:

1. «Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների բարելավում»

Օրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Պարտադիր նորմերի պահանջների պահպանման, կատարման նկատմամբ մեխանիզմների իրականացում և խստացում, որոնց արդյունքում կբարձրանա պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը, հաշվետվողականությունը և թափանցիկությունը:
Համագործակցություն	հիմնադրամներ, հասարակական կազմակերպություններ և այլ կազմակերպություններ:
Օրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներ:
Օրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.

2. «Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում»

Օրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների հիմնանորոգում, բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Օրագրով նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ և թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով և այլ անհրաժեշտ նյութերի օգտագործամբ:
Համագործակցություն	Համատիրություններ
Օրագրի անմիջական նպատակը	Օրագրով նախատեսվում է Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի 84 000 քմ հարթ և 55 000քմ թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ:
Օրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներ:
Օրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.

3. «Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում»

Օրագրի նպատակը	Ապահովել Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերը պատշաճ վերանորոգված մուտքերով:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում, պատուհանների և դռների փոխարինում:
Համագործակցություն	Համատիրություններ
Օրագրի անմիջական նպատակը	975 մուտքերի վերանորոգում
Օրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բնակիչներ:
Օրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.

4. «Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում»

Օրագրի նպատակը	Վերելակային տնտեսության արդիականացում
Օրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերում շահագործման ժամկետը սպառած վերելակների փոխարինում նորերով՝ հարմարեցված նաև լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող բնակիչներին:
Օրագրի անմիջական նպատակ	Նախատեսվում է փոխարինել 100 հատ վերելակ
Օրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակիչներ
Օրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ.

5. «Սանիտարական մաքրում և աղբահանություն»

Օրագրի նպատակը	Աղբահանության և սանիտարականմաքրման բարձր որակի ապահովում:
Օրագրի համառոտ նկարագրությունը	Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու փողոցների, մայրթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև 4,932 բազմաբնակարան շենքերից և մոտ 55,000 մասնավոր

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	տնտեսություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:
Համագործակցություն	-
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար-դեկտեմբեր

6. «Նոր կոյուղագծերի, հեղեղատարների կառուցում և գործող ցանցերի վերակառուցում»

Ծրագրի նպատակը	Ապահովել Երևան քաղաքի հնամաշ կոյուղատար/հեղեղատար համակարգերի վերակառուցում, խողովակների թողունակության մեծացում և նոր կոմունիկացիաների կառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Թաղամասերում /փողոցում/ գոյություն չունեցող կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի հատվածային կառուցում և գործող ցանցերի վերակառուցում:
Համագործակցություն	«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Ծրագրի անմիջական նպատակը	Թաղամասի /փողոցի/ բնակիչներին ապահովել կոմունալ կենցաղային պայմաններով:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի տվյալ փողոցների հարակից տարածքում բնակվող բնակիչներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.

8. «Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նուբարաշենի խճուղուն հարող և Աջափնյակի աղբավայրերի փակում, նոր քաղաքային աղբավայրի կառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է մեկնարկել Նուբարաշենի խճուղուն հարող առկա աղբավայրին հարակից տարածքում նոր աղբավայրի կառուցման ծրագիրը:
Համագործակցություն	ՎՋԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միավայրի գործընկերություն (E5P):
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. 1-ին եռամսյակում նախատեսվում է շինարարության պայմանագրի կնքումը:

9. «Քաղաքային արտաքին լուսավորություն»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է արդիականացնել Երևանի 28 փողոցների լուսավորության համակարգերը՝ տեղադրելով LED լուսատուներ:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	28 փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. <ul style="list-style-type: none"> • առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, • փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, • փոխել լուսավորության հենասյուների բարձակները, • տեղադրել ստորգետնյա հաղորդուղիներ՝ պլաստիկ խողովակաշարերով, • տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ ստորգետնյա հաղորդուղիներում, • առկա վերգետնյա այլ նշանակության մալուխներն անցկացնել ստորգետնյա հաղորդուղիներով, • ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:
Համագործակցություն	ՎՋԵԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P) և ՀՀ կառավարություն:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքի բնակիչներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Շինարարական աշխատանքներն սկսվել են 2019 թվականին: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2021 թ. օգոստոսին:

10. «Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործում, պահպանում և արդիականացում»:

Ծրագրի նպատակը	Իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները: Հին գործող նատրիումային լուսատուների փոխարինումը նոր արդիական և էներգախնայող LED լուսատուներով:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները՝ <ul style="list-style-type: none"> -Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների, խաղահրապարակների լուսավորում, -Մալուխային ցանցի փոխարինում, -Դիսպետչերական ծառայության ավտոմատացում, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի ներդրում, -Նոր տրանսպորտա-տեխնիկական միջոցների, սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում, -Լուսային ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական LED լուսատուների տեղադրում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	-Երևանի քաղաքային լուսավորություն. վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, Երևան քաղաքի թվով 28 փողոցների (ընդհանուր երկարությունը 39 կմ) արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների իրականացում:
Համագործակցություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն, ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդ:
Ծրագրի անմիջական նպատակ	Երևան քաղաքի արտաքին լուսավորությունը համապատասխանեցնել ՀՀ մայրաքաղաքին հարիր պահանջներին: Մայրաքաղաքի բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովումը, օրվա մութ ժամերին անվտանգ տեղաշարժման ապահովումը, արձանագրվող ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատումը:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, Երևան այցելող զբոսաշրջիկներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը իրականացվելու է անընդհատ պարբերականությամբ, 2021թ. ամբողջ ժամանակահատվածում:

11. «ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք»

Ծրագրի նպատակը	Էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով կրճատել բնակիչների էներգետիկ ծախսերը, նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները և բարձրացնել հարմարավետության մակարդակը՝ արդյունքում նպաստելով բնակիչների կյանքի որակի բարելավմանը, իսթանել «կանաչ տնտեսական աճ»-ը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսվում է 90-100 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրաէներգիայի մատակարարումը, ինչպես նաև շքամուտքերում և բակային տարածքներում տեղադրել LED լուսատուներ: Հաշվի առնելով տարածքային համաչափ զարգացման սկզբունքը՝ շենքերի ընտրությունը կատարվել է՝ ընդգրկելով բոլոր վարչական շրջանները: Ընտրությունն իրականացնելիս հաշվի է առնվել նաև սոցիալական բաղադրիչի առկայությունն այդ շենքերում
Համագործակցությունը	Եվրոպական միություն
Ծրագրի անմիջական նպատակը	Ծրագրով նախատեսվում է շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային պանելներ, որոնք կմիացվեն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին: Նախատեսվում է նաև

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	արդիականացնել շենքերի մուտքերի և աստիճանավանդակների, ինչպես նաև բակի արտաքին լուսավորության համակարգերը՝ տեղադրելով լուսադիոդային լամպեր: Արտադրված էլեկտրաէներգիան կապահովի շենքերի վերելակների, ջրամուտքերի և ներհարկային տարածքների, ինչպես նաև արտաքին լուսավորության էլեկտրաէներգիան:
Ծրագրի հիմնական շահառուները	Ծրագրի իրականացման արդյունքում բազմաբնակարան շենքերի շուրջ 25.920 բնակիչ կապրի ավելի հարմարավետ պայմաններում և կունենա էլեկտրաէներգիայի ավելի ցածր վճար:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	Ծրագիրը մեկնարկել է 2018 թվականի մարտի մեկին: Նախատեսվում է ծրագիրն ավարտին հասցնել 2021 թվականին:

Զրամատակարարում և ջրահեռացում

Պարտադիր կատարման աշխատանքների 2021 թվականի ծրագրի շրջանակներում «Վեոլիա Ջուր» ընկերության կողմից Երևան քաղաքում կիրականացվի շուրջ 12,100 գծմ խմելու ջրագծերի և 1,300 գծմ կոյուղագծերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ:

Երևան համայնքի 2021 թվականի բյուջեով նախատեսված 210 մլն. դրամի շրջանակներում մայրաքաղաքի 12 վարչական շրջաններում կիրականացվեն կոյուղատար/հեղեղատար ցանցի վերակառուցման և նոր ցանցի կառուցման աշխատանքներ, որի արդյունքում կապահովվի բազմաբնակարան շենքերի և մասնավոր առանձնատների ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքը:

Գազամատակարարում

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2021 թվականին ներդրումային ծրագրի շրջանակներում Երևան քաղաքում կիրականացվի մոտ 5.68 կմ գազամատակարարման ցանցի շինարարության ու հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև 2 գազաբաշխիչ կայանի կապիտալ նորոգում:

«Երբաղլույս» ՓԲԸ

Երևան քաղաքի շահագործվող լուսավորության ցանցի երկարությունը՝ 2020թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1678.3 կմ-2628 օբյեկտ:

Ներկայումս արտաքին լուսավորության ցանցի լուսատուների գերակշիռ մասը բարձր ճնշման նատրիումական լուսատուներն են, իսկ արդիական և էներգախնայող LED լուսատուները փոքր քանակ են կազմում: Արտաքին լուսավորության ցանցի միջին օրական միացման ռեժիմը տարեկան կտրվածքով կազմում է մոտ 7 ժամ 42 րոպե:

Ներկայումս Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցը գտնվում է դինամիկ զարգացման փուլում, ՄԱԿ-ի զարգացման հայաստանյան գրասենյակի նետ համատեղ իրականացվող Քաղաքային կանաչ լուսավորության ծրագրի շրջանակներում, Վերակառուցման և Զարգացման

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Եվրոպական բանկի և Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանման գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող՝ «Երևանի քաղաքային լուսավորություն» վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, գործող նատրիումական լուսատուները փոխարինվում են ավելի արդիական, էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, որոնք նպաստում են ֆինանսական միջոցների խնայողությանը, որը հետագայում ուղղվելու է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքների ֆինանսավորմանը: Նաև 2020թ. սկսած «Երբաղույս» ՓԲ Ընկերությունը իր ֆինանսական միջոցներից սկսել է Երևան քաղաքի այգիների, բակերի, անցումների հին գործող նատրիումային լուսատուների փոխարինումը նոր արդիական և էներգախնայող ԼԵԴ լուսատուներով, ինչի արդյունքում Ընկերությունը կունենա զգալիորեն էլեկտրաէներգիայի խնայողություն և արտաքին լուսավորությունը կլինի ավելի արդյունավետ:

Արդիականացման արդյունքում ակնկալվում է նաև ջերմոցային գազերի արտանետումների զգալի կրճատում:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթության ոլորտ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 153 դպրոց, որից 141-ը հիմնական, 12-ը միջնակարգ՝ մեկը՝ կրթահամալիր: Ընդհանուր առմամբ աշակերտների թիվը 103058 է, որոնցից 95348-ն ուսանում են հիմնական դպրոցներում, 7710-ը՝ միջնակարգ:

Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման, հանրակրթության պետական չափորոշիչն համապատասխան կրթական ծրագրերի իրականացման նկատմամբ Երևանի քաղաքապետին վերապահված վերահսկողության լիազորության շրջանակում աշխատակազմի հանրակրթության վարչության դպրոցական բաժնի մասնագետների կողմից իրականացվում են դպրոցի փաստաթղթաշրջանառության պարբերական ուսումնասիրություններ, մոնիտորինգային այցեր: Ուսումնասիրությունների շրջանակում հաճախ պարզ է դառնում, որ լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի տեղայնացումը երբեմն բավարար չէ վերջիններիս դրույթները տեղերում պատշաճ կերպով գործարկելու համար: Այս առումով անհրաժեշտություն է առաջանում պարբերաբար կազմակերպել խորհրդատվական հանդիպումներ, կառավարման հմտությունների զարգացման դասընթացներ դպրոցների տնօրենության ներգրավմամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2016թ. փետրվարի 18-ի հ.6 արձանագրային որոշման պահանջների՝ 2019թ-ից Երևանի բոլոր դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն: Այս համատեքստում կարևորվում է դպրոցների ֆիզիկական պայմանների բարելավումը՝ հիմնանորոգման, վերանորոգման ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև մասնակի նորոգումների միջոցով հաշմանդամություն ունեցող սովորողների կարիքների հարմարեցմանը միտված աշխատանքները՝ թեքահարթակների կառուցում, սանհանգույցների, դասասենյակների հարմարեցում և այլն (ներկայումս թեքահարթակներով ապահովված են շուրջ 90 դպրոցներ): Նշյալ հարմարեցման աշխատանքներում երբեմն անհրաժեշտ է մասնագիտական խորհրդատվություն, օրինակ՝ տեսողության խնդիրներ ունեցող աշակերտների համար անհրաժեշտ հարմարեցումներ,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

թեքահարթակների կառուցման առանձնահատկություններ և այլն: Նկատի ունենալով, որ մինչև 2019թ-ը ներառական կրթություն իրականացվել է միայն 54 դպրոցներում՝ առանցքային նշանակություն ունի մյուս դպրոցների կարողությունների զարգացումը ներառական կրթություն իրականացման շրջանակում: Այս առումով վարչության նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք համագործակցային ծրագրեր, որոնք պետք է կրեն շարունակական բնույթ:

Նոր կորոնավիրուսային հիվանդության համավարակով պայմանավորված իրավիճակում կազմակերպված հեռավար կրթության շրջանակում լայնորեն սկսեցին կիրառվել էլեկտրոնային կրթական ռեսուրսները, ստեղծվեցին հաղորդակցության առցանց հարթակներ: Արդյունքում՝ 2020թ. մարտի 16-ից հեռավար կրթության իրականացման ընթացքում դպրոցներից շաբաթական պարբերականությամբ հավաքագրված և ամբողջացված տեղեկատվության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների ուսուցիչները տարբեր ձևաչափերով մատուցել են կրթական ծառայություններ, 100830 աշակերտներից (ըստ 2020թ. հունվարի 1-ի կոմպլեկտավորման) շուրջ 300-ն են, որ ներգրավված չեն եղել տարբեր մեթոդներով կազմակերպված հեռավար կրթության գործընթացում: Հաշվի առնելով, որ ուսուցման հեռավար եղանակը նաև ընթացիկ հրամայական է, ինչպես նաև էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառումը մեծապես նպաստում է որակյալ կրթությանը, անհրաժեշտ է մշակել ծրագրեր՝ հեռավար կրթության համակարգման արդյունավետ մոդելի ներդրման, կրթական էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու՝ ուսուցիչների և աշակերտների կարողությունների զարգացման ուղղությամբ: Այս առումով կարևորվում է նաև դպրոցների համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիայի այլ միջոցներով հագեցվածությունը՝ նաև վարչության հնարավոր աջակցությամբ:

Հիմք ընդունելով հանրակրթության՝ սովորողներին ազգային և համամարդկային արժեքներին հաղորդ դարձնելու առաջնայնության սկզբունքը՝ սովորողի գեղագիտական և բարոյական դաստիարակությանը, ազգային մտածողության զարգացմանը աջակցելու նպատակով առանցքային նշանակություն ունի մեծանուն մտավորականների հորեյաններին, մայրենիի, գրքի տոներին, մերօրյա հերոսներին նվիրված և այլ միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև վերջիններիս խրախուսումը վարչության կողմից: Այս առումով կարևորվում են նաև արտակարգ օժտվածությամբ դպրոցականներին և նրանց ուսուցիչներին հայտնաբերելուն ու խրախուսելուն միտված աշխատանքները, որոնց շրջանակում կարելի է դիտարկել դպրոցականների առարկայական օլիմպիադայի անցկացումը և մրցանակակիրների խրախուսումը: Հարկ է նշել, որ 2020թ. ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ հանրապետական փուլին Երևանից մասնակցած 360 աշակերտներից 122-ը արժանացել են դիպլոմների, 63-ը՝ գովասանագրերի:

Հանրակրթության ոլորտում պետական քաղաքականության՝ սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման և կիրառման առաջնայնության սկզբունքի տեսանկյունից մեծ նշանակություն ունեն աշակերտների ներուժի, մասնավորաբար, աշակերտական խորհուրդների գործունեության խթանմանը միտված նախաձեռնությունները, ինչպիսի նախադեպ հանդիսացավ 2020թ. փետրվարին վարչության նախաձեռնությամբ կազմակերպված աշակերտական համաժողովը՝ շուրջ 150 աշակերտի մասնակցությամբ, որոնցից 30-ը ներկայացրին կրթության կազմակերպման գործընթացին աշակերտների ներգրավվածության, ներդրողական կյանքի աշխուժացման նպաստելուն առնչվող թեմաներով զեկույցներ: Կարևորվում են նաև մարդու կյանքի ու առողջության,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

պատասխանատվության, ինչպես նաև բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը միտված ծրագրերի իրականացումը սովորողների շրջանում:

Վարչության գործունեության արդյունավետության խթանման գործում մեծապես կարևորվում է արդեն իսկ ձևավորված համագործակցությունների ամրապնդումը, ինչպես նաև համագործակցությունների շրջանակի ընդլայնումը ոլորտում գործունեություն ծավալող պետական միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Հիմնախնդիրներ

1. Դպրոցների ղեկավար անձնակազմի կարողությունների զարգացման, մասնավորաբար՝ կառավարման գիտելիքների և հմտությունների զարգացման անհրաժեշտություն,
2. Կրթական բարենպաստ ֆիզիկական միջավայրի, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված պայմանների ձևավորման կարիք,
3. Ներառական կրթության իրականացման արդյունավետության խթանման անհրաժեշտություն,
4. Տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման գիտելիքների զարգացման խրախուսման անհրաժեշտություն, հեռավար ուսուցման արդյունավետության խթանման կարիք,
5. Սովորողների արժեքային կրթությանն ու դաստիարակությանը, ինչպես նաև օժտված աշակերտների բացահայտմանը միտված նախաձեռնությունների խրախուսման խնդիր,
6. Դպրոցի խորհրդակցական մարմինների, մասնավորաբար՝ աշակերտական խորհուրդների ներուժի բացահայտմանը միտված ծրագրերի գործարկման անհրաժեշտություն,
7. Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության նկատմամբ մշտադիտարկման շարունակականության ապահովման և կրթադաստիարակչական գործունեության խթանման անհրաժեշտություն:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում,
2. Դպրոցների շենքերի հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի նորոգում (նաև՝ հարմարեցում),
3. Ներառական կրթության արդյունավետության խթանում,
4. Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն,
5. Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և խրախուսում,
6. Աջակցություն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացին,
7. Աշակերտական խորհուրդների գործունեության խրախուսում,
8. Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում:

1. «Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում»

Ծրագրի նպատակը	Դպրոցների տնօրենների կառավարման հմտությունների և անձնակազմերի մասնագիտական կարողությունների զարգացում:
----------------	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>1. Դպրոցների տնօրենների համար պարբերական սեմինարների կազմակերպում՝</p> <ul style="list-style-type: none"> • աշխատանքային օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների, • կրթության ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի, • կրթության կազմակերպման արդյունավետությունը խթանող ծրագրերի, • կրթության ոլորտում նորարար մոտեցումների, • շահառուների կողմից վերհանված հարցերի վերաբերյալ: <p>2. Լավագույն փորձի փոխանակման, ինչպես նաև նոր գիտելիքների փոխանցման նպատակով դասընթացների, վարպետաց դասերի, քննարկումների կազմակերպում՝ տնօրենների տեղակալների, մեթոդմիավորումների նախագահների և առանձին խմբերի համար:</p>
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, փորձագետներ և այլն:
Ծրագրի անմիջական նպատակ	Դպրոցների ղեկավար անձնակազմի կառավարչական և մասնագիտական կարողությունների զարգացում
Ծրագրի հիմնական շահառուները	Դպրոցների տնօրեններ, տնօրենի տեղակալներ, մեթոդ-միավորման նախագահներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվականի ընթացքում

2. «Դպրոցների շենքերի հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի նորոգում (նաև՝ հարմարեցում)»

Ծրագրի նպատակը	Երևանի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքային պայմանները ժամանակակից կրթական պահանջներին (նաև հաշմանդամություն ունեցող անձնանց կարիքներին) համապատասխանեցում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>1. Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում պետական հանրակրթական դպրոցների հիմնանորոգում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Սույն ծրագրի շրջանակում շարունակելու և/կամ մեկնարկելու են հետևյալ դրոցների հիմնանորոգման աշխատանքները՝ հհ. 6, 18, 22, 51, 68, 95, 111, 116, 122, 135, 143, 191 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը:</p> <p>2. Մասնագիտական խորհրդատվական հանդիպման կազմակերպում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (օրինակ՝ տեսողության խանգարում) համար հարմարեցումների</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	մասնագիտական ուղղորդում ստանալու նպատակով: Երևանի ենթակայության առնվազն 100 դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցման աշխատանքների իրականացում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների և գույքի հարմարեցումներ:
Համագործակցություն	Ասիական զարգացման բանկ, աջակից կառույցներ, անհատ բարերարներ:
Ծրագրի անմիջական նպատակը	Կրթական բարենպաստ միջավայրի ձևավորում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի հ. 6, 18, 22, 51, 68, 95, 111, 116, 122, 135, 143, 191 դպրոցների աշակերտներ, անձնակազմեր, հաշմանդամություն ունեցող սովորողներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց:	2021թ. ընթացքում

3. Ներառական կրթության արդյունավետության խթանում

Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթության կազմակերպում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	1. «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում նախկինում ներառական կրթություն չիրականացրած 98 դպրոցներում անձնակազմերի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում՝ ներառական կրթության կազմակերպման և իրականացման ոլորտում: 2. Ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում և մասնագետի ներգրավում Երևանի քաղաքապետարանի ենթակայության գործող առնվազն 100 դպրոցներում, կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում՝ համագործակից կառույցների ներգրավմամբ: 3. Փորձի փոխանակման հանդիպումներ, սեմինարներ ներառական կրթության ոլորտում հաջողություններ ունեցող դպրոցների, փորձագետների ներգրավմամբ:
Համագործակցություն	Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, միջազգային և տեղական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Ներառական կրթության իրացման արդյունավետության բարձրացում
Ծրագրի հիմնական շահառուներ	Դպրոցների սովորողներ՝ այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, տնօրենություն, ուսուցիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը,	2021թ. ընթացքում

իրականացման ժամանակացույց	
---------------------------	--

4. «Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն»

Ծրագրի նպատակը	Տեղեկատվական տեխնոլոգիաների և կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման, հեռավար ուսուցման արդյունավետության խթանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	1.Դպրոցների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող գիտելիքների զարգացման նպատակով խորհրդատվական հանդիպումների կազմակերպում: 2.Հեռավար կրթության կազմակերպման, մշտադիտարկման, հարթակների կիրառման գիտելիքների զարգացմանը միտված սեմինարների կազմակերպում: 3.Դասապրոցեսում կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման խրախուսում՝ վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղայնացման, ուսուցիչների մասնակցության խրախուսման միջոցով: 4.Մեդիագրագիտության գիտելիքների փոխանցման նպատակով սեմինարների իրականացում:
Համագործակցություն	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ, միջազգային և տեղական կազմակերպություններ, փորձագետներ:
Ծրագրի անմիջական նպատակը	Դպրոցներում ժամանակակից տեխնոլոգիական միջոցների կիրառման խթանում
Ծրագրի անմիջական շահառուներ	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների տնօրենություն, մանկավարժներ, սովորողներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. ընթացքում

5. «Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և խրախուսում»

Ծրագրի նպատակը	Արտակարգ օժտվածությամբ դպրոցականների հետ տարվող անհատական աշխատանքների կազմակերպման խրախուսում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Սովորողների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում. լավագույնների

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	խրախուսում:
Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
Ծրագրի անմիջական նպատակը	Արտակարգ ընդունակություններով սովորողների բացահայտում, նաև ուսուցիչների խրախուսում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների աշակերտներ, մանկավարժներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. 1-2-րդ եռամսյակ

6. «Աջակցություն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացին»

Ծրագրի նպատակը	Նպաստել սովորողների աշխարհաճանաչողությանը, հայրենասիրությանը, դպրության և գիտելիքի կարևորմանը, պատասխանատու վարքագծի, քաղաքացիական պաշտպանության և անվտանգ կենսագործունեության, բնապահպանական աշխարհայացքի ձևավորմանը, կիրառական ռազմագիտության, մասնագիտական կողմնորոշման հիմնային կարողությունների զարգացմանը:
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>1. Հայ ժողովրդի նշանավոր գավակներին և տոներին նվիրված ցերեկույթների, տարվա հոբելյարներին նվիրված միջոցառումների կազմակերպման խրախուսում:</p> <p>2. Աշակերտական ակումբների ձևավորում՝ ըստ հետևյալի. <u>Մասնագիտական կողմնորոշման ակումբ</u>. ոչ ֆորմալ դասընթացների անցկացում, մասնագիտության մեջ հաջողած անձանց հետ հանդիպումների կազմակերպում՝ «Դասը վարում է մասնագետը» խորագրով: <u>Գրական ակումբ</u>. աշակերտների շրջանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրության, քննադատական և վերլուծական մտածողության խթանում, ընթերցանության մրցույթների կազմակերպում: <u>Բնապահպանական (Էկո) ակումբ</u>. դպրոցականների շրջանում բնապահպանական դաստիարակությանը միտված նախաձեռնողական ծրագրերի իրականացում:</p> <p>3. Ռիսկային վարքագծի կանխարգելմանը միտված ոչ ֆորմալ կրթական ծրագրի տեղայնացում 13 միջնակարգ դպրոցներում՝ նաև տեղերի մանկավարժներից դասընթացավարներ պատրաստելու միջոցով:</p> <p>4. Արտակարգ իրավիճակներում քաղաքացիական պաշտպանության գիտելիքի կիրառական հմտությունների զարգացում՝ դպրոցների համագործակցային վարժանքների, մասնագետների ներգրավմամբ թեմատիկ սեմինարների միջոցով:</p> <p>5. Նյութատեխնիկական բազայով դպրոցներին աջակցելու ծրագրերի իրականացում:</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	6. «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի ընդլայնում, բնագիտական առարկաների լաբորատորիաների ձևավորման խրախուսում:
Համագործակցություն	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի գրողների միություն, մշակութային համապատասխան օջախներ՝ համաձայնությանը, հրատարակչություններ, միջազգային և տեղական կազմակերպություններ, փորձագետներ:
Ծրագրի անմիջական նպատակը	Աշակերտների մեջ զարգացնել նախաձեռնողականությունը, պատրաստականությունը արտակարգ իրավիճակներում, նպաստել արժեքային կրթությանը:
Ծրագրի հիմնական շահառուները	Սովորողներ, մանկավարժական համակազմեր, համայնք
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. ընթացքում

7. «Աշակերտական խորհուրդների գործունեության խրախուսում»

Ծրագրի նպատակը	Աշակերտական խորհուրդների գործունեության արդյունավետության խթանում
Ծրագրի համառոտ նկարագրություն	1. Աշակերտական կոնֆերանսի կազմակերպում՝ արդի թեմաներով՝ ռիսկային վարքագիծ, բուլինգ, հայրենասիրության արդի ընկալումները և այլն, 2. Հանրակրթության վարչությանը կից աշակերտական խորհրդի ձևավորում, 3. Մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման նախնական գիտելիքների փոխանցման դասընթացի անցկացում:
Համագործակցություն	Տեղական և միջազգային կազմակերպություններ, փորձագետներ
Ծրագրի անմիջական նպատակը	Աշակերտական խորհուրդների գործունեության ակտիվացում, ներուժի իրացում
Ծրագրի հիմնական շահառուները	Դպրոցների աշակերտական խորհուրդների անդամներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2020թ. 2-րդ և 4-րդ եռամսյակ

8. «Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում»

Ծրագրի նպատակը	Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության նկատմամբ
----------------	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	շարունակական վերահսկողության արդյունավետության խթանում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>1. Քննարկման կազմակերպում՝ էլեկտրոնային եղանակով դպրոցների կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ վարչության մասնագետների համար կիրառելի վերահսկողության գործիքի ներդրման հնարավորության վերաբերյալ:</p> <p>2. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումների վաղ հայտնաբերման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացում:</p> <p>3. Առնվազն եռամսյակային պարբերականությամբ հանդիպումների կազմակերպում դպրոցական կրթության բաժնի մասնագետների և սպասարկման շրջանների տնօրենների հետ՝ մասնագետի և տնօրենների կողմից առաջարկված, վարչության պետի կողմից հաստատված օրակարգով:</p>
Համագործակցություն	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն, կրթության տեսչական մարմին, դպրոցների տնօրեններ
Ծրագրի անմիջական նպատակը	Վարչության՝ դպրոցների հետ տարվող աշխատանքների արդյունավետության խթանում
Ծրագրի հիմնական շահառուները	Վարչության աշխատակիցներ, տնօրեններ, դպրոցների անձնակազմեր
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. ընթացքում

Նախադպրոցական ոլորտ

Նախադպրոցական կրթության բնագավառն ապահովում է նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման, ուսուցման, խնամքի և դաստիարակության գործընթացը, որը նպատակաուղղված է երեխայի՝ տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը, սոցիալիզացիային, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, տարրական կրթություն սահուն անցման ապահովմանը:

Նախադպրոցական կրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական կարողությունների համակողմանի զարգացմանը, դաստիարակությանը, խնամքին, առողջության պահպանմանը, սոցիալական ներառմանը, տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը, իրավունքների պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի, նրա անհատականության ձևավորման և տարրական կրթության արդյունավետ նախապատրաստմանն ու սահուն անցմանը:

Երևանի քաղաքապետը իր ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունում իրականացնում է.

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

1) իրականացնում է նախադպրոցական կրթության բնագավառում սույն օրենքով և օրենսդրությամբ լիազոր մարմնի ղեկավարին վերապահված լիազորությունները,

2) ապահովում է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության նախադպրոցական կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, կրթական ծրագրերի իրականացումը՝ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներին համապատասխան,

3) ապահովում է լիազոր մարմնի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի շահագործումը և պահպանումը, դրանց անվտանգությունը և մատչելիությունը,

4) ապահովում և հսկողություն է իրականացնում նախադպրոցական տարիքի երեխաների գործընթացի, ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկման նկատմամբ,

5) առաջարկում և համապատասխան իրավասու մարմնի հաստատմանն է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատությունների մատուցած ծառայությունների դիմաց վարձավճարների չափերը և արտոնությունների ցանկը,

6) նշանակում կամ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ընտրված լինելու դեպքում հաստատում է լիազոր մարմնի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենին, ինչպես նաև պաշտոնից ազատում նրան,

7) վարում է նախադպրոցական տարիքի երեխաների հաշվառումը,

8) մասնակցում է նախադպրոցական կրթության ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին,

9) ապահովում է պայմաններ՝ նախադպրոցական կրթություն ստանալու համար,

10) կազմակերպում է նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական և նորարարական գործունեության իրականացումը,

11) ապահովում է նախադպրոցական տարիքի երեխաների առողջության պահպանման միջոցառումների իրականացումը,

12) իրականացնում է նախադպրոցական կրթության բնագավառը կարգավորող օրենքներով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ վերապահված այլ լիազորություններ:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը սահմանվում է նախադպրոցական կրթության պետական չափորոշիչով, որն իր մեջ ներառում է ուսումնադաստիարակչական հիմնական բնագավառները, ուղղությունները և բովանդակության բաղադրիչները, և դրանց սահմանման մանկավարժահոգեբանական սկզբունքները:

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչի ապահովումը նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է: Մինչև 6 տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում մինչև 6 տարեկան երեխաների վերաբերյալ մեր ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տարիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային, մշակութային առանձնահատկություններով:

Չափորոշչային պահանջներն իրականացվում են նախադպրոցական կրթական ծրագրով՝ նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

կիրառվող մեթոդաբանության, տեխնոլոգիաների և ըստ տարիքային խմբերի՝ երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

Երևանի քաղաքապետարանը իրականացնում է նաև նախադպրոցական կրթության բնագավառում պետության կողմից երաշխավորված մի շարք սկզբունքների ապահովումը՝ առաջնահերթությունը տալով ազգային և համամարդկային արժեքներին, երեխայի կյանքի և առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացմանը, ինչպես նաև ներառական և երեխայակենտրոն միջավայրի խթանման, երեխայի մտավոր, հոգեկան և ֆիզիկական ունակությունների զարգացման առաջնայնությունը, կրթությունը շարունակելու պատրաստվածությունը:

Երևանի ենթակայությամբ գործում է թվով 161 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնք գործում են 977 խմբով: Հունվար և փետրվար ամիսներին մանկապարտեզներում ձևավորվել է թվով 3 նոր խումբ: Հունվարից մինչև մարտ ամսվա սկիզբ հաստատություններ են հաճախել շուրջ 31000 երեխա: Պայմանավորված COVID-19-ով՝ մանկապարտեզներում երեխաների համակազմը չի լրացվել, քանի որ չի կազմակերպվել հերթագրված երեխաների ընդունելություն: Արդյունքում՝ համակազմում ներառված 20000 երեխայից վերընդունվել են շուրջ 9188 երեխա: Նախապատվությունը տրվել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաներին: Մանկապարտեզներում կրթադաստիարակչական աշխատանքներում ընդգրկված է 4561 աշխատակից, որից մանկավարժական անձնակազմում ընդգրկված է 1530 մասնագետ:

Երևանի քաղաքապետարանի շինարարական ծրագրում ընդգրկվել է թվով 11 մանկապարտեզ, իսկ Երևանի էներգաարդյունավետության ծրագրով հիմնանորոգվում են հհ. 36, 49 մանկապարտեզներ: «Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար ձեռք բերվող անհրաժեշտ գույք» ծրագրի շրջանակում 2020թ. մանկապարտեզներին տրամադրվել է կենցաղային տեխնիկա՝ սալօջախ: Երեխաների սնունդը կազմակերպելու համար մանկապարտեզներին տրվել է տարբեր ճաշատեսակների, ըմպելիքների պատրաստման և մատուցման համար կաթսաներ, թեյնիկներ և սպասք: Նոր կորոնավիրուսային հիվանդության վարակի կանխարգելման նպատակով մանկապարտեզներին տրամադրվել է ախտահանիչ նյութ, եռաշերտ բժշկական դիմակ և կոշկաթաղանթ: Նոր կորոնավիրուսային հիվանդության ժամանակաշրջանում մանկապարտեզների բոլոր աշխատակիցները վարձատրվել են 100%, իսկ կենտրոնացված (հերթապահ) 29 մանկապարտեզների աշխատակիցները արժանացել են դրամական խրախուսանքի:

Հիմնախնդիրներ

1. Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների նախադպրոցական կրթության հանրային նշանակության բարձրացումն ու որակի բարելավումը կրթական ծրագրերի բովանդակության վերանայման և ժամանակակից կրթական նորարարությունների ներդրման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման միջոցով,
2. Որակյալ նախադպրոցական կրթություն տրամադրելու հավասար հնարավորությունների, ներառականության և մատչելիության ապահովումը խելամիտ հարմարեցումների միջոցով, նյութատեխնիկական բազայի համալրում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

3. Նախադպրոցական կրթության զարգացմանն աջակցելը միասնական պետական քաղաքականության, համաֆինանսավորման միջոցով, նյութատեխնիկական բազայի համալրում,
4. Երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը նպաստելը, նյութատեխնիկական բազայի համալրում
5. Նախադպրոցական կրթական ծառայությունների որակի շարունակական բարելավումը մանկավարժական աշխատողների շարունակական կատարելագործման և մասնագիտական զարգացման միջոցով, մարդկային ռեսուրսների կառավարում,
6. Նախադպրոցական կրթությունից հանրակրթության սահուն անցմանն ապահովումը, գործընթացների կառավարում:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

2021թ. հերթագրված երեխաների ընդունելությունը և տարիքային խմբերի համալրումը իրականացվելու է.

- ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի (երեխայի օրինական ներկայացուցչի) միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
- Տարիքային խմբերը ձևավորվելու են և երեխաների տեղափոխումը այլ տարիքային խմբեր կատարվելու են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչև 30-ը: Ազատ տեղերը համալրվելու են ամբողջ տարվա ընթացքում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
- Ընդունելության առաջնահերթության իրավունքից, ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգի՝ օգտվելու են (նաև).
 - տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաները.
 - տվյալ ուսումնական հաստատությունում (կազմակերպությունում) աշխատակիցների երեխաները:
- Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կազմակերպվելու է կրթության պետության կառավարման լիազորված մարմնի հաստատած մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշով և նրա կողմից տրված վկայագրով:

Կառավարության առաջնահերթություններին համընթաց՝ անհրաժեշտ է կյանքի կոչել հանրակրթության շեմին բոլոր խավերի նախադպրոցական ավագ տարիքային խմբի՝ 5-6 տարեկան երեխաների համար հավասար մեկնարկային հնարավորությունների ստեղծումը: Առաջնահերթ նպատակներից է նաև նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և հասանելիության բարելավումը: Արդիական խնդիր է նաև արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում նախադպրոցական ուսումնական հաստատություններում անձնակազմերի, ինչպես նաև ծնողների վերապատրաստումը՝ իրավիճակային պատրաստակամությամբ զինվելու նպատակով:

1. Նյութատեխնիկական բազայի նախադպրոցական ուսումնական հաստատություններում,

2. Գործընթացների կառավարում,
3. Մարդկային ռեսուրսների կառավարում,
4. Մանկապարտեզների գույքի թարմացում,
5. Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում,
6. Նախադպրոցական կրթության մատչելիություն,
7. Համակարգի արդյունավետության բարձրացում և արդիականացում, մասնավորապես, էլեկտրոնային կառավարման ներդրմամբ, փաստաթղթաշրջանառության օպտիմալացման միջոցով,
8. Համակարգի արդյունավետության հաշվետվողականության և հետադարձ կապի մեխանիզմների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում, մասնավորապես մշտադիտարկման համակարգի ներդրում:

1. «Նյութատեխնիկական բազայի նախադպրոցական ուսումնական հաստատություններում»

Ծրագրի նպատակը	Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում նյութատեխնիկական բազայի վերգինում՝ հիմնագրի և օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նյութատեխնիկական բազան վերագինելու նպատակով անհրաժեշտ է գնահատել՝ <ol style="list-style-type: none"> 1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերը, 2. հողամասերը, 3. հաղորդակցության միջոցները, 4. գույքը, 5. ուսումնամեթոդական և ծրագրային նյութերը, 6. զարգացնող խաղային միջոցները, 7. դիդակտիկ պարագաները, 8. սարքավորումները /և այլն/
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական Կազմակերպություններ, հիմնադրամներ:
Ծրագրի անմիջական նպատակ	2020 թվականի կարիքների գնահատման արդյունքում առաջարկվող Երևանի ենթակայության մանկապարտեզներում զարգացման ներդրման փուլ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և Երևանում նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:
Ծրագրի սկիզբը, ավարտը, իրականացման	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին

Ժամանակացույց	
---------------	--

2. «Գործընթացների կառավարում»

Ծրագրի նպատակը	Իրականացվող աշխատանքների համակարգում, ավտոմատացում և կառավարում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկապարտեզների սննդի գնման, բաշխման, ինչպես նաև վերանորոգման, և հարակից այլ գործողությունների համար մշակել կամ ներդնել ավտոմատացված համակարգեր, որոնք հնարավորություն կտան ցանկացած տեսակի և բնույթի տեղեկատվություն կարճ ժամանակում վերարտադրել ու դրա հիման վրա կատարել վերլուծություններ՝ օպտիմալացնելով աշխատանքային գործընթացները:
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև մասնավոր մանկապարտեզներ, զարգացման կենտրոններ:
Ծրագրի անմիջական նպատակ	2020 թվականի Երևանի ենթակայության մանկապարտեզներում աշխատանքների համակարգման, ավտոմատացման և կառավարման ներդրումային փուլ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և Երևանի ենթակայության նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ:
Ծրագրի սկիզբը, ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին

3. «Մարդկային ռեսուրսների կառավարում»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման դասընթացների միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների տիրապետման պահանջների կատարելագործում, որոնք հիմնված կլինեն մեթոդաբանության կատարելագործման, սահմանված չափորոշիչներին համահունչ այլընտրանքային եղանակների օգտագործման, ինչպես նաև մասնագիտական և վարչական օղակների աշխատակիցների արդյունավետ կառավարման համակարգերի ներդնում:
Համագործակցություն	Համապատասխան ոլորտային գերատեսչություններ, միջազգային և հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի անմիջական նպատակ	2020 թվականի Երևանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների կրթադաստիարակչական գործընթացում ընդգրկված մասնակիցների կառավարում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների նախադպրոցական կրթության ոլորտի աշխատակիցներ և Երևանի ենթակայության նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ, ինչպես նաև ծնողական համայնքի ներկայացուցիչներ:
Ծրագրի սկիզբը, ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 2021 թվականին

4. «Մանկապարտեզների գույքի թարմացում»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացում, ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանում և ամրապնդում, երեխայի խնամք:
Ծրագրի համառոտ նկարագիրը	Մանկապարտեզների գույքի նորացում. <ul style="list-style-type: none"> • կոշտ գույք (երեխաների և աշխատակազմի համար) • կենցաղային տեխնիկա, • խոհանոցային սպասք:
Համագործակցություն	Վարչական շրջաններ
Ծրագրի անմիջական նպատակը	Երեխաների համար բարենպաստ միջավայրի ապահովում:
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, աշխատակիցներ, երեխաների ծնողներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը շարունակական է 2020-2023թթ. 2021թ. 1-4-րդ եռամսյակ

5. «Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է շենքերի վերանորոգմամբ երեխաների համար ստեղծել շենքային բարենպաստ պայմաններ՝ սանիտարահիգիենիկ նորմերի ապահովմամբ:
----------------	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագիրը	Թվով 69 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում:
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ:
Ծրագրի անմիջական նպատակը	Երեխաների համար բարենպաստ միջավայրի ապահովում. <ul style="list-style-type: none"> • շենքերի հիմնանորոգում • նյութատեխնիկական բազայի թարմացում:
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը շարունակական է 2020-2023թթ. 2021թ. 1-4-րդ եռամսյակ

6. «Նախադպրոցական կրթության մատչելիություն»

Ծրագրի նպատակը	Ծրագրի հիմնական նպատակն է մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ երեխաների սահուն անցումը դպրոց:
Ծրագրի համառոտ նկարագիրը	Նախադպրոցական անվճար կրթություն
Համագործակցություն	Հույսի կամուրջ», «Վորլդ Վիժն» ՀԿ-ներ, ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն»:
Ծրագրի անմիջական նպատակը	Շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում: Հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում: Մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում:
Ծրագրի հիմնական շահառուները	Մանկապարտեզների սաներ, ծնողներ և հաստատության աշխատակիցներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը շարունակական է 2020-2023թթ. 2021թ. 1-4-րդ եռամսյակ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների, որոնց հետ ունի լայն պայմանագրային դաշտ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

և համատեղ իրականացված, իրականացվող և քննարկվող տարբեր ծրագրեր: Վերջին շրջանում ծավալվող համագործակցությունը ամրագրվում է 2-5 տարվա կտրվածքով:

1.	Քույր և գործընկեր քաղաքներ	Կազմակերպություններ	Հուշագրեր, համաձայնագրեր, պայմանագրեր 2014-2019թթ
2.	<ol style="list-style-type: none"> 1. Աթենք (Հունաստան) 2. Ամման /Հորդանան/ 3. Անտանանարիվու (Մադագասկար) 4. Անտոնի (Ֆրանսիա) 5. Աշգաբադ (Թուրքմենստան) 6. Առնուվիլ (Ֆրանսիա) 7. Բեյրութ (Լիբանան) 8. Բուենոս Այրես (Արգենտինա) 9. Բուխարեստ (Ռումինիա) 10. Բրատիսլավա (Սլովակիա) 11. Գլենդել (ԱՄՆ) 12. Դամասկոս (Սիրիա) 13. Դելի (Հնդկաստան) 14. Դոնի Ռոստով (Ռուսաստանի Դաշնություն) 15. Դրագինյան (Ֆրանսիա) 16. Թբիլիսի (Վրաստան) 17. Իլ դը Ֆրանս շրջանային խորհուրդ (Ֆրանսիա) 18. Լիոն (Ֆրանսիա) 19. Լոս Անջելես (ԱՄՆ) 20. Խանթի-Մանսիյսկ (ՌԴ) 21. Կալինինգրադ (ՌԴ) 22. Կարարա (Իտալիա) 23. Կիև (Ուկրաինա) 24. Կրասնոդար (ՌԴ) 25. Ղազվին (Իրան) 26. Մարսել (Ֆրանսիա) 27. Մինսկ (Բելառուս) 	<ol style="list-style-type: none"> 1. «Քաղաքապետները հանուն խաղաղության» կազմակերպություն 2. ԱՂՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով / IAC / 3. «ICLEI Տեղական իշխանությունները հանուն կայունության» ասոցիացիա 4. Ֆրանսախոս քաղաքապետների միջազգային ասոցիացիա 5. Միջազգային քաղաքային համայնքների «Լուսավորում» /LUCI / ասոցիացիա 6. Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն 7. «ԵՎՐՈՍԻԹԻՄ» ասոցիացիա 8. Քաղաքապետների դաշնագիր 	<ol style="list-style-type: none"> 1. 2018թ.-ի նոյեմբերի 17-ից 20-ը Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահ Վալերի Պեկրեսի գլխավորած պատվիրակության Երևան այցի շրջանակներում ստորագրվել է Երևան քաղաքի և Իլ դը Ֆրանս շրջանի միջև ճանապարհային քարտեզը: 2. 2018թ. մարտի 3-ից 8-ը Լիոնի քաղաքապետի գլխավորած պաշտոնական պատվիրակության Երևան այցի ժամանակ Երևան-Լիոն քաղաքների միջև ստորագրվել է հուշագիր: 3. 2017թ. դեկտեմբերի 22-ին Երևանի և Մոսկվայի քաղաքապետերը ստորագրել են երկու քաղաքների միջև համագործակցության 2018-2021թթ. ծրագիրը: 4. 2017թ. նոյեմբերի 23-ից 25-ը համագործակցության 25-ամյակը տոնելու կապակցությամբ Երևանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության Մարսել այցի շրջանակներում համագործակցության հուշագրեր են ստորագրվել Երևանի քաղաքապետարանը և Մարսելի Տուրիզմի և Կոնգրեսի գրասենյակը: 5. 2017թ. հոկտեմբերին Գլենդելի քաղաքապետի գլխավորած պատվիրակության Երևան այցի ընթացքում Երևանի Կենտրոն վարչական շրջանի և Գլենդելի միջև

<p>28. Մոնրեալ (Կանադա) 29. Մոսկվա (ՌԴ) 30. Նիս (Ֆրանսիա) 31. Նովոսիբիրսկ (Ռուսաստանի Դաշնություն) 32. Պեզարո (Իտալիա) 33. Պեկին (Չինաստան) 34. Պլեսի Ռոբինսոն (Ֆրանսիա) 35. Պոդգորիցա (Չեռնոգորիա) 36. Ռիգա (Լատվիա) 37. Ռիո դե Ժանեյրո (Բրազիլիա) 38. Սան Պաուլու (Բրազիլիա) 39. Սանկտ Պետերբուրգ (ՌԴ) 40. Սոֆիա (Բուլղարիա) 41. Սպահան (Իրան) 42. Ստավրոպոլ (ՌԴ) 43. Ստեփանակերտ (Արցախի Հանրապետություն) 44. Վարշավա (Լեհաստան) 45. Վենետիկ (Իտալիա) 46. Վիեն (Ֆրանսիա) 47. Վիլրբի (Ավստրալիա) 48. Վոլգոգրադ (ՌԴ) 49. Տոսկանայի մարզ (Իտալիա) 50. Փարիզ (Ֆրանսիա) 51. Քեմբրիջ (ԱՄՆ) 52. Քիշնև (Մոլդովա) 53. Օդեսա (Ուկրաինա)</p>		<p>ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր: 6. 2017 թվականի հունիսի 8-10-ը Ավստրալիայի Վիլրբի քաղաքի քաղաքապետ Գեյլ Գիլգ Գիդնեյի այցի շրջանակներում ստորագրվել է համագործակցության համաձայնագիր Վիլրբիի և Նոր-Նորք վարչական շրջանի միջև: 7. 2017թ. մարտի 15-ից 19-ը Ֆրանսիայի Դրագինյանի քաղաքապետի գլխավորած պատվիրակության Երևան այցի շրջանակներում Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի և Դրագինյանի միջև ստորագրվել է Բարեկամության խարտիա: 8. 2016 թվականի հոկտեմբերին Նովոսիբիրսկի Կենտրոնական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակության այցի շրջանակներում Երևանի Նոր-Նորք վարչական շրջանի և Նովոսիբիրսկի Կենտրոնական շրջանի միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: 9. 2016թվականի մայիսին Երևանում ստորագրվել է համագործակցության համաձայնագրեր Երևանի Էրեբունի վարչական շրջանի և Սանկտ Պետերբուրգի Պետրոգրադսկի շրջանի միջև, ինչպես նաև Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի և Սանկտ Պետերբուրգի Պետրոգրադսկի շրջանների միջև: 10. 2015թ. հոկտեմբերի 15-17-ը երկկողմ համագործակցության հարցեր քննարկելու նպատակով Երևան էր ժամանել Դոնի Ռոստովի վարչակազմի ղեկավար Ս.Գորբանի</p>
---	--	---

		<p>գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում Երևանի և Դոնի Ռոստովի քաղաքապետարանների միջև ստորագրվել է համագործակցության ծրագիր 2015-2020թթ. համար: 11. 2015թ. -ի հոկտեմբերի 8-ին Դավթաշեն վարչական շրջանի և Անտոնի քաղաքի միջև ստորագրվել է քույրացման մասին արձանագրություն: 12. 2015թ. սեպտեմբերի 19-ին՝ Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի գլխավորած պատվիրակության Առնուվիլ այցի ժամանակ համագործակցության հուշագիր է կնքվել Նուբարաշեն վարչական շրջանի և Առնուվիլ քաղաքի միջև: 13. 2015թ. ապրիլի 29-ից մայիսի 2-ը Երևանում էր գտնվում Սանկտ-Պետերբուրգի նահանգապետ Գ.Պոլտավչենկոյի գլխավորած պատվիրակությունը՝ մշակութա-գործարար համաժողովի շրջանակներում: Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի վարչակազմի միջև կնքվել է 2015-2020թթ. համագործակցության ծրագիր: 14. 2014թ. հոկտեմբերի 29-ին Ամմանում ստորագրվել է Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի և Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի միջև քույր քաղաքներ հռչակելու մասին համաձայնագիրը: 15. 2014թ. հոկտեմբերի 11-ին Երևանում ստորագրվել է Երևանի և Խանթի-Մանսիյսկ քաղաքների միջև միջհամայնքային</p>
--	--	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

		<p>համագործակցություն հաստատելու մասին մտադրությունների հուշագիրը:</p> <p>16. 2014թ. հոկտեմբերի 10-ին Երևանում ստորագրվել է Երևանի և Կրասնոդարի միջև փոխգործակցության և համագործակցության համաձայնագիրը:</p> <p>17. 2014թ. հոկտեմբերի 10-ին Երևանում ստորագրվել է Երևանի և Նովոսիբիրսկի միջև եղբայրացման մասին համաձայնագիրը:</p> <p>18. 2014թ. ապրիլի 8-ին ստորագրվել է Երևան և Ազգաբաղ քաղաքների միջև բարեկամության և համագործակցության հաստատման մասին համաձայնագիրը:</p>
--	--	---

Հիմնախնդիրներ

Արդի աշխարհում քաղաքների ու առավել ևս խոշոր քաղաքների դերակատարումը մեծացել է և մերօրյա հիմնախնդիրների լուծումներն ու քաղաքային տնտեսության զարգացմանը միտված գործողությունները և ներկայացվող ծրագրերը պարտադրում են պրագմատիկ աշխատանքներ իրականացնել արտաքին կապերի ոլորտում: Այդ աշխատանքներն իրագործելու համար առկա են հետևյալ հիմնախնդիրները:

1. Երկկողմ և բազմակողմ համագործակցությունն ուղղել Երևանում հստակ և արդիական ծրագրերի կյանքի կոչմանը,
2. Ակտիվացնել միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավումը Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում,
3. Հատկապես կարևորվում է արտերկրի մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ համաձայնագրերի ստորագրումը՝ համագործակցության կոնկրետ ուղղություններով ու հստակ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ և բազմակողմ համագործակցության աշխարհագրության ընդլայնմամբ,
4. Երևանն իր մայրաքաղաքային գործառույթներից ելնելով պետք է ավելի ակտիվ լինի իր թե՛ երկկողմ այցերի, թե՛ միջազգային և տարածաշրջանային կառույցներում ներկայության առումով:

2021թ. նախատեսվող ծրագրեր

1. Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում,

2. Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում,
3. Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում:

1.«Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում»

<p>Ծրագրի նպատակը</p>	<p>Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում՝ համագործակցության համաձայնագրերի կնքում, թարմացում, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի ակտիվացում, Երևանի՝ իբրև մշակութային խոշոր կենտրոնի ներկայացում:</p> <p>Ծրագրի նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել զբոսաշրջության զարգացմանը:</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝</p> <ul style="list-style-type: none"> - ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքի, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի հետ: - ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Մոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն/, - թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, - Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, - Աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, - ակտիվացնել Երևանի՝ տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, - ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<ul style="list-style-type: none"> - իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, - խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը, - տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:
Համագործակցություն	Քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի անմիջական նպատակը	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021-2023թթ.

2.«Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Միջազգային համագործակցությունների շրջանակներում ծրագրերի իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝</p> <ul style="list-style-type: none"> - ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին, - ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ, - իրականացնել ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի հետ համատեղ ծրագրեր - իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաքի հետ համատեղ ծրագրեր,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<ul style="list-style-type: none"> - իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր, - իրականացնել ՀՀ մարզերի և ԱՀ շրջանների հետ համատեղ ծրագրեր:
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ, նախաձեռնություններ և համագործակցության այլ հարթակներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, Երևանի քաղաքապետարան, քույր և գործընկեր քաղաքներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021-2023թթ.

3. «Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում»

Ծրագրի նպատակը	Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	<p>Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում:</p> <p>Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի</p> <ul style="list-style-type: none"> - Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ, - Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, - Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:
Համագործակցություն	Միջազգային կազմակերպություններ, քույր և գործընկեր քաղաքներ, ինչպես նաև ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչություններ
Ծրագրի անմիջական	Աշխատակիցների կարողությունների բարձրացում

նպատակը	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ, քույր և գործընկեր քաղաքների քաղաքապետարանների աշխատակիցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021-2023թթ.

ՄՇԱԿՈՒՅԹ

Երևան համայնքի ենթակայությամբ գործող կազմակերպությունները, ՀՀ պետական մշակութային քաղաքականությանը համապատասխան, իրականացնում են Երևան համայնքի մշակութային միջավայրի, մշակութային և ստեղծարար ենթակառուցվածքների ձևավորման, պահպանման և զարգացման, հայ և համաշխարհային մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, ուսումնասիրության, ժամանակակից արվեստի ստեղծագործությունների ստեղծման և տարածման համար նպաստավոր պայմանների ապահովման, ինչպես նաև մշակութային բազմաժանր միջոցառումների իրականացման և այլ գործառնություններ: Երևան համայնքը մշակութային քաղաքականությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող 72 կազմակերպությունների միջոցով (5 թանգարան, 3 թատրոն, 19 գրադարան, 26 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, 14 գեղագիտական զարգացման և մշակույթի տներ, 2 մանկական ֆիլիարմոնիաներ, «Երևան» փողային նվագախումբ, «Հայ Արտ» մշակույթի կենտրոն, Երևանի կենդանաբանական այգի): Երևան համայնքի բնակչության լայն զանգվածներին պետական, ազգային և այլ միջոցառումներին ընդգրկելու, վարչական շրջաններում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովելու, ինչպես նաև ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու նպատակով կազմակերպվում են պետական, եկեղեցական, ազգային և այլ տոներին նվիրված միջոցառումներ, տոնակատարություններ: Մշակույթի ոլորտի առաջնահերթություններից է համագործակցությունը քույր ու գործընկեր քաղաքների, միջազգային մշակութային կառույցների հետ, ինչպես նաև այդ կառույցների մշակութային կյանքին ինտեգրման ապահովումը:

Հիմնախնդիրներ

1. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների շարունակական զարգացում և արդիականացում,
2. Մշակութային ծրագրերի, փառատոնների, ցուցահանդեսների, համերգային ծրագրերի, այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանն ուղղված աշխատանքների ակտիվացում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

3. Մշակութային ծրագրերի առավել ակտիվ հանրահռչակման, մշակութային կյանքին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն,
4. Երիտասարդ ստեղծագործողների ինքնադրսևորման համար նոր հարթակների ստեղծում,
5. Ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման և կիրառման, ինչպես նաև մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանման անհրաժեշտություն,
6. Գրադարանային համակարգի գործունեության օպտիմալացում, ոլորտի հասանելիության ապահովման, ինչպես նաև միասնական տեղեկատվական շտեմարանի գործունեությանն ուղղված աշխատանքների իրականացման անհրաժեշտություն,
7. Գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավում,
8. Գրադարաններում, թանգարաններում, թատրոններում տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինման և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման անհրաժեշտություն,
9. Թանգարանային նմուշների ամրակայման, վերականգնման աշխատանքների շարունակական իրականացում, ֆոնդապահոցներում և ցուցադրություններում առկա թանգարանային առարկաների անվտանգության ապահովման անհրաժեշտություն,
10. Թանգարաններում ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծում, առկա համակարգերի բարելավման և վերազինման անհրաժեշտություն,
11. Վերականգնման արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն,
12. Թանգարանային գիտաշխատողների՝ արտերկրի հեղինակավոր թանգարաններում վերապատրաստման անհրաժեշտություն,
13. Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտության և ուսումնասիրման, դրանց արդյունքների ներկայացման անհրաժեշտություն,
14. Թատրոնների խաղացանկերի շարունակական համալրում,
15. Թատրոնների շենքային պայմանների բարելավման, նյութատեխնիկական բազայի արդիականացման անհրաժեշտություն,
16. Մշակութային կրթության ոլորտի հաստատությունների գործունեության բարելավման, արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցման մատչելիության և հասանելիության ապահովման անհրաժեշտություն,
17. Երաժշտական և արվեստի դպրոցներն անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրելու անհրաժեշտություն,
18. Կենդանաբանական այգու վերակառուցման և արդիականացման ծրագրի շարունակության ապահովում:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (երաժշտական և արվեստի դպրոցներ),
2. «Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ),
3. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում,
4. Մշակութային միջոցառումների կազմակերպում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

5. Արտադարձական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր,
6. «Արտադարձական դաստիարակություն» երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում,
7. Գրադարանային ծառայություն,
8. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ,
9. Թատերական ներկայացումներ,
10. Կենդանաբանական այգու ցուցադրություններ,
11. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում:

**1. «Արտադարձական դաստիարակություն» ծրագիր
(երաժշտական և արվեստի դպրոցներ)**

Ծրագրի նպատակը	Մշակութային նախնական մասնագիտական կրթության իրականացում, արտադարձական գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում հետագա ուսման նախապատրաստում, մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի վճարովի ուսուցման իրականացում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրերի կազմակերպում, երեխաների և պատանիների ստեղծագործական կարողությունների զարգացում, օժտված և տաղանդավոր երեխաների և պատանիների բացահայտում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադարձական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Նախնական մասնագիտական կրթության, արտադարձական գեղագիտական դաստիարակության իրականացում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

**2. «Արտադարձակական դաստիարակություն» ծրագիր
(մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ)**

Ծրագրի նպատակը	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպում, հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմաններ ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Արտադարձակական դաստիարակության միջոցով դպրոցահասակ երեխաների համար լրացուցիչ կրթադաստիարակչական ուսուցման, ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

3. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում

Ծրագրի նպատակը	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների և նախասիրությունների զարգացման համար պայմանների ստեղծում, մտավոր-հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացում, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակություն, բնապահպանական և կիրառական այլ ոլորտներում գիտելիքների ձևավորում, ապագա կիրթ և բազմակողմանի զարգացած քաղաքացու ձևավորում:
----------------	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության միջոցով երեխաների, պատանիների և մեծահասակների համար ազատ ժամանցի կազմակերպում, նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ, պատանիներ և մեծահասակներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

4. «Մշակութային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկում պետական, ազգային և այլ միջոցառումներին, ազգային մշակույթի և արվեստի հաղորդակցվելու մատչելիության ապահովում, մշակութային միջավայրի պահպանում և զարգացում, հայ և համաշխարհային հոգևոր-մշակութային արժեքների վրա խարսխված մշակութային արտադրանքի ստեղծման և ծառայությունների մատուցման գործընթացի խթանում, հանրության մշակութային պահանջներին համապատասխան մշակութային միջոցառումների մշակում և իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան քաղաքում պետական, ազգային տոների, մասնագիտական տոների, հիշատակի օրերի և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Ջազի միջազգային օրվան, Պարի միջազգային օրվան, Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան, Գրադարանավարի օրվան, հայականավոր գործիչների և մտավորականների հիշարժան և հոբելյանական տարեթվերին, Երևանի հիմնադրման՝ «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, ինչպես նաև Երևան քաղաքի մշակութային միջավայրի պահպանման, զարգացման, հանրահռչակման, երեխաների և պատանիների գեղարվեստական զարգացման, գեղագիտական դաստիարակչության, երիտասարդության և տարբեր տարիքային խմբերի

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	մշակութային ժամանցի կազմակերպման՝ Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոն, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոն, փոխադարձ միջոցառումներ քույր և գործընկեր քաղաքներում՝ Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Ստեփանակերտում և այլուր:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

5. Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր

Ծրագրի նպատակը	Երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության արդյունավետության բարձարցում, անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան պարագաներով ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախնական մասնագիտական կրթության ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով ապահովում:
Համագործակցությունը	-
Ծրագրի անմիջական նպատակը	Մշակութային կրթության արդյունավետության բարձրացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երաժշտական և արվեստի դպրոցներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

6. «Արտադպրոցական դաստիարակություն» երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի նպատակը	Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տարածման գործընթացի համար ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման ավելացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման կազմակերպում: Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ՝ խթանելով ազգային գործիքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպագանդանը: Ծրագրի շրջանակում ընդգրկված է 610 երեխա:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ ֆինանսների նախարարություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

7.Գրադարանային ծառայություն

Ծրագրի նպատակը	Բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկում, ազատ ժամանցի կազմակերպում, հայ և համաշխարհային գրականության հանրահռչակում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բնակչության գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկում

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

8. Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ

Ծրագրի նպատակը	Մշակութային ժառանգության պահպանման և հանրահռչակման գործընթացի խթանում, Երևանի՝ որպես մշակութային հարուստ ժառանգություն և ավանդույթներ ունեցող քաղաքի տեղորոշում և հանրահռչակում, մշակութային զբոսաշրջության խրախուսում, բնակչությանը մշակութային արժեքներին ծանոթացում, ցուցադրությունների կազմակերպում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևանի պատմամշակութային ժառանգությունը, հայկական կենցաղն ու մշակույթը, անցյալի և ներկայի արվեստի ստեղծագործությունները, ականավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող ցուցադրությունների կազմակերպում, բնագավառին առնչվող գիտական, կրթական գործունեության իրականացում, թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրություն, թանգարանային ֆոնդերի համալրում, թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրությունների իրականացում, նոր ցուցադրությունների կազմակերպում՝ ընդգրկելով պետական, ազգային տոներին, հիշարժան տարեթվերին նվիրված այլ միջոցառումներ և ցուցադրություններ:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Բնակչության թանգարանային արժեքներին ծանոթացում և հանրահռչակում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

9. Թատերական ներկայացումներ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի նպատակը	Ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, հին բեմադրությունների վերականգնում, նոր բեմադրությունների ներկայացում, ժամանակից թատերգության ներկայացում, հայ և համաշխարհային հեղինակների բարձրարժեք ստեղծագործությունների բեմականացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բնակչությանն ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, թատրոնների խաղացանկերի համալրում՝ յուրաքանչյուր թատերաշրջանի ընթացքում 10 նոր և վերականգնված ներկայացմամբ, ստեղծագործական կազմերի համալրում, ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, ներկայացումների որակի բարձրացում, համապատասխան բեմերի, լուսային և ձայնային տեխնիկայի վերազինման աշխատանքների իրականացում, մասնակցություն հանրապետական և միջազգային փառատոներին:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՄ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Բնակչության լայն զանգվածի համար դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան քաղաքի բնակիչներ, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

10. Կենդանաբանական այգու ցուցադրություններ

Ծրագրի նպատակը	Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է «Երևանի կենդանաբանական այգում վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում: Այգում աշխատանքներ են տարվում կենդանիների բնական աճի ավելացման, նոր

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառույթ՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, արտերկրի կենդանաբանական այգիներ, միջազգային շահագրգիռ կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ:
Ծրագրի անմիջական նպատակը	Վայրի կենդանիների պահպանումը, վերացող կենդանիների բազմացումը և ցուցադրումը
Ծրագրի հիմնական շահառուները	Այցելուներ և զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

11. Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում

Ծրագրի նպատակը	Երաժշտարվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորում ու բավարարում, ազգային երաժշտական կատարողական արվեստի պահպանում, տարածում և զարգացում, համերգային ծրագրերի կազմակերպում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է համերգային ծրագրերի կազմակերպում, օժտված երեխաների ստեղծագործական, կատարողական ձեռքբերումների, դեբյուտային ստեղծագործական աշխատանքների ներկայացում, միջոցառումների և մրցույթների, այդ թվում՝ համաքաղաքային, հանրապետական, միջազգային մրցույթների, փառատոների կազմակերպում և միջազգային մրցույթներին, փառատոններին մասնակցության ապահովում:
Համագործակցությունը	ՀՀ ԿԳՄՍ նախարարություն, Երևանի քույր և գործընկեր քաղաքներ, հասարակական կազմակերպություններ
Ծրագրի անմիջական	Ժամանակակից արվեստի բնագավառում հասարակության հոգևոր

նպատակը	պահանջների ձևավորումն ու բավարարումը
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ, բնակչություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույցը	2021թ. հունվար - 2021թ. դեկտեմբեր

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Հաշվի առնելով, որ տարեկան մայրաքաղաք են ներմուծվում մեծ քանակությամբ ավտոմեքենաներ և փողոցներում երթևեկում են ծանր տրանսպորտային միջոցներ, որից մաշվում և քայքայվում է փողոցների ասֆալտբետոնե ծածկը, յուրաքանչյուր տարի անհրաժեշտություն է առաջանում իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև կառուցել նոր փողոցներ, անցուղիներ և տրանսպորտային հանգույցներ:

Երևան քաղաքում առկա են շուրջ 1100 փողոցներ՝ ընդհանուր 945 կմ երկարությամբ: Փողոցների և հրապարակների ընդհանուր մակերեսը կազմում է 15 201 300 քմ, իսկ մայթերի, բակային տարածքների և կամուրջների հետ միասին՝ մոտ 24 348 648 քմ:

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում:

Իրականացվում են մայթերի վերանորոգման աշխատանքներ՝ վերանորոգվում կամ փոխարիվում են նորով մայթերի բետոնե սալիկները, բետոնե և բազալտե եզրաքարերը, վերականգնվում են հենապատերը:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը, որի ապահովման համար կատարվում են կամուրջների պահպանման, ընթացիկ նորոգման, շահագործման ծառայություններ: 2021թ-ի ծրագրերի շրջանակներում կհիմնանորոգվի նաև Թբիլիսյան խճուղու Կորեայի ձորի կամուրջը և կկառուցվի նոր կամուրջ:

Գերակա խնդիր է հանդիսանում նաև մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը, որի նպատակով անհրաժեշտ է բարեկարգել հանգստի գոտիները, այգիները և պուրակները, ինչպես նաև մեծացնել նոր հանգստի գոտիների ստեղծման, բակային տարածքների և խաղահրապարակների կահավորման աշխատանքների ծավալները:

Ոլորտի զերակայություններից է նաև կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատություններում հիմնանորոգման աշխատանքների և էներգախնայողության ապահովումը:

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժը ապահովելու նպատակով վերանորոգվում են գետնանցումները և ըստ անհրաժեշտության

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

կառուցվում են վերգետնյա հետիոտնային անցումներ: Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում, հաշվի առնելով նաև քաղաքացիների առաջարկները:

Երևանի քաղաքապետարանը՝ ՀՀ կառավարության 20.04.2002թ. հ.438 որոշման համաձայն իրականացնում է Երևանի սեփականություն հանդիսացող թվով 401 հուշարձանների պահպանումը, սպասարկումը, պատվանդանների նորոգման և շրջակա տարածքների բարեկարգման աշխատանքները:

Հիմնախնդիրները

1. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում,
2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում,
3. Հուսալի և ժամանակակից ճանապարհների կառուցում,
4. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում,
5. Բակային տարածքներում մինի-ֆուտբոլի դաշտերի կառուցում,
6. Մայրերի բարեկարգում,
7. Հետիոտնի առավել մեծ կուտակումներ առաջացնող խաչմերուկներում ստորգետնյա և վերգետնյա հետիոտնային անցումների կառուցում, վերանորոգում,
8. Կամրջային կառույցների հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, շահագործման բարելավում,
9. Առկա հանգստի գոտիների բարեկարգում և նորերի ստեղծում,
10. Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական, մարզական և առողջապահական հաստատությունների շենքերում վերանորոգման աշխատանքների իրականացում:

2021թ. նախատեսվող ծրագրեր

1. Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում,
2. Ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգում (գրունտային ճանապարհներ),
3. Մայրերի վերանորոգում (սալիկապատում),
4. Մայրերի հիմնանորոգում և նոր մայրերի կառուցում,
5. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում,
6. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում,
7. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում,
8. Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, տրանսպորտային հանգույցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ,
9. Երևան քաղաքում նոր մետաղական ցանկապատների և արգելապատնեշների տեղադրման աշխատանքներ,
10. Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում և վերանորոգում,
11. Հուշարձանների վերանորոգում և պահպանում,
12. Մշակութային օբյեկտների հիմնանորոգում,
13. Սպորտային օբյեկտների հիմնանորոգում,

14. Գետնանցումների վերանորոգում,
15. Ոռոգման ցանցերի կառուցում,
16. Կոյուղագծերի կառուցում,
17. Թափոնատեղերի կառուցում,
18. Հիդրանտների նորոգում և նորերի կառուցում,
19. Փողոցներում քարաթափումների կանխման միջոցառումներ,
20. Վերոնիկայի մանկապարտեզի» մասնաշենքի վիճակի գնահատում և վերականգնման նախագծանախահաշվային աշխատանքներ,
21. Թիվ 97 դպրոցի 4-րդ մասնաշենքը վերափոխել մանկապարտեզի:

1. «Ասֆալտբետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Ճանապարհները նորմալ վիճակում պահելու անհրաժեշտ նախապայմանը նորոգման և պահպանման մշտական աշխատանքների իրականացումն է: Կարևոր հանգամանք է ճանապարհների ճաքերի վերանորոգումը պոլիմերային և բիտումապոլիմերային մածուցիկ նյութերով, որը էապես երկարացնում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հուսալի և ժամանակակից ճանապարհներ, Ավտոմեքենաների խցանումների բացառում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	567850քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

**2. «Ասֆալտբետոնյա ծածկի հիմնանորոգում»
(գրունտային ճանապարհներ)**

Ծրագրի նպատակը	Երկրորդական փողոցների պատշաճ վիճակի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր կառուցվող թաղամասերում և չասֆալտապատված հողային պաստառով փողոցների ասֆալտապատում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	10600քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

3. «Մայթերի վերանորոգում (սալիկատում)»

Ծրագրի նպատակը	Փողոցների մայթերի պատշաճ վիճակի, հարմարավետության և արտաքին տեսքի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մայթերի վնասված, քանդված և բացակայող հատվածներում նոր սալիկների տեղադրում կամ հնի օգտագործմամբ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	4800 քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

4. «Մայթերի հիմնանորոգում և նոր մայթերի կառուցում»

Ծրագրի նպատակը	Երթևեկության անվտանգության նկատառումներից ելնելով՝ թեք լանջերից գլորվող քարերից պաշտպանիչ միջոցառումների իրականացում, Փողոցների պատշաճ վիճակի և անվտանգության ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մայթերի հիմնանորոգում և նորերի կառուցում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Աթենքի և Կողբացի փողոցների մայթեր
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

5. «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Բարեկարգ և արտաքինապես գեղեցիկ քաղաք՝ իր պուրակներով և շատրվաններով, կանաչ գոտու ավելացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր հանգստի գոտիների ստեղծում, առկա զբոսայգիների վերակառուցում և բարեկարգում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Նոր Արաբկիր զբոսայգու, 16-րդ թաղ. 1-ին շրջայի, Աբովյան պուրակի, Աբովյան 21 շենքի բակի բարեկարգում
Ծրագրի հիմնական	Երևանի բնակիչները և հյուրերը

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

6.«Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի մանկապարտեզների վերանորոգում և հիմնանորոգում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մանկապարտեզների տանիքների, ճաշարանների, սանհանգույցների վերանորոգում, հին դռների և լուսամուտների փոխարինում նորով, ներքին հարդարման աշխատանքներ, ջրագծերի, կոյուղագծերի, էլեկտրալուսավորության համակարգի վերանորոգում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Թվով 15 մանկապարտեզների հիմնանորոգում, բակերի բարեկարգում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

7. «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Բակային տարածքներում մինի-ֆուտբոլի դաշտերի կառուցում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բակերի բարեկարգում, երիտասարդ սերնդի ակտիվ հանգստի կազմակերպում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

8. «Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցերի, տրանսպորտային հանգույցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման ծառայություններ»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի պատշաճ տեսքի, անխափան երթևեկության ապահովում, բնակչության տեղաշարժի անվտանգություն: Թբիլիսյան խճուղու` Կորեայի ձորում կամրջի հիմնանորոգում և նորի կառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	կառուցվածքների զննում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասի և մայթերի նորոգում, մաքրում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Երևանի թվով 42 կամուրջների և կամրջային կառույցների շահագործում, ընթացիկ նորոգում:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

9. «Երևան քաղաքում նոր մետաղական ցանկապատների և արգելապատնեշների տեղադրման աշխատանքներ»

Ծրագրի նպատակը	Փողոցների բարեկարգ վիճակի ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մետաղական ցանկապատերի և արգելապատնեշների տեղադրում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Համաձայն հանձնարարականների
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

10. «Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում և վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի բուժ.հաստատությունների վերանորոգում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Պոլիկլինիկաների սանհանգույցների վերանորոգում, հին դռների փոխարինում նորով:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Թվով 5 պոլիկլինիկաների վերանորոգում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

11. «Հուշարձանների վերանորոգում և պահպանում»

Ծրագրի նպատակը	Հուշարձանների պահպանում, պատշաճ տեսքի ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հուշարձանների պատվանդանների վերանորոգում

նկարագրություն	
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Համաձայն հանձնարարականների
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

12. «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Մշակութային օբյեկտների հիմնանորոգում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի թատրոններում, թանգարաններում և այլ մշակութային կազմակերպությունների վերանորոգման, ջրագծերի և կոյուղագծերի նորոգման աշխատանքների իրականացում :
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Պատանի հանդիսատեսի թատրոն, Միեր Մկրտչյանի անվան թատրոն, «Հայ-Արտ» ցուցասրահ, Երևանի պատմության թանգարան, Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

13. «Մարզադպրոցների հիմնանորոգում»

Ծրագրի նպատակը	Մարզադպրոցների հիմնանորոգում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի մարզադպրոցներում նորոգման աշխատանքների իրականացում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Շենգավիթ վարչական շրջանի համալիր մարզաձևերի մարզադպրոցի տանիքի հիմնանորոգում, Նուբարաշենում շախմատի դպրոցի կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

14. «Գետնանցումների վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Ստորգետնյա հետիոտնային անցումների վերանորոգման աշխատանքներ, բնակչության անվտանգ երթևեկի ապահովում
----------------	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագրություն	Աստիճանների, հատակների, պատերի և առաստաղների նորոգում, ջրամեկուսացման ապահովում, վնասված սալերի փոխում, պոկված սալերի լրացում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Գր. Լուսավորչի փող.-Մաշտոցի պողոտա, Ազատության-Դավիթ Անհաղթ փող. խաչմերուկների և Բագրատունյաց փողոցի
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

15. «Ոռոգման ցանցերի կառուցում»

Ծրագրի նպատակը	Կանաչ գոտիների ոռոգման ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր ոռոգման ցանցերի կառուցում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Ա.Խաչատրյան փողոցում, Էրեբունի վարչական շրջանի թվով 3 հասցեներում, Չելտվիկ Մայիսի 9-ի փողոցների շենքերով պարփակված տարածք, Թելմանի անվան դպրոցի բակ և 16-րդ թաղամասում պոմպակայանի կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

16. «Կոյուղագծերի կառուցում»

Ծրագրի նպատակը	Թաղամասերի կոյուղագծերի կառուցում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նոր կոյուղագծերի կառուցում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	«Հաղթանակ» թաղամաս, Արշակունյաց 39/9 և Դավթաշենի Սամվել Գևորգյան փողոցի հարակից թաղամաս
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

17. «Թափոնատեղերի կառուցում»

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի նպատակը	Թղթի և թունավոր նյութերից պատրաստված թափոնների համար թափոնատեղի կառուցում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Թափոնների վերամշակման, պահեստավորման շինությունների կառուցում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Արարկիր, Ավան, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

18. «Հիդրանտների նորոգում և նորերի կառուցում»

Ծրագրի նպատակը	Հակահրդեհային համակարգի ապահովում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանում առկա հակահրդեհային հիդրանտների վերանորոգում և նորերի կառուցում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	38 հատ` նորոգում և 10 հատ` կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

19. «Փողոցներում քարաթափումների կանխման միջոցառումներ»

Ծրագրի նպատակը	Փողոցների վրա լանջերից քարերի թափման կանխարգելում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Փողոցների հարակից լանջերի ցանցապատում
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Մյասնիկյան պողոտա և Սարալանջի խճուղի
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչները և հյուրերը
Ծրագրի սկիզբ և ավարտ	2021թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի հանրային տրանսպորտի համակարգը ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 48 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներհամայնքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում, ինչպես նաև «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն, որն իրականացնում է Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կահավորման, սպասարկման և հսկողության իրականացման աշխատանքներ:

Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ երկրում հայտարարված արտակարգ դրության, կարանտինի, ինչպես նաև ռազմական դրության ժամանակ խաթարվել է մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների ողջ գործընթացը, մտցված սահմանափակումների և ուղևորահոսքի կտրուկ անկման հետևանքով զգալիորեն նվազել է հասարակական տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալները:

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների, տարբեր երկրների թողարկման 561 ավտոբուսներով, որոնցից 267-ը՝ «ՀԻԳԵՆ» մակնիշի, 98-ը՝ «Բոգդան», 150-ը՝ «Հունդաի», 31-ը՝ «ՊԱՁ» և 15-ը՝ «Ջիջիանգ»: Ավտոբուսների միջին տարիքը կազմում է մոտ 9.0 տարի:

Թվով 561 ավտոբուսներից 289-ը գտնվում է Երևանի ենթակայության «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվեկշռում: 2020թ. ընթացքում ընկերությանը պատկանող թվով 83 ավտոբուսներ (79 հատ «Բոգդան» մակնիշի և 4 հատ «ՊԱՁ» մակնիշի) Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման հիման վրա խոտանվել են և դուրս գրվել:

Մայրաքաղաքում փաստացի գործում են 39 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է մոտ 370-380 միավոր շարժակազմ:

Ավտոբուսներով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում կազմում է մոտ 44,0%:

«ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսներից 25-ը կահավորված են հատուկ վերելակային հարմարանքով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար: Տեղադրված վերալակային հարմարանքներից թվով 20-ը ներկայումս անսարք վիճակում են:

Մայրաքաղաքում փաստացի գործում է 59 միկրոավտոբուսային երթուղի, որոնք համալրված են 920 միավոր շարժակազմով: Բացառությամբ մեկ «ՖԻՍ» և մեկ «Սիտրոեն» մակնիշների միկրոավտոբուսների, մնացած բոլորը «ԳԱՁԵԼ» մակնիշի միկրոավտոբուսներ են, միջին տարիքը կազմում է մոտ 10.4 տարի: Միկրոավտոբուսների զգալի մասը իրենց փաստացի վիճակով չեն բավարարում կանոնավոր ուղևորափոխադրումների և ուղևորների սպասարկման որակին ներկայացվող պահանջներին:

Սահմանված կարգի համաձայն, 15 տարին լրացած միկրոավտոբուսները ենթակա են պարտադիր փոխարինման և այդ տեսանկյունից կդադարեցվի 2005թ. թողարկման թվով 274 միկրոավտոբուսների շահագործումը՝ մինչև 2020թ. ավարտը:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Չնայած վերջին տարիներին միկրոավտոբուսների քանակի զգալի կրճատմանը (2012թ. համեմատ՝ ավելի քան 1400 միավորով)՝ դրանցով իրականացվող ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը դեռևս մեծ է և ընդհանուր ծավալում կազմում է մոտ 42.6%:

Միկրոավտոբուսների ընդհանուր վիճակը գնալով վատթարանում է, միայն 2020 թվականին, կազմակերպությունների սնանկացման և երթուղիների սպասարկումից հրաժարվելու պատճառով, դադարեցվել է թվով 7 միկրոավտոբուսային երթուղիների (հ.հ.38,49,32,27,71,69,40) աշխատանքը: Ստեղծված իրավիճակում միկրոավտոբուսների փոխարինումը ավտոբուսներով այլընտրանք չունի, ինչը և նախատեսվում է իրականացնել Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի ընդհանուր համատեքստում:

Որպես առաջին քայլ՝ նախատեսվել է ձեռք բերել և մայրաքաղաք ներկրել թվով 100 նոր փոքր դասի ավտոբուսներ, կազմակերպվել է և անց կացվել մրցույթ, որում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից կիրականացվի ավտոբուսների ներկրման գործընթացը: Ավտոբուսային հավաքակազմի համալրման գործընթացը կկրի շարունակական բնույթ, մասնավորապես, Երևան համայնքի միջոցներով նախատեսվում է ձեռք բերել 7.5-8.5մ երկարությամբ 200 հատ ավտոբուս, իսկ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ՝ 12մ երկարությամբ ևս 100 ավտոբուս:

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է տարբեր մակնիշների թվով 51 տրոլեյբուս, այդ թվում՝ «Շկոդա» մակնիշի՝ 12 հատ, «ՌԵՆՈ» մակնիշի՝ 5 հատ, «ԼԻԱՁ» մակնիշի՝ 34 հատ: Տրոլեյբուսային հավաքակազմը ընդհանուր առմամբ հնացած է, ընթացիկ տարում տեխնիկապես անսարք թվով 28 տրոլեյբուսներ խոտանվել են ու դուրս գրվել: Արդյունքում, մնացած տրոլեյբուսների միջին տարիքը կազմում է մոտ 20.0 տարի, իսկ միայն «ՌԵՆՈ» մակնիշի տրոլեյբուսներինը՝ 42 տարի:

Փաստացի սպասարկվում է 5 տրոլեյբուսային երթուղի, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 35-40 միավոր շարժակազմ, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը կազմում է 2.9%:

«ԼԻԱՁ» մակնիշի տրոլեյբուսներից 2-ը կահավորված է թեքահարթակով՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Մեկնարկել են Շիրակի փողոցում տրոլեյբուսային նոր հպակային ցանցի կառուցման աշխատանքները՝ տրոլեյբուսային հ.2 երթուղու ուղեգիծը երկարացնելու նպատակով (Արտաշիսյան փողոցից մինչև «Կլայկ» խանութին հարակից տարածք)՝ մոտ 3000մ երկարությամբ, ինչը հնարավորություն կտա մեծացնելու երթուղու շահագործման արդյունավետությունը և կապահովի ավելի մեծ քանակի ուղևորների սպասարկումը:

Երևանի մետրոպոլիտենում շահագործվում է 10 կայարան (վերանորոգված է միայն մեկը), առկա է 45 վագոն, որոնց միջին տարիքը կազմում է մոտ 32.0 տարի: Վագոններից հիմնանորոգված են 26-ը, 2021թ. նախատեսվում է հիմնանորոգել և արդիականացնել ևս 6 վագոն: Թվով 24 շարժասանդուղքներից հիմնանորոգված են 10-ը, 2021թ. նախատեսվում է ձեռք բերել և մոնտաժել թվով 9 շարժասանդուղք և այդ նպատակով կազմակերպվել է գնման գործընթաց:

Մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածում նախատեսված մոտ 930մ երկարությամբ դրենաժային թունելի 477.6մ երկարությամբ հատվածը դեռևս ենթակա է կառուցման:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Վերջին հինգ տարիներին մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումներում արձանագրվել է կայուն աճի միտում: Արդյունքում, ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ծավալում ևս աճել է և կազմում է 10.5%:

Մետրոպոլիտենով իրականացվող ուղևորափոխադրումների ծավալների զգալի աճ կարող է տեղի ունենալ միայն գործող գծի ընդլայնման, նոր կայարանների կառուցման և շահագործման արդյունքում:

Ներկայումս մեկնարկել են աշխատանքները՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման նպատակով համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնումների գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:

Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի, հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա մշակել է Երևանի հանրային տրանսպորտի նոր արդյունավետ երթուղային ցանց, ինչը ենթադրում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորություն, զեղչային համակարգի կիրառում, նոր ժամանակակից շարժակազմերի (ավտոբուս, տրոլեբուս) ձեռքբերում՝ բացառելով միկրոավտոբուսները, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, ուղևորների սպասարկման որակի զգալի բարձրացում և այլն:

Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի արդիականացման աշխատանքների և բարեփոխումների շրջանակներում պլանավորվում է նոր, արդիական սարքավորումաձրագրային համակարգերի ներդրում, ինչը հնարավորություն կտա ավտոկայանատեղերում իրականացնել տեսանկարահանող սարքերի ավտոմատացման գործառույթ, մասնավորապես, վճարովի ավտոկայանատեղերում կայանած տրանսպորտային միջոցների համարանիշերի ճանաչում և թվայնացում:

Արդիական նոր համակարգերի ներդրումը հնարավորություն կտա բարելավելու ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների իրականացումը և բարձրացնելու դրանց արդյունավետությունը: Այդ ենթատեքստում, Երևան քաղաքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման լիազորությունները Երևանի քաղաքապետին պատվիրակելու պարագայում, նպատակահարմար կլինի քննարկել տրանսպորտային հոսքերի մոդելավորման ծրագրի ձեռքբերման հնարավորությունը:

Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման գործընթացի շրջանակներում թույլատրվել է թվով 43 կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղեր, ինչպես նաև կազմակերպվել է 156 հատ թեթև մարդատար տաքսի-ավտոմոբիլների կայանատեղ:

Մայրաքաղաքում սահմանված են հասարակական տրանսպորտի 856 կանգառներ, որոնցից միայն 352-ն են կահավորված կանգառասրահներով, մնացածը՝ միայն կանգառանշաններով:

«Աուդոր Էֆեկտ» ՍՊԸ-ի կողմից, «Երևանտրանս» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում, թվով 4 կանգառներ կահավորվել են նորառձ, թուջե ձուլվածքից նոր կանգառասրահներով: 2021թ. նմանատիպ կանգառասրահներով նախատեսվում է կահավորել ևս 5 կանգառներ՝ վերը նշված ընկերության կողմից:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Մայրաքաղաքի թվով 4 խաչմերուկներ (Աճառյան փողոցում՝ 3 խաչմերուկ և Էջմիածնի խճուղի-Երևանյան փողոց խաչմերուկ) կահավորված են «Խելացի» լուսացուցային օբյեկտներով:

Հետիոտների անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով մայրաքաղաքի թվով 28 չկարգավորվող հետիոտնային անցումներում տեղադրվել են հետիոտնային կանչի լուսացույցներ, ևս 73 անցումներ նախատեսվում է կահավորել 2021թ. ընթացքում: Նախատեսվում է նաև իրականացնել «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացույցների սպասարկման, պահպանման շահագործման և վթարավերակազնոդական աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Հասարակական տրանսպորտի ոչ արդյունավետ գործող երթուղային ցանցը, որը չի բավարարում մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացին ներկայացվող առկա պահանջներին,
2. Միասնական սակագնային և տոմսային համակարգի բացակայություն,
3. Ավտոբուսային և տրոլեյբուսային հավաքակազմերը համալրված չեն,
4. Հասարակական տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բավարար վիճակ,
5. Հասարակական տրանսպորտի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն,
6. Կանոնավոր ուղևորափոխադրումների գործընթացում սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն,
7. Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ,
8. Ուղևորների տրանսպորտային սպասարկման որակի ոչ բավարար մակարդակ,
9. Վերգետնյա էլեկտրատրանսպորտի տնտեսության ոչ բավարար վիճակ,
10. Երևանի մետրոպոլիտենի սահմանափակ հնարավորություններ, առկա է գծի ընդլայնման, շարժակազմի, տնտեսության և ենթակառուցվածքների վիճակի բարելավման անհրաժեշտություն,
11. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման, դրանց բարեկարգման և կահավորման անհրաժեշտություն,
12. Հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության և որակի սպասարկման ոչ բավարար մակարդակ,
13. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ,
14. Ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման անհրաժեշտություն:

2021թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ձեռքբերման աշխատանքների իրականացում,
2. Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

3. Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում,
4. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում,
5. Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում,
6. «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի սպասարկման, պահպանման, շահագործման և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում,
7. Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում,
8. Տրանսպորտային հոսքերի մոդելավորման ծրագրի ձեռքբերում:

1.«Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նոր քաղաքային ավտոբուսների (հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված) ձեռքբերման աշխատանքների իրականացում»

Ծրագրի նպատակը	Մայրաքաղաքի կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպումը նոր ավտոբուսներով, միկրոավտոբուսների քանակի կրճատում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների շրջանակներում, կարևորելով երթուղային ցանցի արդյունավետության և ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, մշակվել ու ստեղծվել է նոր երթուղային ցանց, որով նախատեսվում է բացառել միկրոավտոբուսների շահագործումը՝ դրանք փոխարինելով փոքր, միջին և մեծ տեղատարողության քաղաքային ավտոբուսներով: Նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և ներկրել թվով 100 նոր փոքր դասի ավտոբուս, որոնք հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:
Համագործակցություն	-ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն -ՀՀ ճանապարհային ոստիկանություն
Ծրագրի անմիջական նպատակ	Նոր ավտոբուսների (հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար) ներկրման աշխատանքների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

2. «Մետրոպոլիտենի վագոնների արդիականացում»

Ծրագրի նպատակը	Ուղևորների անվտանգության ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի I և II փուլերով արդեն իսկ հիմնանորոգվել և արդիականացվել են թվով 26 վագոններ: 2021 թվականին նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 6 վագոն՝ 4 գլխամասային, 2 միջանկյալ, ձեռք բերել գնացքի 54 անվագույզեր
Ծրագրի անմիջական նպատակ, վագոն հատ	Թվով 6 վագոնների նորոգման և արդիականացման աշխատանքների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

3.«Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային և կապի համակարգերի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, տեխնոլոգիական-տնտեսական գնացքների նորացում, մետրոպոլիտենի գիշերային ժամերին կատարվող աշխատանքների հուսալիության և անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատճառ տեսքի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերոնշյալ նպատակներն իրականացնելու համար նախատեսվում է. 1. 6 կվ մալուխների փոխարինում, 825 Վ մալուխների փոխարինում, մետրոպոլիտենի բաց հատվածի լուսավորության հիմնանորոգում, գծային և փոքր մեխանիզացիայի արկղերի, հեռակառավարման բաժանիչների վահանակների փոխարինում և արդիականացում, ռելեական պաշտպանության համակարգի արդիականացում, 2. Նախատեսվում է գերավազքով աշխատող թվով 9 շարժասանդուղքների ձեռքբերում և մոնտաժում, 3. Նախատեսվում է օդափոխման համակարգի արդիականացում՝ օդափոխիչների փոխարինում և դրանց միացում թվային վերահսկման համակարգին, 4. Թունելային հակահրդեհային և ջրամատակարարման խողովակաշարերի նորոգում:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի անմիջական նպատակ	Ծրագրով նախատեսված տարեկան աշխատանքների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

4.«Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում»

Ծրագրի նպատակը	Ապահովել վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման բարձր որակ, մատչելիություն և անվտանգ փոխադրում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Քաղաքային ենթակայանները, դրանց սնուցող բարձր և արտաձման ցածր լարման մալուխները հնամաշ են և հաճախ են շարքից դուրս գալիս, որի արդյունքում էականորեն տուժում է աշխատանքի կազմակերպման որակը, խաթարվում են երթևեկության միջակայքերը, արդյունքում ձախողվում է ազգաբնակչության անխափան և որակյալ սպասարկումը վերգետնյա էլեկտրատրանսպորտով: Էլեկտրատրանսպորտի բնականոն շահագործման համար կենսականորեն անհրաժեշտ է իրականացնել քարշի ենթակայանները սնուցող մալուխային ցանցի հնամաշ մալուխների փոփոխման փոխարինում նորով, ինչպես նաև բարելավել քարշի ենթակայանների շենքային պայմանները: Նախատեսվում է Ջանիբեկյան փողոցում՝ Բաշինջաղյան փողոցից մինչև Շիրազի փողոցն ընկած հատվածում ստորգետնյա սնման բարձր լարման մալուխագծերի անցկացում, ինչպես նաև Մ.Խորենացու փողոցում տեղակայված թիվ 1 քարշի ենթակայանի տանիքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ/ մալուխների վերանորոգում	-Ընդհանուր առմամբ 2830 մ երկարությամբ ստորգետնյա սնման բ/լ մալուխագծերի անցկացման աշխատանքների իրականացում
Ծրագրի անմիջական նպատակ/ քարշի ենթակայանի տանիքի հիմնանորոգում	Թիվ 1 քարշի ենթակայանի տանիքի (261.28քմ ընդհանուր մակերեսով) հիմնանորոգման աշխատանքների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ,	2021 թվական

իրականացման ժամանակացույց	
---------------------------	--

5.«Հետիոտնային կանչի լուսացույցների ձեռքբերում և տեղադրում»

Ծրագրի նպատակը	Հետիոտների երթևեկության անվտանգության ապահովման նպատակով հետիոտնային կանչի լուսացույցների տեղադրում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վերջին տարիներին Երևան քաղաքում շահագործվող տրանսպորտային միջոցների քանակի աննախադեպ աճի պայմաններում ավելացել են ճանապարհատրանսպորտային պատահարները, մասնավորապես, հետիոտների վրաերթի դեպքերը և հետիոտների երթևեկության անվտանգության ապահովումը վերաճվել է լուրջ հիմնախնդրի: Հետիոտների երթևեկության անվտանգության ապահովման նպատակով 2018 թվականից սկսվել են հետիոտնային կանչի լուսացույցների տեղադրման աշխատանքներ: Տեղադրվել են թվով 28 հետիոտնային կանչի լուսացույցային օբյեկտ: Աշխատանքները կշարունակվեն նաև 2021 թվականին:
Համագործակցություն	ՀՀ ճանապարհային ոստիկանություն:
Ծրագրի անմիջական նպատակ	Մայրաքաղաքի մի շարք փողոցների կահավորում հետիոտնային կանչի լուսացույցներով՝ 73 հատ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

6.«Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացույցային համակարգերի սպասարկման, պահպանման, շահագործման և վթարավերականգնողական աշխատանքներ»

Ծրագրի նպատակը	«Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող լուսացույցների հուսալի աշխատանքի ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Երևան քաղաքում շահագործվող տրանսպորտային միջոցների քանակի աննախադեպ աճի պայմաններում ավելացել են հետիոտների վրաերթի դեպքերը և հետիոտների երթևեկության անվտանգության ապահովումը

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	վերածվել է լուրջ հիմնախնդրի: Այդ նպատակով 2018 թվականից տեղադրված և առաջիկայում տեղադրվելիք հետիոտնային կանչի լուսացույցների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել դրանց սպասարկման, շահագործման և վթարավերականգնողական աշխատանքներ:
Համագործակցություն	ՀՀ ճանապարհային ոստիկանություն
Ծրագրի անմիջական նպատակ	Երևան քաղաքում տեղադրված հետիոտնային կանչի ռեժիմով լուսացուցային համակարգերի սարքինության և հուսալի աշխատանքի ապահովում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, երթևեկության մասնակիցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

7.«Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում»

Ծրագրի նպատակը	Հասարակական տրանսպորտի կանգառների կահավորում կանգառասրահներով՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի համար սահմանված ավելի քան 856 կանգառներից միայն 352-ում են տեղադրված կանգառասրահներ: Ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, Երևանի հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի շրջանակներում, նախատեսվում է սահմանել նոր կանգառներ և շարունակել կանգառների կահավորման աշխատանքները: Նախատեսվում է կահավորել ևս 5 կանգառ:
Համագործակցություն	Մասնավոր ներդրողներ ՀՀ ճանապարհային ոստիկանություն
Ծրագրի անմիջական նպատակը	Նորաձև կանգառասրահներով կանգառների կահավորման աշխատանքների իրականացում
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

8.«Տրանսպորտային հոսքերի մոդելավորման ծրագրի ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների արդյունավետության բարձրացում
----------------	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վերջին տարիներին Երևան քաղաքում շահագործվող տրանսպորտային միջոցների քանակի աննախադեպ աճի պայմաններում ավելացել են ճանապարհատրանսպորտային պատահարները և լուրջ հիմնախնդիրներ են առաջացել ճանապարհային երթևեկության կազմակերպման և անվտանգության ապահովման աշխատանքների տեսանկյունից: Տրանսպորտային հոսքերի մոդելավորման ծրագրի ձեռք բերումը և ներդրումը հնարավորություն կտա բարելավելու Երևան քաղաքի տարածքում ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակը և դրա հետ կապված հիմնախնդիրների լուծումներ առաջարկել ժամանակակից գործիքակազմի միջոցով, ինչը հնարավորություն կտա բարելավելու երթևեկության կազմակերպման աշխատանքների արդյունավետությունը
Համագործակցություն	ՀՀ ճանապարհային ոստիկանություն
Ծրագրի անմիջական նպատակ	Երևան քաղաքում ճանապարհային երթևեկության կազմակերպման աշխատանքների իրականացումը նոր արդիական համակարգի միջոցով:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի բնակիչներ, հյուրեր, զբոսաշրջիկներ և երթևեկության մասնակիցներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացմանն ուղղված ծրագրերն իրականացվել են Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթների համաձայն:

ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 15-ի N2330-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը:

ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 7-ի N1402-Ն որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի 2006-2020թթ. իրականացման հիմնական միջոցառումների ծրագիրը: Նշված ծրագրով ընթացել են քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի կազմման աշխատանքները՝ հիմնականում վարչական շրջանների տարածքների գոտիավորման նախագծերը, այլ ծրագրեր, միջոցառումներ ու նախագծանախահաշվային փաստաթղթեր:

Երևան քաղաքի որոշակի վարչական շրջանների համար ամբողջական, կամ քաղաքի առանձին հատվածների տարածքների համար գոտիավորման նախագծեր են մշակվել և հաստատվել հիմնականում 2007-2009 թվականներին, հետագայում 2017թ-ին Ավան վարչական շրջանի մնացած առանձին հատվածի նախագիծը: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտևորման նախագիծը հաստատվել է 2020թ., Նոր Նորք վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակման աշխատանքները ավարտվել են, ներկայումս համաձայնեցումների փուլում է: Նուբարաշեն վարչական

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատվել է Երևանի քաղաքի ավագանու 2020 թվականի որոշմամբ: Մշակման ենթակա են Մալաթիա-Մեքաստիա և Էրեբունի վարչական շրջանների առանձին տարածքների գոտևորման նախագծերը:

Միաժամանակ պետք է նշել, որ Երևան քաղաքի որոշակի տարածքների համար առկա գոտևորման նախագծերի գործածության ընթացքում պարզ է դարձել, որ դրանց հետևողական կենսագործման մեխանիզմների կիրառության արդյունավետությունը բավարար չէ ծագած խնդիրների լուծման համար: Դրանց իրագործման փոփոխությունների հաշվառումն ու կազմումը չի կատարվում: Ուստի, թե ռազմավարական փաստաթուղթ հանդիսացող գլխավոր հատակագծի նախագիծը, և թե մանրամասն պայմանները սահմանող գործադրական /օպերատիվ/ փաստաթուղթ՝ գոտևորման նախագծերը, ունեն փոփոխության՝ այսինքն կատարելագործման, վերանայման և արդիականացման կարիք:

Երևան քաղաքի քաղաքաշինական գործընթացների կանոնակարգման համար կարևորվում է քաղաքաշինության բնագավառի մի շարք նորատիվատեխնիկական փաստաթղթերի վերանայումը:

Երևանի 2020թ. զարգացման ծրագրում ամրագրված մի շարք ուղղություններով գործառույթներ են ընթացել մասնավորապես՝

Նախկինում հանրային կանաչ տարածքներում տրամադրված պայմանագրերի վերանայման աշխատանքներ

Միջոցներ են ձեռնարկվել նաև դրանց սահմանված կերպով կասեցման, վաղաժամկետ լուծման, չեղարկման կամ փոխանակման: Փողոցների մայթերում տաղավարների քանդման միջոցով հնարավորություն է ստեղծվել վերականգնելու հանրային օգտագործման տարածքները՝

- Արաբկիր վարչական շրջանում, Մերգեյանի անվան ինստիտուտի հարևանությամբ տեղադրված կրպակը, Գ. Գյուլբենկյան և Ա. Խաչատրյան փողոցների խաչմերուկին հարող մայթը զբաղեցրած կրպակները, Աջափնյակ վարչական շրջանում Հալաբյան փողոցի մայթի կրպաշարերը, Թամանյան 1 հասցեում կանաչապատ տարածքի վրա ապօրինի կառուցված ոչ հիմնական շինությունը ապամոնտաժվել են՝ մայթերի բարեկարգում և կանաչ գոտու (սիզամարգ) վերականգնում իրականացնելու համար:

- Բուսաբանական այգու տարածքում Երևանի քաղաքապետի որոշումներով ինքնակամ կառույցներ են քանդվել:

- Նոր Նորք վարչական շրջանի Բակունցի 12 հասցեի բակային տարածքում 12 ավտոտնակների փոխարեն հանգստի գոտի է կառուցվել: Ավտոտնակների սեփականատերերը վարչական շրջանի հետ բանակցություններից հետո որոշել են իրենց իսկ ձեռքով քանդել դրանք ու բակը վերադարձնել բնակիչներին: Այնուհետև համայնքի աջակցությամբ բակը բարեկարգվել և կանաչապատվել է:

- Թաթուլ Կրպեյանի անվան այգու հարակից տարածքի զավթված մի շարք հողակտորներ վերադարձվել են համայնքին:

Քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտում ապօրինի շինարարությունները բացառելու նպատակով իրականացված աշխատանքների արդյունքում Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում հայտնաբերվել և ապամոնտաժվել են ապօրինի իրականացված շինարարություններ և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ազատվել են ապօրինի տիրապետումից:

- Երևանի կենտրոնի տարբեր հատվածներում տեղադրված զբաղմունքները, որոնք դադարել էին ծառայել իրենց նպատակին ապամոնտաժվել են:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

- Երևանի քաղաքապետարանը գործարկել է շինարարության թույլտվությունների առցանց քարտեզը: Քաղաքում իրականացվող շինարարությունների մասին ամբողջական տեղեկատվությունը հասանելի է առցանց: Շինարարության թույլտվությունների առցանց հարթակը ոչ միայն տեղեկատվության աղբյուր է, այլև ապօրինի շինարարության կանխարգելման յուրօրինակ գործիք:
- Քաղաքաշինական գործունեության ոլորտում 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի շինությունների կառուցման և հողազավթումների դեպքերի մասով վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի 48-րդ և 154-րդ հոդվածներով կազմվել է թվով 1053 արձանագրություն: Այդ արձանագրություններից թվով 149-ը կազմվել է քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության, թվով 430 արձանագրություն հասարակական կարգի պահպանության ծառայության կողմից, թվով 474 արձանագրություն վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կողմից:

Պարբերաբար քաղաքապետարանի աշխատակիցների կողմից կազմակերպվել են շրջայցեր, որի ընթացքում ուսումնասիրվել են այն շինարարական հրապարակները, որոնք պատշաճ կազմակերպված չեն եղել, և այդ մասով կազմվել են արձանագրություններ:

Քաղաքաշինության հողի վերահսկողության վարչության կողմից պարբերաբար իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի, բազմաֆունկցիոնալ համալիրների տեղատեսություններ՝ նպատակ ունենալով հսկողություն սահմանել փաստացի կառուցապատվող շինությունների և այդ շինությունների կառուցապատման համար համաձայնեցված նախագծերի պահանջների պահպանման նկատմամբ, համաձայնեցված նախագծերին համապատասխան կառուցապատումն իրականացնելու նպատակով:

Երևան քաղաքում մեծածավալ վերակառուցման և կառուցապատման աշխատանքներ նախատեսող թաղամասերի /կառույցների/ առկա վիճակի ամփոփման և հետագա կառուցապատման հարցերի քննարկումներ են անցկացվել: «Լոկատոր» քաղաքաշինական կադաստր ծրագրի միջոցով առանձնացվել է 2019-2020 թվականների ընթացքում մեծածավալ կառուցապատման աշխատանքների վերաբերյալ ամփոփտեղեկատվություն:

• *Երևան համայնքի ստորգետնյա հետիոտն անցումներ*

Սուրբ Գր. Լուսավորչի փողոց - Մաշտոցի պողոտա խաչմերուկի գետնանցումը վերադարձվել է համայնքին: Ապամոնտաժվել են սբ. Գր. Լուսավորչի փողոց - Մաշտոցի պողոտա խաչմերուկի (նախկին «Ձկանխանութին» հարակից տարածք) գետնանցման ճաղավանդակները: Գետնանցման տարածքի զգալի մասը պատկանում էր մասնավորի: Այժմ այն վերադարձվել է համայնքին: Դրա շնորհիվ հնարավոր է դարձել վերացնել գետնանցման հակասանիտարական վիճակը, ինչից տարիներ շարունակ բողոքել են անցորդներն ու շրջակայքի բնակիչները: Ավելորդություններն ապամոնտաժելու, անցումը մաքրելու, լվանալու և լուսավորությունը կարգավորելու աշխատանքներն ավարտելուց հետո կմշակվի տարածքի հիմնանորոգման նախագիծ:

• *Վթարային շենքերի վերաբնակեցման ծրագրի իրականացման շրջանակներում*

1. Երևանի քաղաքում առկա է 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերում ապրող շուրջ 300 ընտանիքների վերաբնակեցման խնդիր: 2020թ.-ին շարունակվել է 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման ծրագիր և 68 ընտանիք փաստացի սկսել է բնակվել նորակառույց Սիսակյան փողոցի հ.3 շենքում:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

2. Կյանքի որակի բարելավում և անվտանգություն ապահովող, քաղաքապետարանի վերաբնակեցման սոցիալական կարևոր նշանակություն ունեցող այս ծրագիրը լինելու է շարունակական: Տիտոգրադյան փողոցի հ.1/2 հասցեում սկսվել է նոր բազմաբնակարան շենքի շինարարություն, որը հնարավորություն կտա լուծել չորրորդ կարգի վթարային շենքերում ապրող բնակիչների մի մասի վերաբնակեցման խնդիրը:

• **Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտ**

1. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծության աշխատանքներ են կատարվել:

2. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման աշխատանքները, որոնք սկսվել էին 2019 թվականին, արդեն ավարտվել են 2020 թվականի երրորդ եռամսյակում, ընթացքի մեջ են փորձաքննության և համաձայնեցման փուլերը:

3. Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի տարածքի գոտևորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 24.06.2020թ. N244-Ա որոշմամբ:

4. Մալաթիա-Մեքաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի բնակելի և հասարակական կառուցապատման, ճանապարհային և ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, կապ, տնտեսական-կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, արտաքին լուսավորություն) նախագծանախահաշվային փաստթղթեր են կազմվել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի և մասնավոր կազմակերպության միջև կնքված պայմանագրով:

Տվյալ թաղամասի ճանապարհային ցանցի և ինժեներական ենթակառուցվածքների իրականացման նպատակով վարվել են աշխատանքներ տարածքում առկա խոշոր կառուցապատողների հետ՝ նրանց բաժնեմասային մասնակցությամբ ներգրավելով այդ ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցելու գործում, նպաստելով ամբողջական թաղամասի կայացման գործընթացին:

5. Երևան քաղաքում մեծածավալ վերակառուցման և կառուցապատման աշխատանքներ նախատեսող թաղամասերի /կառույցների/ առկա վիճակի ամփոփման և հետագա կառուցապատման հարցերի քննարկումներ են անցկացվել:

5.1. «Մբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի (Կորի փողոցի մոտ՝ Կրիվոյ թաղամաս) բնակելի, հասարակական, հյուրանոցային համալիրի շինարարության կառուցապատման ներդրումային ծրագիր է մշակվել 2019թ. /Մշակվել է տվյալ թաղամասի միասնական կառուցապատման հատակագիծ՝ ճարտարապետական մեկ համալիր, որը բաժանված հատվածներով հնարավոր է ներկայացնել ներդրողներին: Աշխատանքներն այս ծրագրի ուղղությամբ սկսվել են 2019թ.-ից, որի հետագա ընթացքը կախված է ներդրողի/ների ներգրավման հետ, դրա հիման վրա տարածքի գերակա հանրային շահ ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման կայացման հետ: Դրանից հետո հնարավոր է սկսել իրացման աշխատանքները՝ կազմակերպել մոտավոր 2 տարվա ընթացքում առկա մոտ 200-ից ավել գույքի իրացումը:

5.2. «Կոնդ» թաղամասի վերակառուցմանը վերաբերվող քննարկումներ են տեղի ունեցել 2019-2020 թվականներին: ՀՀ փոխվարչապետի 2020թ. սեպտեմբերի 1-ի N516-Ա «Երևան քաղաքի Կոնդ թաղամասի պատմաքաղաքաշինական միջավայրի և զբոսաշրջային ենթակառուցվածքների

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները համակարգող աշխատանքային խումբ ստեղծելու և դրա կազմը հասատելու մասին» որոշմամբ միջգերատեսչական աշխատանքային խմբի ձևավորմամբ պետական մակարդակով քննարկվել է Կոնդ թաղամասի քաղաքաշինական բազմակողմանի ուսումնասիրության՝ պատմաճարտարապետական, տնտեսական, սեյսմիկ և այլ ուղղությունների խնդիրների վերհանման անհրաժեշտության մասին: Կոնդ թաղամասի զարգացման հստակ հայեցակարգ է մշակվելու, որի նպատակն է պահպանել մեր մայրաքաղաքի հնագույն թաղամասերից մեկի պատմաքաղաքաշինական միջավայրը և շունչը՝ «վերակենդանացած» թաղամաս Երևանի սրտում: Ակնկալվելու է լոկալ տնտեսության և զբոսաշրջության ակտիվացում, ճարտարապետության, ենթակառուցվածքների և սպասարկման որակի բարձրացում, նաև աշխատատեղերի ստեղծում: Կոնդի նոր հայեցակարգային էսքիզ-նախագծի մրցույթի առաջադրանքը ներկայացվել էր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ մասնագիտական հանրույթի և մի շարք անհատ ճարտարապետների քննարկմանը: Վերջիններիս առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարվել են համապատասխան փոփոխություններ, նախագիծը լրամշակվել է: Աշխատանքային խմբի կողմից մրցույթի նախագծի քննարկումից ու վերջնական հաստատումից հետո Կոնդ թաղամասի ամբողջական և միասնական զարգացման հայեցակարգի մշակման նպատակով կհայտարարվի բաց միջազգային մրցույթ:

5.3. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի» ստեղծման ուղղությամբ ծրագրի ամբողջական փաթեթի վերամշակման, դրա հեռանկարային հարցերի վերաբերյալ համատեղ քննարկումներ են անցկացվել Երևանի քաղաքապետարանի, ԿԳՄՍ նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի, նախագծի հեղինակի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ: Իրացման աշխատանքները ընթացքի մեջ են մինչև 2020թ. դեկտեմբերի 28-ը: Տարածքում առկա է օտարման ենթակա 47 միավոր գույք: ՀՀ փոխվարչապետի 09.09.2020թ. հ. 547-Ա որոշմամբ ստեղծվել է «Հին Երևան» կառուցապատման ծրագիրը համակարգող աշխատանքային խումբ: Փոխվարչապետի գրասենյակի ղեկավարի գլխավորությամբ 23.09.2020թ. տեղի է ունեցել աշխատանքային խմբի առաջին նիստը, որտեղ մի շարք այլ հարցերի հետ քննարկվել է նաև գույքերի օտարման գործընթացը համայնքային մարմնի մասնակցությամբ շարունակելու հարցը:

5.4. Երևան քաղաքի 33-րդ թաղամասի /Ֆիրդուսի/ վերակառուցում իրացման աշխատանքները ընթացքի մեջ էին մինչև 2023թ.: Հետագա կառուցապատմանը վերաբերվող բազմակողմ քննարկման նպատակով Երևանի քաղաքապետարանում հրավիրվել է նիստ Երևան քաղաքի ավագանու «Իմ քայլը» խմբակցության նախաձեռնությամբ, որին մասնակցել են ՀՀ կառավարության և Երևանի քաղաքապետարանի պատասխանատուներ, ինչպես նաև շահագրգիռ կողմեր:

ՀՀ փոխվարչապետի կողմից ընդունվել է որոշում 19.05.2020թ. N.249-Ա «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի/Ֆիրդուսի/ կառուցապատման ծրագրի իրականացման աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին»:

Երևանի քաղաքապետին հասցեագրված ֆիրդուս թաղամասի պաշտպանության նախաձեռնող խմբի կողմից՝ Երևան քաղաքի Ֆիրդուս թաղամաս-33-րդ թաղամասի վերակենդանացման համար լավագույն լուծում գտնելու նպատակով, Երևանի ժառանգության կոմիտեի կողմից մեկնարկած «Այլընտրանքային 33. Երևանի 33-րդ (Ֆիրդուսի) թաղամաս քաղաքային միջավայրի վերակենդանացման հայեցակարգային այլընտրանքային առաջարկների» միջազգային մրցույթի հայտարարման վերաբերյալ տեղեկությունը ընդունվել է ի գիտություն:

5.5. Մոնթե Մելքոնյան և Ծիծեռնակաբերդի խճուղու միջանկյալ տարածքի ներկա և հեռանկարային կառուցապատման խնդիրների վերաբերյալ տեղի են ունեցել քննարկումներ:

Բնակելի և հասարակական շենքերով կառուցապատման համար նախագծման թույլտվություններ, կամ նախագծային փաստաթղթերի համաձայնեցումներ և շինարարության թույլտվություններ են տրամադրվել 2019-2020 թվականներին:

5.6. Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա արագընթաց ավտոմայրուղու կառուցման հետ հարակից տարածքների կառուցապատման կարգավորման հնարավորությունների վերաբերյալ քննարկումներ են ընթացել նախատեսվող թաղամասի միասնական կառուցապատման հատակագծի մշակման համար:

Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի նախագծի և համապատասխան մրցութային փաստաթղթերի պատրաստման համար Երևանի քաղաքապետարանի և «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերության միջև կնքվել է համապատասխան պայմանագրի փոփոխություն, որի շրջանակներում «Էջիս Ինթերնեյշնլ» ընկերությունը ներկայումս մշակում է վերջնական նախագիծ և մրցութային փաստաթղթեր: Նախատեսվում է, որ ամբողջական փաթեթը պատրաստ կլինի 2020 թվականի ավարտին:

5.7. Կասկադ համալիրի տարածքում թանգարանի ընդլայնման և համերգային դահլիճի էսքիզային առաջարկների քննարկում՝ 2020թ-ին Երևան քաղաքի առկա «Կասկադ» համալիրի համահեղինակ ճարտարապետի և այլ շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային կարգով Երևանի քաղաքապետարանում քննարկվել է համալիրի զարգացման առաջարկ:

5.8. Հալաբյան փողոցի հարակից տարածքում բնակելի համալիրի կառուցման էսքիզային առաջարկ է ներկայացվել Երևանի քաղաքապետարան «Ռենովեյշն փրոջեքթ մենեջմենթ քամփնի» ընկերության ներկայացուցիչների կողմից: Համաձայն էսքիզային նախագծի՝ նախատեսվում է հինգ բազմահարկ շենքի կառուցում, ինչն ամբողջությամբ կլուծի նաև նշյալ տարածքում առկա վթարայնության աստիճան ունեցող վեց շենքերի բնակիչների վերաբնակեցման խնդիրը: Առաջարկով շենքերի կառուցումից հետո միայն կսկսվի վերաբնակեցումը: Նախատեսվում է, որ բնակիչներին նորակառույց բազմաբնակարաններում կտրամադրվեն իրենց բնակմակերեսին համապատասխան վերանորոգված բնակարաններ, ավտոտնակներ ունեցողներն էլ ստորգետնյա ավտոկայանատեղիներում կստանան տարածքներ: Կարևորվել է ծրագրի սոցիալական բաղադրիչը, որը կնպաստի Հալաբյան փողոցում առկա վթարայնության աստիճան ունեցող շենքերում ապրող բնակիչների՝ ապահով, անվտանգ ու հարմարավետ պայմաններում ապրելու խնդրի լուծմանը: Բացի այդ, շուրջ 35000 քմ տարածքից միայն շուրջ 6000 քմ է լինելու կառուցապատման ենթակա, մյուս հատվածներն ամբողջությամբ բարեկարգվելու են, կանաչապատվելու և դառնալու են ընդհանուր օգտագործման հանրային տարածքներ:

5.9. «ԵՄ ԹՈՒՄՈ ինժեներական և կիրառական գիտությունների համալիր» նախագծի իրականացմանը վերաբերող (Եվրոպական Միության և Թումոյի համագործակցությամբ իրականացվող) հարցեր են քննարկվել Երևանի քաղաքապետարանում: Համալիրը բաղկացած է լինելու մի շարք բաղադրիչներից՝ Թումո լաբորատորիաները, 42 Երևանը, Հայաստանում ֆրանսիական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, ընդհանուր հանգույցներ, համաֆինանսավորվող տարածքներ և կոնֆերանս սրահներ:

5.10. Աջափնյակ վարչական շրջանում՝ Տիչինայի փողոցի հ.320, հ.322 հասցեներով հողամասերում (շուրջ 120հա մակերես կազմող) բնակելի թաղամասի իրականացման առաջին փուլով նախատեսվող

բնակելի միկրոշրջանի կառուցապատման և անտառ-պուրակի կազմակերպման էսքիզային նախագծի առաջարկ է քննարկվել և արժանացել հավանության:

6. 2019-2020 թվականների ընթացքում մեկնարկված մեծածավալ կառուցապատման աշխատանքներ

• **Բազմաբնակարան բնակելի շենքերով թաղամասեր, համալիրներ, բնակելի շենքերի խմբեր, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրներ**

6.1. Արաբկիր վարչական շրջանում՝ Ազատության պողոտա հ.27/4, Ադոնցի փողոցի հ.19/8, հ.30/4, Ա.Խաչատրյան փողոցի հ.3/4, Գրիբոյեդովի փողոց հ.48, 48/4 և Տիգրանյան փողոցի հ.19/2, Գրիբոյեդովի փողոցի հ.17, Մամիկոնյանց փողոցի հ.58/5

6.2. Աջափնյակ վարչական շրջանում՝ Լենինականի փողոցի հ.15, Թ.Նազարբեկյան թաղամաս հ.41/1, Ֆուչիկի փողոցի հ.1/1, 1/2

6.3. Ավան վարչական շրջանում՝ Աճառյան փողոցի հ.42/5

6.4. Դավթաշեն վարչական շրջանում՝ Տ.Պետրոսյան փողոցի հ.83, Եղվարդի ճխուղի հ.22, Ա. Միկոյանի փողոցի հ.64

6.5. Կենտրոն վարչական շրջանում՝ Արշակունյաց պողոտայի հ.հ.18, 18/4, 18/5, 18/10, 18/12, 18/16, Արգիշտի փողոցի հ.7/10, հ.7/13, Ռոստոմի փողոցի հ.հ.26, 26/1, 26/2, 26/3, 26/4, 32/1, 32/3, 32/4, 32/6, 32/7 և Նար Դոսի փողոցի հ.53/2, Պարոնյան փողոցի հ.42, հ.44

6.6. Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանում՝ Ծիծեռնակաբերդի խճուղի հ.12/5, 13,39, 39/1, 39/2, 39/3, 39/4, 39/5,Մոնթե Մելքոնյան փողոցի հ.44, Մոնթե Մելքոնյան փողոցի հ.16, Ծ.Բասկովի պողոտայի հ.12/11,Լենինգրադյան փողոց հ.21/13,Լենինգրադյան փողոցի հ.23/7,Մեքաստիայի փողոց հ.3/3,

6.7. Նոր Նորք վարչական շրջանում՝ Բագրևանդի փողոցի հ.11/4, 11/5, 25/1, Գյուրջյան փողոցի հ.27, Դավիթ-Բեկի փողոցի հ.103/5

6.8. Շենգավիթ վարչական շրջանում՝ Չելուվի փողոցի հ.39, Արշակունյաց պողոտա հ.19, հ.25/5

6.9. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ Կ.Ուլնեցու փողոցի հ.58/20, Պ.Սևակի փողոցի հ.51/11 և Տոնյան փողոցի հ.14, Հ.Ներսիսյան փողոցի հ.5, Մ.Մելիքյան փողոցի հ.2/1

• **Հասարակական կառույցներ՝**

6.10. Ավան վարչական շրջանում՝ Բահալյան թաղամաս հ.5/6-մարզադահլիճ,

6.11. Արաբկիր վարչական շրջանում՝ Կոմիտասի պողոտա հ.49/9- բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցում, Արաբկիր - Վ.Փափազյան փողոց հ.32 -բժշկական կենտրոն,

6.12. Կենտրոն վարչական շրջանում՝ Մյասնիկյան պողոտայի հ.9/4 - հյուրանոց, Արշակունյաց պողոտա հ.11 - հասարակական շինություն, Ծ.Բասկովի պողոտա հ.11-վարչահասարակական համալիր, Մ.Խորենացու փողոցի հ.13 և Զաքյան փողոցի հ.5/2- բիզնես կենտրոն,

6.13. Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանում՝ Մոնթե Մելքոնյան փողոցի հ.31-մանկական, երիտասարդական, ընտանեկան, հանգստի և ժամանցի կենտրոն, Արարատյան 2-րդ զանգված - դպրոց, Մոնթե Մելքոնյան փողոցի հ.22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի հ.9/2, հ.9/1, հ.33- հասարակական և բազմաֆունկցիոնալ համալիր,

6.14. Նորք-Մարաշ վարչական շրջանում՝ Գ.Հովսեփյան փողոցի հ.26/9 - գրասենյակ, Նուբարաշեն-Նուբարաշենի հ.13 - դպրոց,

6.15. Շենգավիթ վարչական շրջանում՝ Արշակունյաց պողոտա հ.61 և Շահամիրյանների փողոցի հ.4 - բազմաֆունկցիոնալ մարզադահլիճ, Բագրատունյաց հ.48-մարզադպրոց, Սմբատ Զորավարի փողոց

հ.11/3-կահույքի ֆաբրիկայի մասնաշենք, Երևանի ՋԵԿ-ի հարևանությամբ նոր համակցված, շոքեզագային ցիկլով էլեկտրակայան,

6.16. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում՝ Հ.Ներսիսյան փողոցի հ.3, հ.3/1 - բժշկական համալսարանի նոր մասնաշենք,

6.17. Նոր-Նորք վարչական շրջանում՝ Ստեփանյան փողոց հ.3-հանրակրթական դպրոցի նոր մասնաշենք:

Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնվել է անցկացնել «Երևան քաղաքի Ազատության հրապարակի ու դրա շրջակայքի, Մեսրոպ Մաշտոցի և Սայաթ-Նովայի պողոտաներով, Թումանյան ու Տերյան փողոցներով պարփակված գոտու բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով լանդշաֆտային ճարտարապետություն-դիզայն հայեցակարգի բաց հրապարակային մրցույթ»: Որոշման նախագծի փաթեթը նախապատրաստվել է և վերամշակված տարբերակը քննարկումների փուլում է:

• **Երևանի էլեկտրական հասարակական տրանսպորտի զարգացման՝ մետրոպոլիտենի համակարգի ընդլայնման և ճոպանուղու ներդրման շրջանակներում.**

Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հայաբյան-Աբելյան փողոցների խաչմերուկի արևելյան հատվածում մետրոպոլիտենի «Աջափնյակ» նոր կայարանի ստեղծման և հասարակական համալիրի կառուցման համար առանձնացված տարածքի նկատմամբ հանրության գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ է մշակվել և դրվել շրջանառության մեջ 2020 թվականին: Հետագայում այն շրջանառությունից հանվել է և ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արդյունքում որոշում է կայացվել պատվիրակել Երևանի քաղաքապետին՝ նախաձեռնելու Երևանի Աջափնյակ թաղամասում մետրոպոլիտենի կայարանի կառուցումը: Այդ նպատակով Երևանի քաղաքապետի 17.08.2020թ. հ.2492-Ա «Մասնագիտական խումբ ձևավորելու մասին» որոշմամբ ստեղծված խմբի կողմից ուսումնասիրվել են առկա փաստաթղթերը /նախագծանախահաշվային աշխատանքների ընթացակարգն երկփուլ մրցութային կարգով իրականացնելու համար/: Համապատասխան աշխատանքային նախագծերը մշակելու համար մրցութային կարգով տեխնիկական առաջադրանքի ձևով գնման հայտ ներկայացնելու աշխատանքներն ընթացքի մեջ են:

Նոր (բազմամոդուլ) ճոպանուղու, որպես այլընտրանքային տրանսպորտի ձևի ներմուծման, տրանսպորտային հոսքերի բեռնաթափման՝ Նորքի զանգվածը քաղաքի կենտրոնի հետ կապող տրանսպորտային միջոցի ստեղծման նպատակով ուսումնասիրվել են ավստրիական «Դոպելմայեր» ընկերության կողմից կազմված նախնական հաշվարկները և ֆինանսավորման ու պարտադիր պայման հանդիսացող պետական սուվերեն երաշխիքի տրամադրմանը վերաբերող հարցեր, համատեղ քննարկումներ են անցկացվել 2019 թվականից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում: «Ճոպանուղի Երևանի համար» ծրագրի իրականացմանը վերաբերող դրույթների առկայության պայմաններում /շրջանակներում/ քաղաքապետարանը հայտնել է իր պատրաստակամությունը աջակցելու մրցութային փաթեթի պատրաստմանը՝ համաձայն ՊՄԳ ընթացակարգերում նախատեսված չափանիշներին ու սկզբունքներին համապատասխան:

• **Երևան քաղաքի անվտանգ և հարմարավետ ճանապարհափողոցային ցանցի զարգացմանն ուղղված ընթացող աշխատանքների շարունակության ապահովում**

Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրով, Երևանում շարունակվել են նախորդ տարիներից մեկնարկած միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհների շինարարության հետ կապված աշխատանքները: Ծրագրում ընդգրկված են Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածը և Արգավանդ-Շիրակի ճանապարհահատվածը:

Երևան քաղաքի օդակաձև արագընթաց ճանապարհի բաղկացուցիչ մաս կազմող Աջափնյակ վարչական շրջանը Շենգավիթ վարչական շրջանին կապող` Լենինգրադյան փողոցից մինչև Ծովակալ Իսակովի պողոտա ձգվող նոր կառուցված Մոնթե Մելքոնյան փողոցի շարունակությամբ Ծովակալ Իսակովի պողոտայի ճանապարհային հանգույցը Արշակունյաց պողոտային միացնող նախագծային ավտոմայրուղու իրականացման նպատակով ընթանում են նախագծային աշխատանքներ «Էջիս Ինթերնեյշնել» ընկերության հետ կնքված պայմանագրի շրջանակներում:

Երևան քաղաքի Մամիկոնյանց և Արամ Խաչատրյան փողոցները միացնող ճանապարհահատվածի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման, վերաթողարկման աշխատանքները ընթացքի մեջ են, նաև վերոհիշյալ ճանապարհահատվածի ազդեցության գոտում գտնվող գույքերի օտարման համար նախատեսվել է ՀՀ կառավարության «Հանրային գերակա շահ ճանաչելու մասին» որոշման նախագծի նախապատրաստում:

Դիտարկվել է Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի և Նոյ թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային ցանցի` Նոյ թաղամասից մինչև Մոնթե Մելքոնյան փողոցի հատված, ճանապարհային միացման կառուցման անհրաժեշտությունը:

Դիտարկվել է Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի և Նժդեհի փողոցի հատման հատվածում /«Հայրենիք» կինոթատրոնի հրապարակ/ տրանսպորտային հանգույցի կառուցման անհրաժեշտությունը:

• **Խցանումների նվազման նպատակով` երթևեկության ծանրաբեռնվածությունը բեռնաթափելուն ուղղված միջոցառումների իրականացում**

Երևան քաղաքում վերգետնյա, ինքնակառավարման տեխնոլոգիաներով հագեցած, բազմահարկ ավտոկայանատեղերի կառուցման առաջարկ է քննարկվել:

Ստ.Շահումյանի անվան հրապարակի և Վ.Սարգսյանի անվան փողոցների միջև ընկած հատվածում նոր ստորգետնյա ավտոկայանատեղերի էսքիզ-առաջարկ է քննարկվել:

• **Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնում, առկա այգիների և զբոսայգիների վերականգնում**

Երևան քաղաքի կանաչապատ տարածքների ընդլայնման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է պատշաճ ոռոգման ցանցի առկայություն և աշխատակազմի բնապահպանության վարչության կողմից 2019-2020թթ. ժամանակահատվածում իրականացվել է ոռոգման ցանցի գույքագրման և վերլուծության աշխատանքներ, որի արդյունքում գնահատվել է ամբողջ ցանցի վիճակը, ինչպես նաև վերանորոգվել են պոմպակայանները և նախատեսվել նոր խորքային հորերի հորատման աշխատանքներ: Իսկ արդեն 2020թ. մեկնարկել է ոռոգման ցանցի վերանորոգման, արդիականացման և ընդլայնման աշխատանքներ: Ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ են իրականացվել նաև Մարալանջում և Ծիծեռնակաբերդի 11.8 համայնքապատկան տարածքում, մշակվել է Ջրաշխարհի հարակից լանջի 12 հա տարածքի

կաթիլային ռոռզման նախագիծը: Ոռոգման համակարգի անցկացումից հետո նախատեսվում է կանաչապատման աշխատանքներ Սարալանջում, Ծիծեռնակաբերդում:

Ներկայումս բարեկարգվում են Մ. Սարյանի անվան պուրակը, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածը, որի արդյունքում Տիգրան Մեծի պողոտայից Վարդանանց փողոց ձգվող բարեկարգվող հատվածը նորովի, հարմարավետ ու անվտանգ կներկայանա երևանցիներին ու մայրաքաղաքի հյուրերին: Այգին հատված առ հատված հանրությանը վերադարձնելու քաղաքային իշխանության նախաձեռնության գործնական մեկնարկը տրված է:

Ժամանակակից հանրային սբեյթ-պարկ կունենանք Օղակաձև այգու վեցերորդ հատվածի Երվանդ Քոչարի փողոց հ.6 և հ 6/1 հասցեներում (Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի հարևանությամբ), որի համար պայմանագիր է կնքվել Ուկրաինայի հայերի միության հետ: Մպորտաձևի նոր մշակույթով ժամանցի վայր կստեղծվի, որտեղ երիտասարդությունը և՛ սպորտով կզբաղվի, և՛ ժամանակ կանցկացնի: Աշխատանքները կիրագործվեն երկու փուլով: Առաջին փուլով՝ խաղահրապարակի հարավային հատվածի ռեչիեֆային լանջը կձևավորվի որպես ամֆիթատրոն՝ ուղղված դեպի խաղահրապարակ: Տարածքում նախատեսված է ունենալ բուժկետ, սբեյթի վարձակալման կետ, կտեղակայվեն ոճային հովհարներ՝ արևային պանելների օգտագործմամբ, կբարեկարգվեն կառուցապատումից ազատ կանաչ գոտիները՝ համալրելով դրանք յուրօրինակ լանդշաֆտային դիզայնով, կիրականացվի ընդհանուր տարածքի պարագծային լուսավորություն՝ LED համակարգի օգտագործմամբ:

Երկրորդ փուլով՝ կբարեկարգվի տարածքի արևելյան հատվածի առկա կանաչ գոտին (մոտ 1845,0 քմ)՝ հարստացվելով յուրօրինակ լանդշաֆտային ու բուսական դիզայնով և դիտահարթակներով: Առանձին նախագծով այգին կկահավորվի հասարակական սանհանգույցով:

Բարեկարգումներ են կատարվել նաև վարչական շրջանների ծրագրով՝ պուրակների վերականգնում, խաղահրապարակներ, ֆուտբոլի դաշտեր և այլն:

Կանաչապատման աշխատանքներ իրականացվելու են՝ կիրառելով նոր մեթոդներ՝ հողապաշտպան, կլիմայական և էկոլոգիական պայմաններին առավելագույնս հարմարված թփերի և ծառերի տնկում, ուղղաձիգ կանաչապատում մագլցող բույսերով, մշտադալար և սեզոնային հերթագայմամբ ծաղկող ծառերի տնկում:

Քաղաքի կանաչ տարածքների վերականգնումը, խնամքն ու պահպանումը ունենալու է միասնական ձեռագիր: Այդ նպատակով 2020թ. տարեսկզբից ստեղծվել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը, որի հիմնական գործառնություններն են Երևան քաղաքում կանաչապատման իրականացման, կանաչ տարածքների (տնկարկների) պահպանության, լանդշաֆտային պլանավորման, քարտեզագրման և վերամշակման ենթակա կոշտ կենցաղային թափոնների ընդունման, հավաքի, տեսակավորման, վերամշակման, ժամանակավոր պահեստավորման և հանձնման հետ կապված աշխատանքների կազմակերպումը: Աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կանաչապատման համայնքային հիմնարկը 2020թ-ի ընթացքում ձեռք է բերել նաև նոր տեխնիկա և համալրումը շարունակվում է:

• **Քաղաքի պատմամշակութային ժառանգության պահպանման միջոցառումներով**

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և իր Կարմիր բլուր և Շենգավիթ մասնաձյուղերի գույքային գրանցումներ կատարելու նպատակով հողային սահմանների ճշտման և հողօգտագործման իրավունքի ձևակերպման համար կատարվել են չափագրման աշխատանքներ և հետագա ձևակերպումների հետ կապված առաջ եկած խնդիրների լուծումը ընթացքի մեջ է:

«Էրեբունի» ամրոցի տարածքում իրականացվել են արգելափակոցի և այցելուների համար նախատեսված սանհանգույցի տեղադրման աշխատանքներ:

«Կարմիր բլուր» հնավայրում ստեղծվել է նոր և ժամանակակից պահակակետ, որը հագեցած է համապատասխան կահույքով և տարածքի հսկողության համար նախատեսված գույքով: Իրականացվել են լուսավորության համակարգի տեղադրման աշխատանքներ, ինչը մեծապես նպաստել է հուշարձանում գիշերային ժամերին առավել արդյունավետ հսկողության իրականացմանը: Հնավայրի տարածքից տարհանվել է շուրջ 1200 թափք շինարարական աղբ, մաքրվել է 3.8 հա տարածք: Ստեղծվել են Կարմիր բլուրի ուրարտական միջնաբերդի, կարասային սրահի, տաճարական հատվածի, միջնաբերդի դարպասների, բազմասեկցիոն կառույցի եռաչափ մոդելները, որը հանրահռչակվում է զբոսաշրջային տարբեր հարթակներում:

«Շենգավիթ» հնավայրի տարածքում տեղադրվել է 4 լուսարձակներ, ինչպես նաև առաջին եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) եռաչափ ցուցանակը:

Պատմամշակութային և ճարտարապետական արժեք ներկայացնող որոշակի շենքերին տեղադրված գովազդային վահանակները ապամոնտաժվել են, որը շարունակական գործընթաց է լինելու՝ Ապամոնտաժվել են եկեղեցու դիմացի ծաղկի տաղավարն ու նախկին Փակ շուկայի ճակատային մասի մետաղյա հովանոցները, Մայաթ-Նովայի պողոտայի և Աբովյան փողոցի խաչմերուկում՝ Սուրբ Աննա եկեղեցու դիմաց տեղադրված ծաղկի վաճառքի համար նախատեսված տաղավարը, ճարտարապետական արժեք ներկայացնող շենքի տեսքը աղավաղող Բաղրամյան 1 հասցեում՝ մայթին, տարիներ շարունակ շահագործվող կրպակը, հետո կապամոնտաժվի նաև դեպի սրահ տանող ապակեպատ մուտքը:

Հիմանխնդիրներ

1. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով անհրաժեշտ է խիստ վերահսկողություն՝ օրենսդրական դաշտի վերանայմամբ/բարեփոխմամբ,

2. Երևանի քաղաքաշինական նոր ռազմավարության (City Development Strategy) մշակման անհրաժեշտություն,

3. Երևան քաղաքում կիրառվող տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) փաստաթղթերի համակարգը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի և մշակված նախագծերի գործող համակարգի վերանայմամբ, գոտևորման նոր սկզբունքներն ընդունելով, Երևան քաղաքի միասնական գոտևորման հատակագծի կազմում /զոննինգ/ ծագած խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջնահերթ մշակման գոտիներ առանձնացնելու սկզբունքով,

4. Երևանի Գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հեռանկարով,

5. Գոտևորման նախագծերի մշակում,

6. Երևանի քաղաքաշինական կադաստրի համակարգի ձևավորման անհրաժեշտություն,

7. Երևան քաղաքի տրանսպորտի, ճանապարհափողոցային ցանցի, դրա հետ անմիջական կապ ունեցող ենթակառուցվածքների հետ կապված խնդիրների վերհանում և ճանապարհափողոցային ցանցի համալիր սխեմայի մշակում,

8. Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030 թվականը զարգացման համալիր սխեմայի մշակում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

9. Քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ հանրային լայն քննարկումների և հասարակական հարցումների իրականացում,

10. Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառի ծրագրերում ընգրկված թեմաների վերաբերյալ հայեցակարգային մրցույթների կազմակերպում: Դա կհանդիսանա մրցութային պրակտիկայի ինտեգրման մոդել քաղաքաշինական գործունեության համակարգում՝ քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտում մրցութային մեթոդով պատասխանատու որոշումների (նաև ոլորտի մասով համայնքային բյուջեի ձևավորման համար) ընդունման արդյունավետության բարձրացման նպատակով,

11. Վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղերի անբավարարություն,

12. Ստորգետնյա անցումների պատշաճ տեսքի և անվտանգության ապահովման անհրաժեշտ մակարդակի բացակայություն,

13. Քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերբնակեցման հիմնախնդրի առկայություն,

14. Քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով համայնք-մասնավոր հատված համագործակցության զարգացմանն ուղղված քայլերի իրականացման անհրաժեշտություն,

15. Երևանի ներդրումային վարկանիշի ձևավորմանն ուղղությամբ աշխատանքներ՝ Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցմանն ուղղությամբ ծրագրային աշխատանքներ,

16. Երևան քաղաքի առանձին հատվածների կառուցապատման հատակագծերի և վերակառուցման քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի մշակում,

17. Երևան քաղաքում անավարտ, չիրացված, փաստացի չօգտագործվող, անբարեկարգ և նմանատիպ անշարժ գույքերի պատշաճ օգտագործումը ապահովելու նպատակով, ընդհուպ՝ նշված գույքերի մասով հանրային գերակա շահ ճանաչելու և ներդրումային այլ ծրագրերում օգտագործելու գործընթաց,

18. Երևան քաղաքի վարչատարածքային սահմանների, Երևանի քաղաքամերձ գոտու տարածքների հատակագծային կազմակերպման՝ քաղաք մտնող մայրուղիների կանոնակարգմանն ուղղված աշխատանքներ Երևան քաղաքին հարակից համայնքների հետ,

19. Երևան քաղաքի վարչատարածքային սահմաններում առկա գերեզմանների տարածքների, նաև նոր գերեզմանատների հնարավոր տեղակայման վայրերի առանձնացման, դրանց սահմանների, համապատասխան սանիտարական պաշտպանիչ գոտիների ստեղծման և հարակից տարածքներում կառուցապատումների նկատմամբ հատուկ ռեժիմներ սահմանելու հետ կապված խնդիրներ,

20. Երևանի զբոսաշրջության զարգացմանն ուղղված քաղաքաշինական միջոցառումների կազմակերպման անհրաժեշտություն:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով,
2. Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում,
3. Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

4. Երևանի քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծի լրամշակում
5. Արամ Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցները իրար միացնող ճանապարհատվածի և ինժինեռական ենթակառուցվածքների կառուցում,
6. Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքներ «Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր», «Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», «Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»,
7. Երևան քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի (Կորի փողոցի մոտ՝ Կրիվոյ թաղամաս) բնակելի, հասարակական, հյուրանոցային համալիրի շինարարության կառուցապատման ներդրումային ծրագիր,
8. Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Բաբաջանյան-Աշտարակ և Արզավանդ-Շիրակ ճանապարհահատվածներ),
9. Ծովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ճանապարհահատվածի նախագծում,
10. Երևանի էներգաարդյունավետության ծրագիր
11. Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասի Հալաբյան փողոցի մոտ մետրոպոլիտենի նոր կայարանի և դրան կից բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով, բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի իրականացման ներդրումային ծրագիր,
12. Երևան քաղաքի Նոր-Նորքի զանգվածը կենտրոն վարչական շրջանի հետ կապող տրանսպորտային միջոցի նոր (բազմամոդուլ) ճոպանոդուլ՝ ստեղծման ներդրումային ծրագիր,
13. Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային ցանցի և ինժինեռական ենթակառուցվածքների կառուցում,
14. Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագիր,
15. Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի էսքիզային առաջարկ «Մասուցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Սուրմալու տոնավաճառի հարևանությամբ:

1. «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտման նախագծի մշակում՝ մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծի մեջ քաղաքի զարգացման նոր ուղղությունների ընդգրկումը, գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացումը, քանի որ գլխավոր հատակագծի իրագործման ժամկետն ավարտվում է 2020թ.:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ՝ Երևանի 2005-2020թթ. Գլխավոր հատակագծի իրագործման գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացում, Երևանի մինչև 2030թ. քաղաքաշինական զարգացման հիմնական

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>ուղղությունների հստակեցում, Քաղաքի համաչափ զարգացման ուղղությունները, Կայուն զարգացման «ՌԻՕ+20» զագաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ և կանաչ ճարտարապետություն» միջոցառումների պլանավորում, Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորմանն ուղղված օրենքով նախատեսվելիք միջոցառումներ, Երևանի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030թ. զարգացման հիմնական ուղղությունները և այլ:</p>
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2021-2022թթ.

2. «Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագծի մշակում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է մշակել Երևանի Նուբարաշեն վարչական շրջանի գոտևորման նախագիծը, որը քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ է, և որով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով: Նախագծային տարածքը՝ 1 724,0 հա:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախագիծը տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագիծը բաղկացած է գրաֆիկական և տեքստային մասերից: Նախագծման քաղաքաշինական առաջադրանքը հաստատվել է Երևանի ավագանու N244-Ս առ 24.06.2020թ. որոշմամբ:
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման համապատասխան մարմիններ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, քաղաքաշինական գործունեության սուբյեկտներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման	2021թ.

Ժամակակացույց	
---------------	--

3. «Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծերի մշակում»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է մշակել Երևանի Ծովակալ Իսակովի պողոտա-Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքի (Պասկևիչի բլուրից հարավ) գոտևորման և կառուցապատման էսքիզային նախագծեր, տվյալ գոտիներում միջավայրի կազմակերպման նպատակով: Նախատեսված է Երևանի 2020թ. զարգացման ծրագրով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Իսակով - Արշակունյաց պողոտա նախագծային մայրուղուն հարող տարածքը՝ մոտ 64 հա:
Համագործակցություն	ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտե
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտե, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2021թ.

4. «Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագծի լրամշակում»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է լրամշակել 2011թ. հաստատված Երևան քաղաքի պատմամշակութային հիմնավորման և հուշարձանների պահպանական գոտիների նախագիծը: Առաջարկվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով նախագծի շրջանակներում: Նախատեսված է Երևանի գլխավոր հատակագծի մինչև 2030 թվականը զարգացման հեռանկարով նախագծի մշակման առաջադրանքում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նախագծի լրամշակումը նախատեսում է մշակված նախագծի ամբողջական վերանայումը՝ հուշարձանների ցանկի, այդ թվում նորահայտ, փաստացի կատարված փոփոխությունների արդյունքում: Նախագծի առաջադրանքը կներկայացվի ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների կողմից:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Համագործակցություն	ՀՀ ԿԳՄՄ նախարարություն, ՀՀ ԿԱ քաղաքաշինության կոմիտե
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացություն	2021-2022թթ.

5. «Արամ Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցները իրար միացնող ճանապարհատվածի և ինժինեռական ենթակառուցվածքների կառուցում»

Ծրագրի նպատակը	Իրար միացնել Ա.Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցները, ինչպես նաև կառուցել ինժինեռական ենթակառուցվածքներ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նախատեսվող ավտոճանապարհը, որի երկարությունը կկազմի 265 մ և կթեթևացնի Կոմիտասի պողոտայի ծանրաբեռնված երթևեկությունը զուգահեռ տրանսպորտային հաղորդակցուղով: Կառուցման համար անհրաժեշտ կլինի իրականացնել գույքերի օտարման աշխատանքներ, հիմնականում ավտոտնակներ:
Համագործակցություն	Երևան համայնք, համայնքի բնակիչներ
Ծրագրի հիմնական շահառուները	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբը և ավարտ, իրականացման ժամանակացություն	Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական: Երևանի քաղաքապետի 2020թ. հունիսի 22-ի հ. 1900-Ա որոշմամբ <<ԵԿՆ ԾԻԳ>> ՀՈԱԿ-ը լիազորվել է հանդես գալու պատվիրատուի անունից՝ ավտոճանապարհի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի լրամշակման և վերաթողարկման, ինչպես նաև կառուցման աշխատանքները իրականացնելու նպատակով

6. «Երևան քաղաքում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքներ «Հին Երևան պատմաճարտարապետական միջավայր», «Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», «Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի կենտրոնում գոյություն ունեցող բնակելի խարխուլ ֆոնդի վերացում, բնակչության կենսամիջավայրի, բնակարանային պայմանների բարելավում, թաղամասերի կապիտալ վերակառուցում՝ ինժինեռական հաղորդակցուղիների բարելավում: 1. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում, 2. «Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում», 3. «Կոնդ թաղամասի վերակառուցման ծրագիր»:
Ծրագրի համառոտ	1.Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն Գլխավոր պողոտայի՝

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

<p>նկարագրություն</p>	<p>Փ. Բուզանդ, Եզ. Կողբացու, Արամի փողոցներով պարփակված տարածքում նախատեսվում է իրականացնել «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրը և հնարավորություն է ստեղծվում կորցված և քանդված պատմության և մշակույթի հուշարձանների տեղափոխման եղանակով տարածքում վերստեղծել քաղաքաշինական գեղագիտական միջավայր:</p> <p>2.Տարածքը կհանդիսանա որպես ճարտարապետական մեկ համալիր՝ պահպանելով ներդաշնակ կառուցապատում, ժամանակակից պահանջներին համապատասխան փողոցներ և մայրեր, ինչպես նաև տարածքում առկա բնակարանային ֆոնդին մի քանի անգամ գերազանցող նոր բնակարանային ֆոնդի կառուցում, կառուցվող նոր փողոցները կստեղծեն այլընտրանքային երթևեկության ճանապարհներ, ինչպես նաև կառուցվող ստորգետնյա ավտոկայանատեղերը հնարավորություն կընձեռեն նվազեցնելու Երևան քաղաքի կենտրոնում փողոցների ծանրաբեռնվածությունը: Բացի այդ հիմնովին նորացվելու են ինժեներատեխնիկական ենթակառուցվածքները, որոնք այժմ գտնվում են անբավարար վիճակում:</p> <p>3.Կոնդ թաղամասում նախնական ուսումնասիրությունների համաձայն առկա է մոտ իրացման ենթակա 130.000 քմ մակերեսով երրորդ անձանց պատկանող հողամաս, որը ծանրաբեռնված է իրացման ենթակա մոտ 68.000 քմ մակերեսով շինություններով: Նշված տարածքի նկատմամբ գերակա հանրային շահ ճանաչելու արդյունքում հնարավոր կլինի մասնավոր միջոցների հաշվին տարածքն ազատել, ինչի արդյունքում նոր հնարավորություն կստեղծվի իրականացնել խորհրդանշական և պատմական նշանակություն ունեցող թաղամասի ստեղծում: Իրացման աշխատանքներ նախատեսվում է իրականացնել 5 տարվա ընթացքում, ֆինանսական միջոցների առկայության դեպքում նաև ավելի շուտ:</p>
<p>Համագործակցություն</p>	<p>1. «Ի ԷՄ ՄԻ» ՓԲԸ, «Սերգե Ագոսիզ Դեր Սահագույան» ՍՊԸ, «Սթարլայն» ՍՊԸ, 2.«Սիթի Սենթի Դիվելոպմենթ» ՓԲԸ և ընկերությունից առանձնացման եղանակով ստեղծված 17 ընկերություն, 3. Մասնավոր ներդրողներ:</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Քաղաքացի, ներդրողներ և Երևանի քաղաքապետարան</p>
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</p>	<p>1.Համաձայն ՀՀ Կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի հ. 1528-Ն որոշման Գույքերի օտարման աշխատանքներ մինչև 2020թ. հունվարի 1-ը Քաղաքաշինական ծրագրի ավարտ 2024թ. մայիսի 15-ը ՀՀ փոխվարչապետի 09.09.2020թ. N547-Ն որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, 2. Համաձայն ՀՀ Կառավարության 22.03.2018թ. հ.332-Ն որոշման</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>Գույքերի օտարման աշխատանքներ մինչև 2023թ. հունվարի 1-ը Քաղաքաշինական ծրագրի ավարտ 2024թ. դեկտեմբերի 31 ՀՀ փոխվարչապետի 09.05.2020թ. N249-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ, 3.Կոնդում ներկայումս իրականացվում է տարածքի ուսումնասիրություն, առկա գույքային այլ խնդիրների լուծման աշխատանքներ: Դրանք արդյունավետ կազմակերպելու նպատակով կայացվել է Երևանի քաղաքապետի 12.07.19թ. Կոնդ թաղամասի նախատեսվող վերակառուցման, կառուցապատման աշխատանքների հետ կապված խնդիրների լուծման հանձնաժողով ստեղծելու մասին հ.695-Ա կարգադրություն և ՀՀ փոխվարչապետի 01.09.2020թ. N516-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ:</p>
--	---

7. «Երևան քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի (Կորի փողոցի մոտ՝ Կրիվոյ թաղամաս) բնակելի, հասարակական, հյուրանոցային համալիրի շինարարության կառուցապատման ներդրումային ծրագիր»

<p>Ծրագրի նպատակը</p>	<p>Երևան քաղաքի կետրոնում գոյություն ունեցող խարխուլ բնակելի ֆոնդի վերացման և վերակառուցման ուղղությամբ ծրագրային աշխատանքների իրականացմանն ուղղված քայլեր՝ Տարածքի կառուցապատման արդյունքում նախատեսվում է ունենալ համաքաղաքային նշանակության ժամանակակից չափորոշիչներին համապատասխանող բազմաֆունկցիոնալ համալիր, որը կներառի հասարակական օբյեկտներ, գործարար և առևտրի կենտրոններ, հյուրանոցային, մարզական համալիր, ավտոկայանատեղիներ, բնակելի շենքեր, կանաչ գոտիներ:</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրությունը</p>	<p>Սույն ներդրումային առաջարկը մշակվել էր որպես ուղեցույց հնարավոր ներդրողների/կառուցապատողների համար, և իր մեջ ներկայացված թվերն ու հաշվարկները մոտավոր են, ուստի պետք է ընկալվեն լոկ իբրև ուղենիշ: Դիմող ներդրողը/կառուցապատողը ծրագրի իրագործումը ստանձնելիս, ազատ է կատարել իր սեփական հետազոտությունն ու ինքնուրույն հաշվարկները: Սույն Ծրագրի մեջ նշված նախագծային հիմնական չափորոշիչները փոփոխման ենթակա են կապված Երևան քաղաքի համար քաղաքաշինական նոր ռազմավարություն մշակվելու արդյունքների հետ համատեղելիս՝ հնարավոր մրցույթների կազմակերպման միջոցով: Երևան քաղաքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցուն և Երվանդ Քոչարի փողոցին հարող տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 3,7 հա: Նշված տարածքը պայմանականորեն բաժանված է 3 լոտերի (13 650, 13 031 և 10 245 քմ): Ներկա պահին տարածքում գտնվում են բազմաթիվ հին բնակելի շինություններ, որոնք հանրության գերակա շահերի ապահովման</p>

	<p>նպատակով նախատեսվում է օտարել և տարածքը վերակառուցել:</p> <p>Ներդրողի/կառուցապատողի հետ մտադրությունների մասին հուշագրի ստորագրման հիման վրա քաղաքապետարանը կարող է ներդրողի պատվերով կազմակերպել օտարվող հողամասերի և շենք/շինությունների գնահատման գործընթացը, ի վերջո հանձնելով կառուցապատողին ազատ շինարարական հրապարակը: Նշված տարածքում առաջարկվում է կառուցել՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Ստորգետնյա ավտոկայանատեղի ընդհանուր՝ 41 630 քմ մակերեսով, 2. Առևտրային տարածքներ ընդհանուր՝ 9 760 քմ մակերեսով, 3. Հասարակական տարածք ընդհանուր՝ 2450 քմ մակերեսով, 4. Մանկապարտեզ կամ այլ մանկական նախադպրոցական կրթության տարածքը նդհանուր՝ 1 750 քմ մակերեսով, 5. Գրասենյակային տարածքներ՝ 6 330 քմ մակերեսով, 6. Բնակելի տարածքներ՝ 58 020 քմ մակերեսով, 7. Հյուրանոց՝ 15 600 քմ մակերեսով: <p>Նախատեսվող շինարարական և կառուցապատման աշխատանքների ընդհանուր մակերեսը կազմում է 135 540 քմ:</p> <p>1. Բնակելի շենքերի կառուցում</p> <p>Տվյալ տարածքում նախատեսվում է կառուցել 13 մասնաշենք, որից 11 շինություն նախատեսված է իբրև բնակելի շենքեր: Շենքերի հարկայնությունը՝ 5-15 հարկանի (58 020 քմ ընդհանուր մակերեսով), 13 մասնաշենքերի 1-ից 3-րդ հարկերում ներառված կլինեն ավտոկայանատեղիներ, ընդհանուր 971 մեքենաների համար: Նախատեսվում են նոր բնակելի շենքերին հարող բակային կանաչապատ տարածքներ, խաղահրապարակներ և մանկակական զբոսայգիներ: Բնակելի շենքերի առաջին հարկերում և հարակից տարածքներում միաժամանակ նախատեսվում է բիզնես կենտրոնների, սպասարկման սրահների, սրճարանների և ռեստորանների կառուցում:</p> <p>2. Գործարար-առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրների կառուցում</p> <p>Նախատեսվում է տարածքում ստեղծել գործարար-առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրներ, որոնք իրենց մեջ ներառելու են՝ գործարար-առևտրային և հասարակական տարածքներ, գրասենյակային տարածքներ:</p> <p>Գործարար-առևտրային և ժամանցի բազմաֆունկցիոնալ համալիրների կառուցման համար նախատեսված է (18 540 քմ ընդհանուր մակերես):</p> <p>3. Մանկապարտեզի կամ այլ մանկական նախադպրոցական կրթության տարածք</p> <p>Նախատեսվում է տարածքում ստեղծել ժամանակակից չափորոշիչներին համապատասխան մանկապարտեզ, մանկական և երիտասարդական ուսումնական կենտրոն: Նախատեսվում է մանկապարտեզի և այլ</p>
--	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	մանկական նախադպրոցական կրթության տարածքի համար տրամադրել 1.750 քմ ընդհանուր մակերես: 4. Հյուրանոցային համալիրի կառուցում Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 14 հարկանի հյուրանոցային համալիրի կառուցում, որը իր մեջ կներառի 3 հարկանի ստորգետնյա ավտոկայանատեղի: Հյուրանոցային համալիրի ընդհանուր մակերեսը կկազմի 15 600 քմ:
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ՝ Կադաստրի կոմիտե, քաղաքաշինության կոմիտե, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ և այլն
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք և տվյալ վերակառուցվող թաղամասի բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի տևողությունը 5 տարի: Ծրագրի սկիզբը 2019 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավման տեմպերից մինչև 2023 թվական:

8. «Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի կառուցում (Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածներ)»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է կառուցել Երևանի արևմտյան օղակաձև ճանապարհի երկու ճանապարհահատվածները՝ Բաբաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատված – 9.4 կմ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված – 2.7 կմ
Համագործակցություն	Ասիական զարգացման բանկ, ՀՀ կառավարություն
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնք, Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2017 թվականի դեկտեմբերի 11-ին կնքվել է Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր, որը նախատեսվում է ավարտել 2021 թվականին: 2019 թվականի հուլիսի 16-ին կնքվել է Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիր, որը նախատեսվում է ավարտել 2021 թվականին:

9. «Օովակալ Իսակովի պողոտան Արշակունյաց պողոտային միացնող ճանապարհահատվածի նախագծում»

Ծրագրի նպատակը	Ճանապարհահատվածի նախագծում
Ծրագրի համառոտ	Ճանապարհահատվածը հանդիսանում է Լենինգրադյան փողոց–Օովակալ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

նկարագրություն	Իսակովի պողոտա կառուցված ավտոմայրուղու (Մոնթե Մելքոնյան) շարունակությունը, որն անցնելով նախատեսվող «Երևանի-Բերդ» նախագծային թաղամասի եզրով և Հրազդան գետի վրայով՝ միանում է Արշակունյաց պողոտային: Նախագծով նախատեսված է լրացնել Իսակով պողոտայի հանգույցի թևերը, որով կապահովվի երթևեկության ուղղությունների բոլոր կապերը: Մայրուղու երկու հատվածների ամբողջականությունը հանդիսանում է մայրաքաղաքի կենտրոնի երթևեկության բեռնաթափման տարանցիկ լուծումներից մեկը:
Համագործակցություն	ԱԶԲ վարկային միջոցներ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացի, Երևանի քաղաքապետարան
Նախագծի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի նախագծի և համապատասխան մրցութային փաստաթղթերի պատրաստման համար Երևանի քաղաքապետարանի և Էջիս Ինթերնեյշնլ ընկերության միջև 2020 թվականին կնքվել է համապատասխան պայմանագրի փոփոխություն, որի շրջանակներում Էջիս Ինթերնեյշնլ ընկերությունը ներկայումս մշակում է վերջնական նախագիծ և մրցութային փաստաթղթեր: Նախատեսվում է, որ ամբողջական փաթեթը պատրաստ կլինի 2020 թվականի ավարտին:

10. «Երևանի էներգաարդյունավետության ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նախատեսվում է Երևանի 48 մանկապարտեզներում իրականացնել էներգաարդյունավետության մեծացման ուղղված միջոցառումներ, ինչպես նաև իրականացնել սեյսմիկ զինվածության մակարդակի բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	15 մանկապարտեզներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. <ul style="list-style-type: none"> • առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, • տեղադրել օդափոխման համակարգ, • փոխել ջուր/կոյուղու համակարգը, • վերակառուցել ջեռուցման համակարգը կամ տեղադրել նոր համակարգ, • փոխել էլեկտրահաղորդման գծերը, • տեղադրել արևային պանելներ, • իրականացնել սեյսմիկ ամրացում: Այլ մանկապարտեզներում նախատեսված է իրականացնել հորիզոնական միջոցառումներ: Այս մանկապարտեզների քանակը ճշտվում է:
Համագործակցություն	ԵՆԲ, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերություն (E5P), Կանաչ կլիմայի հիմնադրամ:
Ծրագրի	Երևանհամայնք

հիմնական շահառուները	
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	2020 թվականի սեպտեմբերի 25-ին Երևանի քաղաքապետարանի և «Արփա-Սևան» ԲԲԸ և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ ՀԶ-ի միջև: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2023 թվականին:

11. «Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասի Հալաբյան փողոցի մոտ մետրոպոլիտենի նոր կայարանի և դրան կից բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով, բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի իրականացման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի զարգացմամբ քաղաքի շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման ապահովում, կենտրոնի տրանսպորտային հոսքերի անազել կազմակերպման համար բեռնաթափում, նաև քաղաքի վարչական շրջանների համաչափ զարգացման համար կարևոր խթան, դրանց գրավչության բարձրացմանն ուղղված քայլ, հնարավորինս ժամանակի կորստի կրճատմամբ շրջանները միմյանց կապող հնարավորություն:
Ծրագրի համառոտ և նկարագրությունը	Ծրագրի մեջ ներկայացված թվերն ու հաշվարկները մոտավոր են, նշված նախագծային հիմնական չափորոշիչները փոփոխման ենթակա են կապված Երևան քաղաքի համար քաղաքաշինական նոր ռազմավարություն մշակվելու արդյունքների հետ համատեղելիս՝ հնարավոր մրցույթների կազմակերպման միջոցով: Մետրոպոլիտենի համակարգի ընդլանմամբ՝ նոր զարգացման սխեմայի կազմում: Ցանցը կտարածվի դեպի քաղաքի հյուսիս-արևմտյան հատված՝ Աջափնյակ վարչական շրջան և կմեկնարկի դրա շինարարության առաջին փուլի աշխատանքները: Արաբկիր համայնքից այն կապվելու է Աջափնյակ համայնքի հետ Հալաբյան-Աբեյան փողոցների խաչմերուկի մոտ: Նոր կայարանի ավելացումն առավել արդյունավետ կդարձնի մետրոյի աշխատանքը: Դեպի Աջափնյակ ուղեգիծ կառուցելու դեպքում կշահագործվի փորված թունելներից մեկը, որը Մերգեյան ինստիտուտից տանում է դեպի Հրազդանի ձախ ափ: Երևանի մետրոպոլիտենի կառուցվող կայարանը պետք է միանա այժմ գործող վերջին՝ «Բարեկամություն» կայարանին: Հալաբյան-Աբեյան փողոցների խաչմերուկի մոտ Թումոյի տարածքի հարևանությամբ գտնվող տարածքում կայարանի հետ նախատեսվում է կից բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներով, ստորգետնյա ավտոկայանատեղով, բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի կառուցում՝

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>Բազմաֆունկցիոնալ բարձրահարկ կառույցներ Կառույցների մակերեսները և հարկայնությունը 1. 1340քմ x 28 հարկ = 37520 քմ 2. 1300 քմ x 13 հարկ = 16900 քմ</p> <p>Ստորգետնյա ավտոկայանատեղի 11680 քմ - մոտ 600 ավտոմեքենա Վերգետնյա ավտոկայանատեղի - 2000քմ -մոտ 100 ավտոմեքենա</p> <p>3.Բազմաֆունկցիոնալ հասարակական համալիրի 49000 քմ (չի ներառում կայանատեղիների մակերեսը)</p>
Համագործակցություն	Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքը և բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի սկիզբը 2020-2021 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից:

12. «Երևան քաղաքի Նոր Նորքի գանգվածը կենտրոն վարչական շրջանի հետ կապող տրանսպորտային միջոցի նոր (բազմամոդուլ) ճոպանոդու՝ ստեղծման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի արդիականացման՝ էլեկտրականությամբ աշխատող միջոցների կիրառմամբ այլընտրանքային տրանսպորտի ձևերի ներմուծման ռազմավարությանն ուղղված, տրանսպորտային հոսքերի բեռնաթափման, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացման նպատակով նոր (բազմամոդուլ) ճոպանոդու ներդրման միջոցով քաղաքի համայնքների միջև լրացուցիչ օդային կապի ստեղծում, քայլ դեպի կանաչ քաղաք, միաժամանակ զբոսաշրջային գրավչության բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	<p>Ծրագրի մեջ ներկայացված առաջարկները նախնական են, մոտավոր, դրանք փոփոխման ենթակա են կապված Երևան քաղաքի համար քաղաքաշինական նոր ռազմավարություն մշակվելու արդյունքների հետ համատեղելիս՝ հնարավոր մրցույթների կազմակերպման միջոցով:</p> <p>Նոր Նորքի գանգվածը քաղաքի կենտրոնի հետ կապվելու է բազմամոդուլ ճոպանոդու միջոցով: Այն կունենա կայարաններ:</p>
Համագործակցություն	ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ:
Ծրագրի հիմնական շահառուները	Երևան համայնքի բնակիչներ, մայրաքաղաքի հյուրեր և զբոսաշրջիկներ, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց	Ծրագրի սկիզբը 2020-2021 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից:
---	--

13.«Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ հատվածի ճանապարհային ցանցի և ինժինեռական ենթակառուցվածքների կառուցում»

Ծրագրի նպատակը	Թաղամասի կառուցապատման կանոնակարգման համար Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի ներթաղամասային և մայրուղային փողոցների և ինժինեռական ենթակառուցվածքների կառուցում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Մալաթիա-Սեբաստիա, Լենինգրադյան փողոցի և «Նոյ» թաղամասի միջանկյալ տարածքի բնակելի և հասարակական կառուցապատման, ճանապարհային և ինժինեռական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, կապ, տնտեսական-կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում, արտաքին լուսավորություն) նախագծանախահաշվային փաստթղթերի կազմման, փորձաքննության եզրակացության տրամադրան աշխատանքներ և շինարարության իրականացում:
Համագործակցություն	Մասնավոր ներդրում
Ծրագրի հիմնական շահառուները	Կառուցապատողներ և Երևանի քաղաքապետարան
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Թվական

14.«Երևան քաղաքի Կասկադ համալիրի տարածքում թանգարանի և հարակից հատվածի կառուցապատման ներդրումային ծրագիր»

Ծրագրի նպատակը	Կասկադ ճարտարապետական-կոթողային համալիրը հասցնել ավարտուն տեսքի: Կասկադ-համալիրի նախահեղինակը ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն է, նրա նպատակն էր քաղաքի հյուսիսային և կենտրոնական հատվածները միմյանց կապել՝ քաղաքի պատմականորեն բնակելի և մշակութային կենտրոնները ջրվեժների ու պարտեզների հսկայական կանաչ տարածքով: Այդ գաղափարը մոռացության է տրվել, հետագայում ճարտարապետ Ջիմ Թորոպյանի կողմից կյանքի է կոչվել նոր գաղափարներով խորհրդային տարիներին, որի շինարարությունը ընդհատվել է երկրաշարժի տարիներին: Ամերիկահայ գործարար, բարերար Ջերարդ Գաֆէսճեանը համագործակցելով Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարության հետ նախաձեռնել է համալիրի վերականգնումը և հիմնվել է Գաֆէսճեան արվեստի
----------------	---

	<p>կենտրոնը /2002-2009թթ/:</p> <p>Այն ներկայացնում է ցուցադրություններ և բազմազան կրթական, մշակութային և համերգային ծրագրեր և միջոցառումներ բոլոր տարիքային խմբերի համար: Համալիրն ամբողջական տեսքի բերելու անհրաժեշտություն</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրությունը</p>	<p>Ծրագրի մեջ ներկայացված առաջարկները նախնական են, մոտավոր, դրանք փոփոխման ենթակա են կապված Երևան քաղաքի համար քաղաքաշինական նոր ռազմավարություն մշակվելու արդյունքների հետ համատեղելիս՝ հնարավոր մրցույթների կազմակերպման միջոցով:</p> <p>Համալիրի ներկա վիճակի նկարագրություն՝ Այս համալիրը աստիճանավոր անցումների, շատրվանների ու ծաղկանոցների մի համակարգ է, որը Երևանի կենտրոնը միացնում է Հաղթանակի զբոսայգու հետ: Այն ունի հինգ մակարդակ, որոնցից յուրաքանչյուրում տեղադրված են համաշխարհային ճանաչում ունեցող քանդակագործների աշխատանքները, խաչքարեր և հարթաքանդակներ: Ամենավերևում բացվում է հիասքանչ տեսարան՝ Երևանի համայնապատկերը, որտեղից երևում է քաղաքն ամբողջությամբ: Համալիրի վերևում է գտնվում Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի հուշարձանը, իսկ ներքևում Ալեքսանդր Թամանյանի արձանն է:</p> <p>Նախատեսվում է Կասկադ համալիրը բերել ամբողջական տեսքի, նաև լանդշաֆտի կազմակերպման միջոցով այն բարեկարգել, կանաչապատել և այդպիսով դարձնել առավել ակտիվ հանրային գոտի, դրան հաղողելով նաև զբոսաշրջային գրավչություն, հաշվի առնելով առկա տեղանքը, շրջապատն ու բացվող տեսարանները, ամրապնդել ու ընդգծել հիմնական ժառանգված քաղաքաշինական սկզբունքները, որպես քաղաքի կենտրոնի հատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական առանցի վրա առկա դոմինանտային և վայր, և կառույց, Երևանի ճարտարապետական համալիրների, հրապարակների, կանաչ ու ջրային տարածքների համակարգի հիմնական բաղկացուցիչ մաս:</p> <p>Այդ նպատակով մշակվել են առաջարկներ՝</p> <p>1.Կասադի վերակառուցման համար Գաֆեսջյան հիմնադրամի պատվերով «David Hotson Architects»-ի կողմից առաջարկը առկա է, որը անհրաժեշտության դեպքում կներկայացվի:</p> <p>Նախատեսվել է նոր մշակութային և հանգստի տարածքների ստեղծմամբ հանրային գոտիների ընդլայնում նաև կոմերցիոն հատվածների ներմուծում: Կապերը կիրականացվեն աստիճաններով և շարժասանդուղիներով:</p> <p>2.«Կասկադի վերնամասում թանգարանի ընդլայնման և 2000 տեղով համերգային դահլիճի էսքիզային առաջարկ»-ը /առկա է ալբոմը/: «Տարբերակ» ճարտարապետական արվեստանոցի նախագծային խմբի կողմից առաջարկվում է՝</p> <p>Նախագծի նկարագրություն</p> <p>Հիմնական գաղափարն այն է, որպեսզի մարդը կասկադով տեղաշարժվելիս հանգիստ ճեմելու հնարավորություն ունենա, մինչդեռ ներկա պահին մարդը</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>աստիճաններով միապաղաղ տեղաշարժվում է՝ առանց շեղվելու հիմնական առանցքից, որը բավականին հոգնեցուցիչ է: Փորձել է արվել ստեղծել նոր առանցքներ՝ առաջացնելով նոր դիտակետեր: Թեքահարթակների միջոցով առաջացել է ավելի հանգիստ տեղաշարժվելու, ճեմելու հնարավորություն: Շինությունն ունի երեք մակարդակ: Ստորին հարկերում տեղակայված է համերգասրահ 2000 հանդիսատեսի համար, որն ունի երեք մուտք (դիտահարթակի վրայից, Սարալանջի փողոցի կողմից, Կասկադի աստիճանների և շարժասանդուղքների վրայից): Երկրորդ մակարդակում՝ ուղղանկյուն ծավալների մեջ շարունակվում է թանգարանը, իսկ վերին մասում՝ զիգագազան ճեմուղին է, որը կասկադի աստիճանները կապում է գոյություն ունեցող դիտահարթակի հետ: Չախ հատվածում կասկադի գոյություն ունեցող աստիճանները և ստորգետնյա շարժասանդուղքները շարունակվում են մինչև վերևի դիտահարթակ, տալով հնարավորություն ավելի արագ տեղաշարժվել:</p>
<p>Համագործակցություն</p>	<p>Գաֆեւճեան արվեստի կենտրոն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ:</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Երևան համայնք, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ, Երևան համայնքի բնակիչներ, Երևան այցելող հյուրեր և զբոսաշրջիկներ, Գաֆեւճեան արվեստի կենտրոն:</p>
<p>Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց</p>	<p>Ծրագրի սկիզբը 2020-2021 թվականից սկսած շարունակական՝ կախված ներդրումների ներգրավվման տեմպերից:</p>

15. «Երևանի մետրոպոլիտենի նոր կայարանի էսքիզային առաջարկ «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» մետրոյի կայարանների միջև՝ Սուրմալու տոնավաճառի հարևանությամբ»

<p>Ծրագրի նպատակը</p>	<p>Երևանում էլեկտրական հասարակական տրանսպորտի, էկոլոգիապես մաքուր, անվտանգ տրանսպորտային միջոցի մետրոպոլիտենի գոյություն ունեցող ցանցի զարգացման ավտերնատիվ հնարավորություն:</p> <p>Էսքիզային նախագիծը ենթադրում է «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» կանգառների միջև հեռավորության նվազեցում, տրանսպորտային խնդիրների թեթևացում, ավտոմեքենաների կրճատում, մարդկային հոսքերի կառավարում, հասանելիության հեշտացում, մետրոյի զարգացում, շրջակա միջավայրի տնտեսական էֆեկտ և շահութաբերություն:</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրությունը</p>	<p>Ծրագրի մեջ ներկայացված առաջարկները նախնական են, մոտավոր, դրանք փոփոխման ենթակա են կապված Երևան քաղաքի համար քաղաքաշինական նոր ռազմավարություն մշակվելու արդյունքների հետ համատեղելիս՝ հնարավոր մրցույթների կազմակերպման միջոցով:</p> <p>Նախագծվող կայարանը նախատեսվում է «Սասունցի Դավիթ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջնամասում, Փեթակ և Սուրմալու առևտրի</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>կենտրոնների հատվածում, որտեղ առկա է մարդկային և տրանսպորտային մեծ հոսքեր: Գոյություն ունեցող ցանցի օգտագործումը նոր կայարանի համար ապահովում է առաջարկի իրականացման մատչելիությունը: Նոր կայարանը իրենից ներկայացնում է թեթև, մեկ հարկանի շինություն, որն ինքն իրենով հանդիսանում է նաև ծածկ մետրոյի հարթակների համար: Շինության պարզ, ուղղանկյուն ֆորման կազմակերպված է տարբեր մեծության, ձևի և տարածական որակ ունեցող ծավալների հերթականությամբ, որոնք միմյանց կապված են նեղ կամուրջներով: Կանգառի նման կազմակերպման միջոցով գուգահեռներ են անցկացվում մետրոյի համակարգի հետ, ինչը իրենից ներկայացնում է տարբեր որակներ ունեցող կայարանների ցանց՝ բնորոշ քաղաքային տարբեր միջավայրերի, և դրանք միմյանց կապող թունելները: Կայարանի ծավալները հիմնավորվում են տարբեր կոմերցիոն և հասարակական ֆունկցիաներով: Կոմերցիոն օգտագործման միջոցով կայարանը կդառնա եկամտաբեր, ինչը պակաս կարևոր գործոն չէ նախագիծը կյանքի կոչելու համար: Դիտարկելով կայարանի սպասարահի միջավայրը, ուղևորների դիտակետից, ընկալվում է վերգետնյա շինության ծավալատարածական հորինվածքը:</p>
<p>Համագործակցություն</p>	<p>Երևանի մետրոպոլիտեն, ՀՀ պետական կառավարման մարմիններ, մասնավոր ներդրողներ:</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Երևան համայնքը և բնակիչները, ՀՀ պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները:</p>
<p>Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամակակացույց</p>	<p>Ծրագրի սկիզբը 2021 թվական սկսած շարունակական՝ կախված կազմվելիք ֆինանսական ծավալներից և ներդրումների ներգրավվման տեմպերից:</p>

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 40 մարզական կազմակերպություններ և «Երևանի սպորտ կոմիտե» ՀՈԱԿ-ը, որոնք առաջնորդվում են «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 1-ի № 1428-Ն և 2015 թվականի հուլիսի 16-ի № 789-Ն որոշումներով և ոլորտին առընչվող իրավական այլ ակտերով: Մարզական 41 կազմակերպություններում աշխատում են 871 աշխատակիցներ: Գործում են 36 մարզաձևերի ուսումնամարզական խմբեր, որոնցում ընդգրկված են 10.015 երեխաներ:

Երևան համայնքի կողմից յուրաքանչյուր տարի իրականացվում են 65 առողջարարական, զանգվածային, մարզական և երիտասարդական միջոցառումներ, որոնք միտված են ազգաբնակչության առողջ ապրելակերպի խթանմանը, մայրաքաղաքի ուժեղագույն մարզիկների բացահայտմանն ու հավաքական թիմերի ձևավորմանը:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Երևան քաղաքում գործում են մարզական միություններ, մարզական ակումբներ, լողավազաններ, մարզադաշտեր, թենիսի կորտեր, հրաձգարաններ, ստադիոններ, մարզադահլիճներ, նետաձգարան, աթլետիկական մանեժ, հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի ջրամբարներ, մարզամշակութային կենտրոններ, ձիարշավարան, բազմագործառության փոքր դաշտեր և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոցներ: Երևան համայնքի ենթակայությամբ գործում են 40 մարզադպրոցներ: Յուրաքանչյուր տարի անցկացվում են 35 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, առողջարարական, զանգվածային միջոցառումներ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 9 մարզաձևերից կազմված բակային փառատոն և ըմբշամարտի միջազգային մրցաշար:

2016 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանն իրականացնում է արտադպրոցական /մարզական/ կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման և շենք շինությունների նորոգման ծրագրեր:

41 մարզական կազմակերպություններից միայն երկուսն ունեն թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար:

Երիտասարդները Երևան համայնքի առավել դինամիկ հատվածն են, ուստի անհրաժեշտ է երիտասարդներին ներգրավել համայնքի կառավարման գործընթացում և նրանց մասնակից դարձնել քաղաքի ամենատարբեր խնդիրների լուծմանը՝ օգտագործելով երիտասարդների ստեղծարար և նորարարական գաղափարները՝ հաևուն համայնքի զարգացման:

Հիմնախնդիրներ

1. Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:

2. Ազգաբնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաններից՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիներից, լողավազաններից ու մարզադահլիճներից օգտվելու մատչելիության ապահովում:

3. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:

4. Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման անհրաժեշտություն:

5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն:

6. Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Երիտասարդները Երևան համայնքի առավել դինամիկ հատվածն են, ուստի անհրաժեշտ է երիտասարդներին ներգրավել համայնքի կառավարման գործընթացում և նրանց մասնակից դարձնել քաղաքի ամենատարբեր խնդիրների լուծմանը՝ օգտագործելով երիտասարդների ստեղծարար և նորարարական գաղափարները՝ հանուն համայնքի զարգացման:

Հիմնախնդիրներ

1. Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտություն:

2. Երիտասարդների աշխատանքային իրավունքների պաշտպանության ուղղությամբ արհմիությունների հետ համագործակցության հաստատման անհրաժեշտություն:

3. Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի աջակցման ու խրախուսման, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին համայնքի կառավարման գործընթացին մասնակցության մակարդակը բարձրացնելու անհրաժեշտություն:

4. Մայրաքաղաքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսման և համայնքում կամավորական մշակույթի խթանման անհրաժեշտություն:

5. Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակման անհրաժեշտություն:

6. Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, երիտասարդության ոլորտում Երևան համայնքի իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման և վերջիններիս իրականացման համար հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու անհրաժեշտություն:

7. Երևան համայնքի և հասարակական ու պետական կառույցների համագործակցության արդյունքում Երևանի երիտասարդական և մշակութային համայնքային կենտրոնների ստեղծման կամ առկա մշակութային կենտրոնների վերափոխման անհրաժեշտություն:

8. Երևան համայնքի երիտասարդների շրջանում իրենց կյանքի տարբեր ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ:

2021թ. նախատեսվող աշխատանքներ

1. Արտադպրոցական դաստիարակություն /մարզադպրոց/,
2. Սպորտային միջոցառումների կազմակերպում,
3. Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում,
4. «Աշխատանք երիտասարդներին» աշխատանքային տոնավաճառ
5. Երիտասարդական նորարար ծրագրերի ֆինանսավորում
6. Երևան համայնքի երիտասարդների կարիքների ուսումնասիրություն
7. Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում
8. Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում»

1. «Արտադարձական դաստիարակություն» /մարզադպրոց/

Ծրագրի նպատակը	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացում, զանգվածայնացում, ինչպես նաև արտադարձական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Արտադարձական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Երևանի ու Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:
Համագործակցություն	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում, բարձրակարգ մարզիկների պատրաստում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևան համայնքի պատանի մարզիկներ /երեխաներ/
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. դեկտեմբեր

2. «Սպորտային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Առողջ ապրելակերպի արմատավորում ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացում, մայրաքաղաքում տարբեր մարզաձևերի զանգվածայնացում և զարգացում, անհատ մարզիկների և թիմերի սպորտային վարպետության բարձրացում, ուժեղագույն թիմերի և մարզիկների ի հայտ բերում՝ ՀՀ առաջնություններին մասնակցելու և Երևանի ու հանրապետության հավաքական թիմերը համալրելու նպատակով, հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում հասարակությանը սպորտի միջոցով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Համաքաղաքային զանգվածային առողջարարական մարզական ու երիտասարդական 65 միջոցառումների կազմակերպում, 35 մարզաձևերից Երևան քաղաքի առաջնությունների անցկացում, Երևան քաղաքի հավաքական թիմերի ձևավորում ու հանրապետական և միջազգային մրցումներին ու մրցաշարերին հավաքականների մասնակցության ապահովում:
Համագործակցություն	ՀՀ այլ մարզերի համապատասխան ստորաբաժանումների, հասարակական կազմակերպությունների /ֆեդերացիաներ/, լիազոր մարմնի /ՀՀ սպորտի և

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	Երիտասարդության հարցերի նախարարություն/, Երևանի քույր քաղաքների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածայնացում և զարգացում, առողջության ամրապնդում ու պահպանում, մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Տարբեր տարիքային խմբերի մարզիկներ, հաշմանդամներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. դեկտեմբեր

3. «Արտադպրոցական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերում»

Ծրագրի նպատակը	Մարզական կազմակերպությունների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ և ժամանակակից մարզագույքով ապահովում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մարզական կազմակերպությունները ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և մարզագույքով ապահովում:
Համագործակցություն	ՀՀ-ում գրանցված շահագրգիռ կազմակերպություններ
Ծրագրի անմիջական նպատակը	Մարզական կազմակերպությունների աշխատանքների արդյունավետության բարձրացում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Մարզական կազմակերպություններ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. դեկտեմբեր

4. «Աշխատանք երիտասարդներին» աշխատանքային տոնավաճառ

Ծրագրի նպատակը	Երևան համայնքի երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան համայնքի երիտասարդների զբաղվածությունը խթանող «Աշխատանք երիտասարդներին» աշխատանքային տոնավաճառ միջոցառում: Միջոցառման ընթացքում Երևան համայնքում բնակվող երիտասարդները հնարավորություն կունենան միաժամանակ հանդիպել

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	առնվազն 50 գործատուի, մասնակցել առնվազն 5 կարողությունների զարգացման դասընթացների, կապեր հաստատել տարբեր գործատուների հետ և գտնել իրենց որակավորմանը համապատասխան աշխատանք:
Համագործակցություն	Զբաղվածության պետական գործակալության, Երևանի Զբաղվածության տարածքային կենտրոնների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկատիրությունների, բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդ կամավորների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Մայրաքաղաքի երիտասարդության զբաղվածության և տնտեսական մասնակցության խթանում, Երևան համայնքի երիտասարդների շրջանում գործազրկության նվազեցում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևան համայնքի երիտասարդներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. Մայիս

5. «Երիտասարդների նորարարական ծրագրերի ֆինանսավորում»

Ծրագրի նպատակը	Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի խրախուսում, համայնքի կառավարման գործընթացին երիտասարդական կազմակերպություններին և երիտասարդական նախաձեռնություններին մասնակցության մակարդակի բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան համայնքի խնդիրների լուծմանը միտված երիտասարդական կազմակերպությունների 10 նորարարական ծրագրերի ֆինանսավորում, որոնք ուղղված կլինեն Երևան համայնքի Երևանի զարգացման 2021 թվականի ծրագրի նախանշած խնդիրների լուծմանը՝ նորարարական լուծումների միջոցով:
Համագործակցություն	Հասարակական կազմակերպությունների, երիտասարդական կազմակերպությունների և կառույցների, երիտասարդ կամավորների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Քաղաքային կառավարման մեջ Երևան համայնքի երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների մասնակցության և ներգրվածման խրախուսում՝ քաղաքային հիմնախնդիրներին նորարարական լուծումներ տալու միջոցով:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևան համայնքի երիտասարդներ, Երևան համայնքում գործող երիտասարդական կազմակերպություններ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. Դեկտեմբեր
---	---

6. «Երևան համայնքի երիտասարդների կարիքների ուսումնասիրություն»

Ծրագրի նպատակը	Երևան համայնքի երիտասարդական քաղաքականության մշակում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երևան համայնքի երիտասարդների կարիքների ուսումնասիրություն և հետազոտության արդյունքների հիման վրա Երևան քաղաքի երիտասարդական քաղաքականության 5-ամյա ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակում: Երևանում բնակվող երիտասարդների, երիտասարդական կազմակերպությունների և փորձագետների շրջանում նախատեսվում է իրականացնել երիտասարդների կարիքների բացահայտմանն ուղղված հետազոտություն, ուսումնասիրելով Երևանում բնակվող երիտասարդների հիմնական սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական և այլ արդիական խնդիրները՝ ֆոկուս խմբային քննարկումների, ֆորձագետների հետ զրույցների, առկա հետազոտությունների ուսումնասիրման և ամփոփման միջոցով:
Համագործակցություն	Հասարակական կազմակերպությունների, բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդ կամավորների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Ձևակերպել Երևան համայնքի երիտասարդների հիմնական խնդիրները և դրանց լուծման հնարավոր ճանապարհները և ծրագրերը, որոնք կարող է իրականացնել Երևանի քաղաքապետարանը Երևան համայնքում: Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել Երևան քաղաքի երիտասարդական քաղաքականությունը, դրա իրականացման 5-ամյա ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևանի քաղաքապետարան, Երևան համայնքի երիտասարդներ, Երևան համայնքում գործող երիտասարդական կազմակերպություններ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվարից մինչև 2021թ. Դեկտեմբեր

7. «Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառումների կազմակերպում»

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի նպատակը	Երևան համայնքի հասարակական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդների մասնակցության մակարդակի բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Օգոստոսի 12-ին՝ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ տոնական համերգի և ցուցահանդեսի կազմակերպում մայրաքաղաքի որևէ կենտրոնական մարդաշատ զբոսայգում:
Համագործակցություն	Հասարակական կազմակերպությունների, բուհերի ուսանողական խորհուրդների, մարզային երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի երիտասարդների հասարակական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին մասնակցության խրախուսում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևան համայնքի երիտասարդներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունիսից մինչև 2021թ. Օգոստոս

8. «Կամավորների միջազգային օրվան նվիրված միջոցառման կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Երևանում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի խրախուսում և համայնքում կամավորական մշակույթի խթանում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կամավորների միջազգային օրվա կապակցությամբ Երևան համայնքի լավագույն կամավորների խրախուսում: Լավագույն կամավորների թեկնածուների ներկայացում Երևանում գործող ՀԿ-ների, հիմնադրամների, ԲՈՒՀ-երի և այլ կազմակերպությունների կողմից: Թեկնածությունների ընդունում, հայտերի գնահատում, մրցույթի անցկացում և 20-30 լավագույն կամավորներին պարգևատրում շնորհակալագրերով :

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Համագործակցություն	Հասարակական կազմակերպությունների, բուհերի ուսանողական խորհուրդների, երիտասարդական կառույցների, երիտասարդ կամավորների հետ:
Ծրագրի անմիջական նպատակը	Երևան համայնքում երիտասարդների շրջանում կամավորական աշխատանքի և կամավորության մշակույթի խթանում:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևան համայնքի երիտասարդներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. Մեկտեմբերից մինչև 2021թ. Դեկտեմբեր»

ԽԵՆԼԱՅԻ ԵՐԵՎԱՆ

Քաղաքային ենթակառուցվածքների կառավարման և ծառայությունների տրամադրման թվային տրանսֆորմացիան շարունակական պրոցես է և այն ենթադրում է մշտական քրտնաջան և նպատակաուղղված աշխատանք: Տվյալ պահին նպատակի ձևաչափը սահմանվում է 2019 թվականին ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի գրասենյակի աջակցությամբ մշակված քաղաքային տնտեսության ոլորտների թվային տրանսֆորմացիայի «ԽԵՆԼԱՅԻ ՔԱՂԱՔ» ռազմավարական ծրագիրով, որը հիմնական ուղենիշն է հանդիսանալու ներդրվող և բարելավվող համակարգերի, առաջնահերթությունների և դրանց կառուցվածքային սկզբունքների համար: Համաձայն այդ ռազմավարության՝ պետք է մեկ միջավայրում (BIG DATA) համատեղել և համադրել թվայնացված ոլորտներից կուտակվող առանցքային ցուցանիշ (KPI) հանդիսացող տվյալները՝ տարածական վերլուծությունների և որոշումների ընդունման պրոցեսին աջակցելու նպատակով:

Չնայած և 2020 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանը շարունակում էր տարեկան ծրագրով պլանավորված ոլորտների թվային տրանսֆորմացիայի աշխատանքները, այնուհանդերձ համաշխարհային գլոբալ զարգացումները և արտաքին գործոնները որոշակի շտկումներ են մտցնում այդ պլաններում:

1-ին գործոն. 2020 թվականի հոկտեմբերին սկիզբ առած լայնամասշտաբ պատերազմի հետևանքով առաջնահերթություն են ստացել քաղաքացիական պաշտպանության և քաղաքային անվտանգությանն ուղղված նախագծերը:

2-րդ գործոն. 2020 թվականի սկզբին ամբողջ աշխարհում բռնկված COVID19 համավարակը ևս մեկ անգամ ապացուցելով ծառայությունների հեռահար հասանելիության կարևորությունը և դրանց ամբողջական թվայնացման առաջնահերթությունը, որոշակի վերադասավորումներ մտցրեց պլաններում:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Այտուհանդերձ Երևանի քաղաքապետարանի ենթակառուցվածքներում 2020 թվականի ընթացքում շարունակվել են քաղաքային տնտեսության բազմաթիվ ոլորտների թվայնացման, գործառույթների ավտոմատացման, կառավարման, վերահսկման, տեղեկատվական և անվտանգության համակարգերի մշակման և զարգացման աշխատանքները:

Երևան քաղաքում կառուցապատման, տրանսպորտի, արտադրությունների և ծառայությունների օրեցօր ավելացումը, տեղեկատվության փոխանակման ծավալների և արագության նոր պահանջները, և ընդհանրապես քաղաքային կյանքի ինտենսիվության բարձրացումը նոր խնդիրներ է առաջ բերում, որոնց լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ և դրանց իրագործման ռազմավարություն:

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումները մարտահրավերներ են նետում՝ առաջ բերելով նոր պահանջներ ինչպես նաև ռիսկեր: Այս միտումը, բնորոշ լինելով զարգացող քաղաքներին, նկատելի է նաև Երևանում:

Հիմնախնդիրներ

1. Թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ապահովում,
2. Տեխնոլոգիական համակարգերի մատակարար ընկերություններից առաջացող կախվածություն,
3. Ոլորտի մասնագետների սղություն և դրանց պահանջարկի անընդհատ մեծացող տեմպեր,
4. Անձնական տվյալների պաշտպանություն,
5. Քաղաքային տնտեսության ոլորտների աշխատակիցների տեխնոլոգիական գիտելիքների պակասի հետևանքով անհրաժեշտ SS համակարգի տեխնիկական պահանջների մշակման անկարողություն:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. «Խելացի քաղաք»

Ծրագրի նպատակը	Ժամանակի պահանջներին համահունչ զարգացման, քաղաքացիական պաշտպանության, քաղաքի դիմակայունության և անվտանգության բարձրացման, ռեսուրսների խնայողության, էլեկտրոնային ծառայությունների տրամադրման, էկոհամակարգի բարելավման, տրամադրվող ծառայությունների որակի և քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման, ինչպես նաև ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է քաղաքային ենթկառուցվածքներում իրականացնել թվային տրանսֆորմացիա՝ համաձայն մշակված ռազմավարության:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	«ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ծրագրով նախատեսվում է քաղաքային տնտեսության բոլոր ոլորտներում ներդնել գործառույթների ավտոմատացման, տեղեկատվական, վերահսկման, կառավարման համակարգեր, տրամադրել էլեկտրոնային ծառայություններ, ներդնել քաղաքի անվտանգությանն ու դիմակայունության բարելավմանն ուղղված համակարգեր, նորարարական տեխնոլոգիաների կիրառումով բարելավել քաղաքի էկոլոգիան, զարգացնել ենթակառուցվածքները, ստեղծել քաղաքի միասնական կառավարման, և ծառայությունների վերահսկման կենտրոն, ապահովել առկա համակարգերից և բանացանցից անհրաժեշտ տվյալների մեկտեղումը և դրանց

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	տարածաժամանակային վերլուծությունը՝ որոշումների ընդունման գործընթացների աջակցության նպատակով: Այս փուլով նախնառաջ նախատեսվում է ստեղծել կառավարման կենտրոնը, ինտեգրել առկա համակարգերի և առկա բանացանցի հետ:
Համագործակցություն	ՄԱԶԾ (UNDP), «ԶԻ ԱՅ ԶԵԹ» (GIZ) GmbH), Համաշխարհային Բանկ (World BANK), Գործընկեր քաղաքներ, Ընկերություններ:
Ծրագրի անմիջական նպատակը	Այս փուլով նախնառաջ պլանավորված է ստեղծել կառավարման կենտրոնը, որը նախատեսվում է իրականացնել Երևանի քաղաքապետարանի երկրորդ մասնաշենքի 6-րդ հարկում: Տարածքի մակերեսը շուրջ 500 քմ է: կենտրոնում նախատեսվում է ունենալ ծառայությունների մոնիտորինգի և արագ արձագանքման, վերլուծությունների, խորհրդակցությունների, որոշումների կայացման և այլ սրահներ: Կենտրոնը պետք է համալրված լինի անհրաժեշտ կահույքով, տեխնիկական միջոցներով, կապուղիներով և այլ անհրաժեշտ պարագաներով:
Ծրագրի հիմնական շահառուներ	Երևանի քաղաքապետարան, Քաղաքացիներ, Իրավաբանական անձիք, Զբոսաշրջիկներ:
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ.-2022 թ.

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Հրազդան գետի աջ ափին: Շրջանը կազմավորվել է 1950-ական թվականներին և ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Աջափնյակ վարչական շրջանի բնակչությունը կազմում է 108.0 հազ. մարդ, որը կազմում է Երևանի բնակչության 9 %-ը: Վարչական շրջանի տարածքը զբաղեցնում է 2,582 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 11.6%-ը:

Վարչական շրջանն ընդգրկում է Սիլիկյան, Նորաշեն, Նազարբեկյան, Գ-1, Վ-3, Վահագնի թաղամասերը, Հալաբյան, Մարգարյան, Շինարարների, Բաշինջաղյան, Լենինգրադյան, Շիրազի, Հասարթյան փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Աջափնյակ վարչական շրջանում առկա է 439 բազմաբնակարան շենք, որից 167-ը բարձրահարկ են (7-16 հարկանի), որտեղ կան 345 վերելակներ:

Փողոցների երկարությունը 116.76կմ է, իսկ մակերեսը՝ 1,700.5 հազ.քմ:

Վարչական շրջանում գործում է 16 մանկապարտեզ, 20 հանրակրթական դպրոց, որից 4-ն ավագ, 1-ը միջնակարգ, 15-ը հիմնական, 3 ԲՈՒՀ, 1 արհեստագործական ուսումնարան, 2 մասնավոր վարժարան, 1 արտադպրոցական կազմակերպություն՝ ՄՊՍԿ, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 մշակութային կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ /3 մասնաճյուղով/, 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց, 1 շախմատի դպրոց և 4 գիտահետազոտական ինստիտուտ:

Անապահովության գնահատման համակարգում հաշվառված է 2,165 ընտանիք, որից նպաստառու՝ 1,811 ընտանիք:

Վարչական շրջանի տարածքում գործում է «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության բարեգործական ճաշարանը, որն ունի ճաշարանում սնվող 56 շահառու և տնային խնամքի 129 շահառու:

2021թ. Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ համագործակցությամբ համատեղ կշարունակի բարեգործական ճաշարանի գործարկման ծրագիրը՝ վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների համար:

2021թ-ին կիրականացվեն Աջափնյակ վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր, համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերության և ձեռներեցության ծրագրեր, սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում, ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների համար աջակցության ծրագրեր, Աջափնյակ վարչական շրջանի բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն, արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն:

Կիրականացվի հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում:

Առողջապահության բնագավառում կշարունակվի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին պետպատվերի շրջանակներում իրականացվող բուժսպասարկման աջակցությունը:

Վարչական շրջանի տարածքում գործում են հանրապետական նշանակության 5 հիվանդանոց և 3 ամբուլատոր պոլիկլինիկա:

Հիմնախնդիրներ

1. Փողոցների, այգիների, բակային տարածքների մաքրման, աղբահանության և ձևամաքրման աշխատանքների կազմակերպման անհրաժեշտություն,
2. Թեքահարթակների կառուցման անհրաժեշտություն,
3. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման անհրաժեշտություն,
4. Վերելակային տնտեսության արդիականացման անհրաժեշտություն,
5. Համատիրությունների գործունեության խիստ վերահսկման անհրաժեշտություն,
6. Ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի և վարչական շրջանի ենթակայության հիմնարկների շենքային պայմանների ոչ բավարար մակարդակ,
7. Նորաստեղծ թաղամասերի (Լուկաշին, Վ-3, Սիլիկյան, Փիրույան, Գ-1 և Գ-3) ենթակառուցվածքների ստեղծում (ջրագծեր, կոյուղագծեր, եզրաքարեր, ճանապարհներ, արտաքին լուսավորություն և գազաֆիկացում),

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

8. Նոր ոռոգման համակարգերի ստեղծում (Միլիկյան, Լուկաշին, Գ-1, Ջանիբեկյան, Բաշինջաղյան, Լևոնյան, Եղիազարյան, Խ.Խաչատրյան, Առաքելյան, Մարտիրոսյան և այլ փողոցներ),
9. Նոր հեղեղատար համակարգի կառուցում (Արզումանյան, Բաշինջաղյան 1-ին և Բեկնազարյան փողոցներ),
10. Բազմաբնակարան շենքերի երեսպատման սալիկների ամրացման աշխատանքներ (Նորաշեն թաղամասի թվով 31 շենքեր և Բաշինջաղյան 188, 192, 196 և 198 շենքեր),
11. Վթարային բազմաբնակարան շենքերի ամրացման կամ քանդման աշխատանքներ,
12. Վարչական շրջանի տարածքում առկա կիսակառույց շենքերի կառուցում (Նազարբեկյան 482 և Չաուշի 14/3 մասնավոր շենք),
13. Վարչական շրջանի տարածքում գտնվող գերեզմանատների սահմանազատում (պարսպապատում),
14. Մարզադպրոցի շենքային պայմանները խիստ անբավարար են, չունի դահլիճ, շենքը նախատեսված է միայն վարչական աշխատակազմի համար, վերանորոգված չէ, ունի հիմնանորոգման կարիք, պարապմունքներն անցկացվում են հանրակրթական դպրոցներում,
15. Հերթեր և կուտակումներ (Մանկապարտեզ) էլեկտրոնային հերթագրման համակարգում,
16. Վարչական շրջանի թվով 16 մանկապարտեզներից 5-ը ենթակա են հիմնանորոգման:

2021թ. նախատեսվող ծրագրեր

1. Ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում,
2. Ոռոգման ցանցի անցկացում,
3. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում,
4. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում,
5. Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում,
6. Եզրաքարերի վերանորոգում,
7. Կանաչապատման աշխատանքների իրականացում,
8. Բակային տարածքների հիմնանորոգում,
9. Փողոցների և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում,
10. Փողոցների և այգիների թեքահարթակների կառուցում և վերանորոգում,
11. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում,
12. Փողոցներում և այգիներում արտաքին լուսավորության ցանցի նորոգում և արդիականացում,
13. Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների նորոգում,
14. Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի նորոգում,
15. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում,
16. Վարչական շրջանի թիվ 44 մանկապարտեզի ջեռուցման համակարգի հիմնանորոգում,
17. Վարչական շրջանի մանկապարտեզների նորոգում,
18. Տոնական և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում,
19. Մարզական միջոցառումների իրականացում,
20. Սոցիալական ծրագրերի իրականացում:

1. Ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Տարեկան ծրագրի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վիճակի գույքագրում, կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և ասֆալտբետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգման ենթակա ա/բ ծածկի վերանորոգում 27,000քմ կամ 80,000քմ (քաղաքի ծրագիրն էլ հետը)
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. ապրիլ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

2. Ոռոգման ցանցի անցկացում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանում ոռոգման ցանցի շարունակական ավելացում
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր կառուցվող կանաչ տարածքները կպահպանվեն միայն կանոնավոր և ժամանակակից ոռոգման ցանցի կառուցման դեպքում, հատկապես նորակառույց թաղամասերում՝ դրանց ավելացմամբ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. 5 կմ նոր ոռոգման ցանցի կառուցում
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

3. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում, որի մեջ մտնում է վնասված հատվածների իզոգամներով նորոգում: Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված 443 բազմաբնակարան շենքերից 174-ը հարթ տանիքով բարձրահարկ շենքեր են՝ 142,800քմ մակերեսով: Շրջանում առկա 16 մանկապարտեզների հարթ տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 14,200քմ:
Համագործակցություն	Համատիրություններ
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել 13,500 քմ հարթ տանիք:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-սեպտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

4. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների վերանորոգումը կատարվում է հիմնականում վնասված ազդեցությունները նորերով փոխարինմամբ, իսկ առավել մեծ վնասվածություն ունեցող տանիքները ամբողջությամբ քանդվում և կառուցվում է նորը: Նպատակահարմար ենք համարում մասնակի վերանորոգման համար հատկացվող ազդեցությունների փոխարեն յուրաքանչյուր տարի հատկացվեն 17,000քմ ավիքավոր թիթեղ: Վարչական շրջանում առկա 272 թեք բնակելի շենքերի մակերեսը կազմում է 278.156քմ.:
Համագործակցություն	Համատիրություններ
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել 10,000քմ թեք տանիք:
Ծրագրի հիմնական	Բնակչություն

շահառուները	
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

5. Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով: Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված է 1,336 շքամուտք: Վերանորոգման կարիք ունեն 280 մուտք:
Համագործակցություն	Համատիրություններ
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգվելու է 100 մուտք:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-նոյեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

6. Եզրաքարերի վերանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների մայթերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել 5,000 գծմ եզրաքար:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

ավարտը, իրականացման ժամանակացույց	սահմանված ժամանակացույցի:
---	---------------------------

7. Կանաչապատման աշխատանքների իրականացում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի կանաչապատ տարածքների խնամքի և պահպանման աշխատանքների իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կանաչ տարածքների ավելացումը վարչական շրջանում ընդունվում է որպես հրատապ հարցերից մեկը: Այսօրվա դրությամբ կանաչ տարածքի խնամք և պահպանում կատարվում են 29.5 հա-ում, սակայն ունենք 46.0 հա բակային կանաչ տարածքներ, որոնք նույնպես խնամքի և պահպանման անհրաժեշտություն ունեն:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. խնամքի և պահպանման աշխատանքներ իրականացնել 59.0հա:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. հունվար-դեկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

8. Բակային տարածքների հիմնանորոգում

Ծրագրի նպատակը	Բնակիչների համար հանգստի բարենպաստ պայմանների ստեղծում՝ քաղաքային գույքի կահավորմամբ, խաղերի տեղադրմամբ, կանաչ տարածքների ավելացման միջոցով: Առկա անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների (հիմնական բակային և միջբակային) հիմնանորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Աջափնյակ վարչական շրջանում կհիմնվի 6 բակային տարածք, որի արդյունքում կիրականացվեն անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում, մասնավորապես կանաչ տարածքի վերականգնում, անցուղիների պատրաստում, ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում, եզրաքարերի նորոգում, թեքահարթակների և աստիճանների պատրաստում, խաղերի, զրուցատաղավարների, սպորտային մարզագույքի տեղակայում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. շահագործման հանձնել շուրջ 6 բակային տարածք
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-նոյեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:
---	---

9. Փողոցների և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայթերի և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների մայթերի և այգիների գեղարվեստական բետոնե սալիկների վերանորոգում և փոխարինում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել 3,000 քմ բետոնե սալիկ:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

10. Փողոցների և այգիների թեքահարթակների կառուցում և վերանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայթերի և այգիների թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժի նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների մայթերի և այգիների թեքահարթակների կառուցում և վերանորոգում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. կառուցել և վերանորոգել 15 թեքահարթակ:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

11. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի փողոցների, հրապարակների և այգիների
----------------	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	կահավորման նպատակով անհրաժեշտ է տեղադրել նոր նստարաններ, աղբամաններ, զրուցարաններ և մանկական խաղեր:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի փողոցներում, հրապարակներում և այգիներում անհրաժեշտ է տեղադրել նոր նստարաններ, աղբամաններ, զրուցարաններ և մանկական խաղեր::
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. ձեռք բերել և տեղադրել 3 զրուցարան, 60 նստարան, 30 աղբաման և 20 խաղասարք:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

12. Փողոցներում և այգիներում արտաքին լուսավորության ցանցի նորոգում և արդիականացում

Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նորոգել և արդիականացնել վարչական շրջանի փողոցների և այգիների արտաքին լուսավորության ցանցը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի փողոցներում և այգիներում արտաքին լուսավորության ցանցի նորոգման և արդիականացման աշխատանքներ, տեղադրելով LED լուսատուներով:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. կառուցել և վերանորոգել 2,000 գծմ արտաքին լուսավորության ցանց:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

13. Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների նորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում վթարային պատշգամբների վերանորոգման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման աշխատանքներ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել 20 բարձակային պատշգամբ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

14. Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի նորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի նորոգման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի վարչական շենքի նորոգման աշխատանքներ:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. վերանորոգել վարչական շենքը:
Ծրագրի հիմնական շահառուները	Աշխատակազմ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

15. Բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման նպատակով:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքներ (պահեստամասերի ձեռք բերում և տեղադրում):
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. նախատեսված է հիմնանորոգել թվով 22 վերելակ:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակչություն
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-դեկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

16. Վարչական շրջանի թիվ 44 մանկապարտեզի ջեռուցման համակարգի հիմնանորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի թիվ 44 մանկապարտեզի ջեռուցման
----------------	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	համակարգի հիմնանորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի թիվ 44 մանկապարտեզի ջեռուցման համակարգի առանձնացում թիվ 22 դպրոցից և հիմնանորոգում:
Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակը	2021թ. նախատեսված է հիմնանորոգել թվով 44 մանկապարտեզի ջեռուցման համակարգը:
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաներ
Ծրագրի սկիզբը և ավարտը, իրականացման ժամանակացույց	2021թ. մարտ-հոկտեմբեր կնքված պայմանագրի ժամկետով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

17. Վարչական շրջանի մանկապարտեզների նորոգում

Ծրագրի նպատակը	Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզների նորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Վարչական շրջանի տարածքում արտաքին գովազդի ոլորտում տեղական տուրքերի գանձում և համապատասխան թույլտվությունների տրամադրում, հսկողության իրականացում, իրավախախտում հայտնաբերելու դեպքում արձանագրությունների կազմում, գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ բազայի կազմում և ճշգրտում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	Երևան քաղաքի բյուջեի եկամուտների կատարումն, արտաքին գովազդի ոլորտի օրենսդրական պահանջների կատարումն, տնտեսվարող սուբյեկտների տվյալների տիրույետումն:
Ծրագրի հիմնական շահառուները	Վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. ընթացքում:

17. «Երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելու ծրագիր»

Ծրագրի նպատակը	Նոր Նորք վարչական շրջանի երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Համայնքում երեխաների ու ծնողների հետ, ինչպես նաև խնամք տրամադրող ու կրթական հաստատություններում իրազեկող հանդիպումների և միջոցառումների կազմակերպում և անցկացում:
Համագործակցություն	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Երևանի քաղաքապետարանի ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ներգրավելով հասարակական

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ փորձագետների:
Ծրագրի անմիջական նպատակ	Երեխաների իրավունքների խախտումները և շահերի ոտնահարումները կանխարգելելը, երեխաներին իրազեկելը իրենց իրավունքների մասին:
Ծրագրի հիմնական շահառուները	Երեխաները, ծնողները, հոգեբանները, մանկավարժները, ինչպես նաև այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. ընթացքում:

18. «Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը»

Ծրագրի նպատակը	Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը մինչև նրա տեղավորման հարցի լուծումը:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Երեխայի՝ ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու իրավունքի ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ նրանց հրատապ օգնության, անհրաժեշտության դեպքում նաև անհապաղ տեղավորման ապահովումը:
Համագործակցություն	Ոստիկանություն, դպրոցներ, մանկապարտեզներ, վարչական շրջանի համապատասխան բաժիններ, Հասարակական և այլ կազմակերպություններ:
Ծրագրի անմիջական նպատակ	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը:
Ծրագրի հիմնական շահառուները	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ:
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. ընթացքում:

19. «Մանկապարտեզների հիմնանորոգում և վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Նախադպրոցական կրթության պայմանների բարելավում, զարգացում, ձեռքբերված գույքի և վերանորոգված հաստատությունների պատշաճ խնամք:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում և պահպանում, կրթական և անվտանգության պատշաճ պայմանների ապահովում երեխաների համար, հաստատությունների բակերի խնամք:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Համագործակցություն	
Ծրագրի անմիջական նպատակ	Նախադպրոցական կրթության բարելավում
Ծրագրի հիմնական շահառուները	Նոր Նորք վարչական շրջանի նախադպրոցական տարիքի երեխաներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

20. «Մշակութային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Վարչական շրջանում մշակութային միջոցառումների կազմակերպում և անցկացում, մշակութային արժեքների պահպանում, հասարակության մշակութային կյանքի աշխուժացում, զարգացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նախատեսվում է Նոր Նորք վարչական շրջանում պետական, մշակութային, ազգային ու այլ տոների զանգվածային միջոցառումների կազմակերպում և անցկացում, ինչպես նաև վարչական շրջանի երաժշտական և արվեստի դպրոցների, մշակույթի կենտրոնի և գրադարանի գործունեության արդյունավետությանն ուղղված ծրագրերի իրականացում:
Համագործակցություն	ԱՀԹ, ՀԿ-ներ
Ծրագրի անմիջական նպատակ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում, մշակութային կյանքի ակտիվացում:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ և զբոսաշրջիներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

21. «Սպորտային միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Ուսումնամարզական ծրագրերի իրականացման միջոցով բնակչության շրջանում առողջ ապրելակերպի քարոզում, տարբեր տարիքային խմբերի բնակիչների ընդգրկում մարզական մրցույթներում, մարզադպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ուսումնամարզական օրացուցային պլանով նախատեսված սպորտային միջոցառումների կազմակերպում, վարչական շրջանի տարբեր տարիքային անձանց ընդգրկում:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Համգործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	Ուսումնամարզական ծրագրերի իրականացում, առողջ ապրելակերպի քարոզում:
Ծրագրի հիմնական շահառուները	Նոր Նորք վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

22. «Քաղաքաշինության և ճարտարապետության ոլորտի զարգացման նախագիծ»

Ծրագրի նպատակը	Հասարակական և բակային տարածքների բարեկարգման և վերականգնման աշխատանքների կազմակերպում, նոր կառուցապատման համար նախատեսվող տարածքների ուսումնասիրում:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Նոր Նորք վարչական շրջանում նախատեսվող շին.թույլտվությունների տրամադրում, ապօրինի շինարարությունների կանխում, բակային տարածքներում զավթաց և ցանկապատած տարածքների ապամոնտաժում և բարեկարգման աշխատանքների իրականացում:
Համգործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	Նոր Նորք վարչական շրջանում քաղաքաշինական ոլորտում շին. թույլտվություններից բյուջեի եկամուտների կատարում:
Ծրագրի հիմնական շահառուները	Բնակիչներ, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021 թվական

ՆՈՐՔ-ՄԱՐԱԶ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 470 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 2.1%-ը: Այն սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր-Նորք վարչական շրջանների հետ: Համաձայն ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական տվյալների՝ Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակչության թիվը կազմում է 11300 մարդ, իսկ համաձայն ոչ պաշտոնական տվյալների վարչական շրջանում բնակվում է մոտ 14000 մարդ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Նորք-Մարաշ վարչական շրջանում առկա են թվով 11 բնակելի շենքեր, որոնք կառուցված են մասնավոր ներդրումների հաշվին, 2134 անհատական բնակելի տներ: Վարչական շրջանի բնակելի ֆոնդի զգալի մասը կազմում են սեփական տնատիրությունները, որով շրջանն առանձնանում է այլ վարչական շրջաններից: Սակայն դա չի խանգարում հասարակական նշանակության և բազմաբնակարան նոր շենքերի կառուցման կամ նախկինում կառուցված շինությունների վերակառուցմանը: Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխարհագրական դիրքը՝ դեպի Երևան բարձունքից տեսարանը և քաղաքի եռուզեռից կտրվածությունը, հնարավորություններ է ընձեռում վարչական շրջանին ավելին զարգանալու Երևան համայնքի սեփականություն հանդիսացող չկառուցապատված հողերի հաշվին, որի կապակցությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի աշխատակազմը, սերտ համագործակցելով Երևանի քաղաքապետարանի և անհատ ներդրողների հետ, պարբերաբար ներկայացնում է չկառուցապատված հողամասերի տվյալները՝ աճուրդով իրացնելու և վարչական շրջանի զարգացումն ապահովելու նպատակով:

Նորք-Մարաշ վարչական շրջանում առկա է 2 հասարակական հանգստի վայր (այգի), 8 մարզական խաղահրապարակ, որոնք կառուցվել և բարեկարգվել են Երևան քաղաքի 2013-2018թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի շրջանակներում հատկացված ֆինանսական միջոցների հաշվին, ինչպես նաև նշված ծրագրերին իրենց մասնակցությունն են ունեցել վարչական շրջանի բնակչությունը:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների թիվը 25-ն է, որոնց երկարությունը կազմում է մոտ 22.5 կմ: Բոլոր փողոցների մակերեսը կազմում է 438309 քմ, որից ասֆալտապատ մակերեսը՝ 424057 քմ, գրունտային ծածկույթով մակերեսը՝ 14252 քմ:

Նորք-Մարաշ վարչական շրջանի գործող ոռոգման ցանցի երկարությունը կազմում է մոտ 15800գծմ, որը հիմնականում սպասարկում է անհատական տնատիրությունների կանաչ տարածքների ոռոգումը, իսկ հասարակական նշանակության ոռոգվող կանաչ տարածքների ծավալը կազմում է 1.2 հա:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում օրական մաքրվում է 215.7 հազար քմ տարածք:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է 4 մանկապարտեզ՝ «Երևանի թիվ 121, 122, 123, և 124 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ները: Հաստատություններ են հաճախում շուրջ 400 երեխա: Հաստատություններում աշխատում են 80 աշխատակից: Բոլոր հաստատությունները հիմնանորոգված են, ապահովված են կենտրոնացված ջեռուցման համակարգերով: Վարչական շրջանի աշխատակազմի կոմից հետևողական աշխատանքներ են իրականացվել մանկապարտեզներում երեխաների պահպանման պայմանների բարելավման, սննդամթերքի ընդունման և պահպանման ուղղություններով, որի արդյունքում Երևանի քաղաքապետարանի զարգացման ծրագրով մանկապարտեզները ապահովվել են անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով, իսկ վարչական շրջանի անհատ բարերարների և Հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում՝ մանկապարտեզներին նվիրաբերվել են պահանջներին համապատասխան այլ գույք, մասնավորապես՝ փափուկ գույք, կենցաղային տեխնիկա, մանկական խաղեր:

Վարչական շրջանում գործում է երեք հանրակրթության դպրոց (հ.26, հ.61 և հ. 157 դպրոցներ), մեկ գերատեսչական («Օլիմպոս» կրթահամալիր՝ ավագ դպրոց), ուր հաճախում են 952 երեխա, և երկու հատուկ նշանակության դպրոցներ՝ «Լսողության խանգառումներ ունեցող երեխաների գիշերօդիկ» և «Թիվ 2 օժանդակ» դպրոցները, ուր հաճախում են 262 երեխա: Բոլոր

հաստատությունները համալրված են 206 ուսուցչական անձնակազմով: Դպրոցների վարչական շենքերը ենթակա են հիմնանորոգման:

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է մեկ գրադարան՝ 23800 գրքային ֆոնդով: Գրքային ֆոնդը գտնվում է ֆիզիկապես մաշված վիճակում: Գրադարանի կողմից Նորք 5փ. 29տ. հասցեում զբաղեցրած տարածքը սեփականության իրավունքով պատկանում է «Արմենթել» ՓԲԸ-ին:

Նորք-Մարաշ վարչական շրջանում է գործում մեկ մարզադպրոց՝ «Նորք-Մարաշի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ը, ուր հաճախում է մոտ 250 երեխա 5 մարզաձևերում՝ ֆուտբոլ, հունա-հռոմեական ըմբշամարտ, ազատ ոճի ըմբշամարտ, բռնցքամարտ, մարմնամարզություն: Մարզադպրոցը ապահովված է 12 մարզչական անձնակազմով և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմով:

Նորք-Մարաշ վարչական շրջանում է գործում մեկ երաժշտական դպրոց՝ «Ռ. Անդրեասյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը, ուր հաճախում են մոտ 155 երեխա: Դպրոցն ապահովված է 18 հոգանոց ուսուցչական անձնակազմով և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմով՝ 10 մարդ: Դպրոցն ամբողջովին հիմնանորոգված է և ապահովված է անհրաժեշտ գույքով: Կարելի է նշել, որ նախորդ տարիների ներդրումների հաշվին աճել է դպրոց հաճախող սաների թիվը, բացվել են երաժշտական նոր գործիքային դասարաններ:

Նորք-Մարաշ վարչական շրջանում է գործում մեկ շախմատի դպրոց՝ «Նորք-Մարաշի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ը, ուր հաճախում են մոտ 90 երեխա: Դպրոցը ներկայումս ապահովված է 3 մարզչական անձնակազմով և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակազմով՝ 9 աշխատակցով: Դպրոցը կառուցվել և կահավորվել է 2016 թ:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի տարեկան ծրագրերով վարչական շրջանում իրականացվել են թվով 22 մշակութային ավանդական միջոցառումներ: Մակայն միաժամանակ իրականացվել են ծրագրից դուրս այլ ազգային և եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի հասարակական նշանակության կանաչապատ տարածքների չափը կազմում է 1.2 հա: Նշված տարածքները ապահովված են ոռոգման միասնական ցանցով:

Յուրաքանչյուր տարի միջոցներ են ձեռնարկվում վարչական շրջանի սեփական տնատիրությունների կանաչապատ տարածքների պահպանման նկատմամբ: Երևան քաղաքի 2016-2019 թվականների ծրագրերով վարչական շրջանում կառուցվել է մոտ 900 զմ նոր խողովակաշար, պարբերաբար հիմնանորոգվել է մոտ 2500 զմ խողովակաշար: Այսօր վարչական շրջանի գործող ոռոգման ցանցի երկարությունը կազմում է մոտ 15800 զմ, իսկ գրանցված բաժանորդների քանակը կազմում է շուրջ 300 բաժանորդ:

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում են հետևյալ 6 առողջական հիմնարկները. «Նորք-Մարաշ» բճշկական կենտրոնը /սրտաբանական/, Վնասաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական կենտրոնը, «Նորք» ինֆեկցիոն հանրապետական կենտրոնը, «Հովարդ Կարագոյան» մանկական ատամնաբուժական կենտրոնը, «Մբ. Մարիամ» առողջապահական կենտրոնը, թիվ 5 պոլիկլինիկան:

Վարչական շրջանում գործում են Մանկան տունը, Նորքի տուն-ինտերնատը /ձերանոց/: Նորք-Մարաշ վարչական շրջանում «Փարոս» համակարգում ընդգրկված նպաստառուների թիվը առ 01.10.2020թ. կազմում է 241 ընտանիք, որից 183 նպաստառու ընտանիք, 58-ը՝ ոչ նպաստառու, գրանցված գործազուրկների թիվը կազմում է 1 մարդ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Նորք-Մարաշ վարչական շրջանում առ 01.10.2020թ. բնակվում են` Հայրենական Մեծ պատերազմի 2 վետերան, Արցախյան պատերազմի մասնակից 57 ազատամարտիկ, Զոհված ազատամարտիկի 13 ընտանիք, Հաշմանդամ (ցմահ) 50 մարդ, Երկկողմանի ծնողազուրկ 2 երեխա, Փախստականներ Սիրիայից 6 ընտանիք:

Հետամուտ լինելով վարչական շրջանի բնակիչների սոցիալական ապահովության խնդիրներին` վարչական շրջանի աշխատակազմն, ինչպես Երևան քաղաքի հաստատված միջոցառումների ծրագրերով, այնպես էլ անհատ բարերարների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ, շարունակական իրականացրել է բնակիչների սոցիալական խնդիրների ուսումնասիրություններ, վարչական շրջանի տարածքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանն ուղղված միջոցառումներ, քայլեր ձեռնարկել այդ խնդիրների կրճատման ու կանխարգելման ուղղությամբ, առավել ընդլայնվել է համագործակցությունը տարածքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, բարեգործական հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների հետ, մասնավորապես` «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, «Միսիոներներ» բարեգործական կազմակերպության, «Սբ. Մարիամ» ընտանիքի առողջության կենտրոնի, «Առսե Դենտ» բժշկական կենտրոնի, «Գերմանական Կարմիր Խաչ» բարեգործական կազմակերպության, բարեգործական ճաշարանի և այլն, որոնց հետ համագործակցությունն ու թիմային աշխատանքը թույլ է տվել լուծելու մի շարք սոցիալական խնդիրներ, մասնավորապես`

Աշխատանքի տեղավորման մեր կողմից միջնորդություն է իրականացվել և փաստացի աշխատանքի են տեղավորվել վարչական շրջանի 34 բնակիչ: Վարչական շրջանում նոր բացված «Հին Նորք Բիզնես կենտրոն» ՓԲԸ-ում ընդհանուր առմամբ աշխատանքի են տեղավորվել շուրջ 60 նորք-մարաշեցի:

Բարեգործական ճաշարան են ուղղորդվել վարչական շրջանի սոցիալապես անապահով 63 բնակիչ: Ակնաբուժական ծառայությանից օգտվելու անվճար միջնորդություն է տրվել 35 բնակչի: Ատամնաբուժական ծառայությանից օգտվելու անվճար միջնորդություն է տրվել 35 բնակչի:

Նորք-Մարաշ վարչական շրջանում բնակվում են թվով 5 սիրիահայ ընտանիքներ, որոնք մշտապես գտնվել են մեր ուշադրության կենտրոնում, մշտապես պահպանվել է նրանց հետ կապը, ըստ անհրաժեշտության նրանք ներառվել են բազմաբնույթ սոցիալական ծրագրերում, միաժամանակ նրանց սոցիալական և առօրյա խնդիրների լուծման նպատակով` ծրագրերի իրականացմանը ներգրավվել են անհատ բարերարներ և հասարակական կազմակերպություններ:

Հիմնախնդիրներ

1. Գործարար միջավայրի բարելավում,
2. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում,
3. Ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպում` երիտասարդության ներգրավմամբ,
4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն,
5. Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում,
6. Համայնքում բնակարանային շինարարության խթանում,
7. Համայնքի բնակավայրերի կառուցապատում, բարեկարգում, կանաչապատում,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

8. Աղբահանություն և սանիտարական մաքրում, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում,
9. Նորք-Մարաշ վարչական շրջանի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում,
10. Աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացում,
11. Զբոսաշրջության զարգացման խթանում,
12. Առողջապահության զարգացում,
13. Համայնքի հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանում:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Ա.Արմենակյան և Նորքի այգիներ փողոցների ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում,
2. Փողոցների ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում,
3. Եզրաքարերի վերանորոգում և ամրացում,
4. Հենապատերի վերանորոգում և ամրացում,
5. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների և ծառայությունների իրականացում,
6. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ /ղեռատիզացիոն աշխատանքներ/,
7. Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր,
8. Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում:

1. «Ա.Արմենակյան և Նորքի այգիներ փողոցների ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքների իրականացում»

Ծրագրի նպատակ	Կանաչապատ տարածքների պահպանում և խնամք, ոռոգման ջրի կորուստների հնարավորինս նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ըստ ծրագրի նախատեսվում է Ա. Արմենակյան և Նորքի այգիներ փողոցների ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ ընդամենը 650 գծմ ծավալով, հասարակական հանգստի վայրերի /այգիների/ և խաղահրապատակների կանաչապատ տարածքների խնամք և պահպանում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	650 գծմ
Ծրագրի հիմնական	Բնակչություն, զբոսաշրջիկներ

շահառուներ	
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

2. «Փողոցների ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում»

Ծրագրի նպատակ	Ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ՝ փոսային, ճաքալցման և հիմնանորոգման աշխատանքներ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Բնակիչների հարմարավետ տեղաշարժման համար կատարվող բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև կատարված աշխատանքների պատշաճ մակարդակով պահպնում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	6,804 քմ
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն և զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

3. «Եզրաքարերի վերանորոգում և ամրացում»

Ծրագրի նպատակ	Փողոցների բարեկարգում, եզրաքարերի վերանորոգում և ամրացում, հետիոտն անցորդի հարմարավետության, երթևեկության կանոնների ապահովման անվտանգություն:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան, Մերո Խանգաղյան և Գ. Հովսեփյան փողոցների ճանապարհատվածի եզրաքարերի հիմնանորոգման աշխատանքներ:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	1,000.0 գծմ
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:
---	--

4. «Հենապատերի վերանորոգում և ամրացում»

Ծրագրի նպատակ	Նորք-Մարաշ վարչական շրջանի փողոցների բարեկարգում, հենապատերի վերանորոգում և ամրացում, հետիոտն անցորդի հարմարավետության, երթևեկության կանոնների ապահովման անվտանգություն:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան փողոցի թիվ 122 մանկապարտեզի պարսպի կառուցապատման շարունակությունը և թիվ 61 դպրոցի հարակից տարածքի հենապատի հիմնանորոգման աշխատանքները:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	2 նախագիծ
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

5. «Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների և ծառայությունների իրականացում»

Ծրագրի նպատակ	Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում, տարվա ընթացքում առաջացած չնախատեսված աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրով նախատեսվում է իրականացնել Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում, տարվա ընթացքում առաջացած չնախատեսված աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	Աշխատանք և ծառայություն
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն, զբոսաշրջիկներ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:
---	--

6. «Ախտահանման և միջատազերծման ծառայություններ /դեռատիզացիոն աշխատանքներ/»

Ծրագրի նպատակ	Ախտահանման և միջատազերծման ծառայություններ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Դեռատիզացիոն և դիսենկցիոն ծառայությունների իրականացում, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում, բնակիչների, մանկապարտեզների, դպրոցների սաների անվտանգության և ապահովում, վարչական շրջանի տարածքում գտնվող աղբամանների շրջակայքի սանիտարական նորմերի ապահովում: Տաք սեզոնին սողունների վերացում, վնասազերծում:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	192.000 քմ
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն, զբոսաշրջիկներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

7. «Մշակութային միջոցառումների իրականացման ծրագիր»

Ծրագրի նպատակ	Մշակութային կյանքի ապահովում, պետական, ազգային ու ավանդական տոների պահպանում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	ՀՀ պետական, ազգային և եկեղեցական տոների կազմակերպում և անցկացում՝ բնակչության ներգրավմամբ, բնակիչների մասնակցություն ազգային տոներին՝ Հայոց բանակի օր, Տեառնընդառաջի տոնակատարություն, Բարեկենդանի տոնակատարություն, «Կանանց տոն - Մարտի 8» տոնակատարություն, Ապրիլի 7 «Մայրության և գեղեցկության տոն», Մբ. Ջատկի տոնակատարություն, Եղեռնի տարելիցին նվիրված միջոցառումներ, «Հաղթանակի և խաղաղության տոն - Մայիսի 9» տոնակատարություն, Համբարձման տոնակատարություն, Հայաստանի առաջին հանրապետություն տոն, Երեխաների իրավունքների պաշտպանության օր, «Ցտեսություն մանկապարտեզ»

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	տոնակատարություն, ՀՀ Պետական խորհրդանիշների և Սահմանադրության օր, «Ուրախ ամառ, երջանիկ մանկություն», Երևանյան ամառ, Բակային ճամբարների կազմակերպում, Գիտելիքի գրի և դպրության օր, ՀՀ Անկախության տոն, Նորք-Մարաշի վերածնության օր, Ուսուցչի օր, Թարգմանչաց տոն, Ամանորյա տոնակատարություն և 2021թ-ին նախատեսված ամանորյա քաղցրավենիքի փաթեթներ երեխաների համար:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան
Ծրագրի անմիջական նպատակ	22 միջոցառում
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն, զբոսաշրջիներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

8. «Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում»

Ծրագրի նպատակ	Առողջ ապրելակերպի քարոզում
Ծրագրի համառոտ նկարագրություն	Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ, վարչական շրջանի երիտասարդ ընտանիքների ընդգրկում սպորտային ծրագրերին: Նախատեսվում են անցկացնել հետևյալ միջոցառումները՝ ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր , «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային ավանդական փառատոն, ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Շախմատի Երևան քաղաքի , Լավագույն մարզական ընտանիք , Շախմատի օլիմպիադա , Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղեր, Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին, Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնություն, Ըմբշամարտի հուշամրցաշար կազմակերպում, Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն:
Համագործակցություն	Երևանի քաղաքապետարան

Ծրագրի անմիջական նպատակ	12 միջոցառում
Ծրագրի հիմնական շահառուներ	Բնակչություն
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի ժամկետներով՝ համաձայն սահմանված ժամանակացույցի:

ՆՈՒԲՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը սահմանակից է Կոտայքի և Արարատի մարզերին, Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 1,724 հա, բնակչությունը՝ 9.8 հազ. մարդ:

Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների երկարությունը կազմում է 22,934 կմ: Հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կառուցված են 43 թեքահարթակներ: Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում տեղադրված են 150 աղբամաններ, 335 նստարաններ, 66 գրուցարաններ, 119 մարզական գույք, 25 խաղային գույք: 21 փողոցներում առկա է արտաքին լուսավորության ցանց, 6 թաղամասերում բացակայում է:

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում եզրաքարերի երկարությունը կազմում է 3,890 գծմ, որից վերանորոգված են 1,700 գծմ, 2,190 գծմ եզրաքարեր ենթակա են վերանորոգման:

Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 1,512 սեփական տնտեսություն, 34 բազմաբնակարան շենք, հարթ տանիքները 7-ն են, թեք տանիքները 27, գործում է 6 վերելակ:

Նուբարաշեն վարչական շրջանի կանաչապատ տարածքները կազմում են 5.1283 հա, փողոցների սիզամարգերը՝ 0.0186 հա, պուրակները՝ 0.16 հա, առկա է 1,643 ծառ:

Հիմնախնդիրներ

1. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգում և փոխարինման աշխատանքների իրականացման անհրաժեշտություն,
2. Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման անհրաժեշտություն և գոունտային ճանապարհներ ունեցող թաղամասերի ասֆալտապատում,
3. Սակավաշարժ խմբերի հասանելիությունն ապահովելու համար ենթակառուցվածքների ստեղծման անհրաժեշտություն,
4. Խաղահրապարակների և նոր հանգստի գոտիների ստեղծման անհրաժեշտություն,
5. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի հիմնանորոգման անհրաժեշտություն և նորերի կառուցում,
6. Բակային տարածքների և չլուսավորվող փողոցների արտաքին լուսավորության համակարգի անցկացման անհրաժեշտություն,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

7. Բնակելի կառուցապատման համար ենթակա համայնքային հողամասերի վրայից անցնող բարձրավոլտ մալուխների ապամոնտաժում,
8. Քաղաքային տրանսպորտի աշխատանքի բարելավման և կանգառների արդիականացման անհրաժեշտություն,
9. Նոր վարչական շենքի կառուցման անհրաժեշտություն,
10. Նոր մարզադաշտերի կառուցման անհրաժեշտություն,
11. Նոր եզրաքարերի տեղադրման անհրաժեշտություն,
12. Նոր մայթերի կառուցման անհրաժեշտություն,
13. Մարզամշակութային կենտրոնի տարածքի ընդլայնման անհրաժեշտություն,
14. Քաղաքային աղբավայրի կոնսերվացման անհրաժեշտություն,
15. Նուբարաշենի սկզբնամասում գտնվող կամրջի ամրացման անհրաժեշտություն,
16. Ոռոգման ցանցի վերանորոգում և ընդլայնում,
17. Կանաչ տարածքների ստեղծում,
18. Ենթակառուցվածքների ավելացում,
19. Սոցիալապես անապահով ընտանիքների կենսապայմանների բարելավման անհրաժեշտություն,
20. Նուբարաշեն վարչական շրջանում նոր շախմատի դպրոցի կառուցման անհրաժեշտություն,
21. Կրթամշակութային և մարզական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում,
22. Մատաղ սերնդի առողջ և ներդաշնակ զարգացման համար հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում ֆիզիկական կուլտուրա առարկայի կարևորության գնահատում, սպորտ դահլիճների հիմնանորոգում ու գույքի հազվեցվածության ապահովում:

2021 թվականին նախատեսվող ծրագրեր

1. Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում,
2. Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում,
3. Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում,
4. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում,
5. Բացօթյա դաշտերի ստեղծում,
6. Մշակութային միջոցառումների անցկացում,
7. Կրթական միջոցառումների կազմակերպում,
8. Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում,
9. Սոցիալական ապահովության ծրագրեր

1. «Փողոցների, մայթերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում»

Ծրագրի նպատակը	Նուբարաշեն վարչական շրջանի բակային տարածքների, փողոցների, խաղահրապարակների և մայրերի ասֆալտ-բետոնե ծածկի մասնակի և կապիտալ վերանորոգում: Ճանապարհների անխափան երթևեկությունն ապահովելու համար տարվա ընթացքում ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Նուբարաշեն վարչական շրջանի վարչական տարածքում գտնվող փողոցների, մայրերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն՝ հիմնանորոգման և մասնակի վերանորոգման նպատակով: Կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի վերանորոգման աշխատանքների իրականացում:
Համագործակցություն	-
Ծրագրի անմիջական նպատակ	4,000 քմ բակերի բարեկարգում և ասֆալտապատում, 1,000 գծմ մայրերի վերանորոգում:
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

2. «Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ բնակիչների զբաղվածության համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում: Կիրականացվեն ցանկապատ կամ ինքնակամ զավթված տարածքների ցանկապատերից ազատում, ապամոնտաժում, կտեղադրվեն մանկական խաղեր, աղբամաններ ու նստարաններ, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Վարչական շրջանի բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքների իրականացում: Հիմնանորոգվող բակային տարածքներում բնակիչների համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, արտաքին լուսավորության անցկացում, կանաչապատում, ինչպես նաև զրուցարանների, սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, կանաչապատման, ծաղկապատման աշխատանքների իրականացում:
Համագործակցություն	«Նուբարաշեն» համատիրություն

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Ծրագրի անմիջական նպատակ	Նուբարաշեն 11-րդ փողոց հ. 14 բազմաբնակարան շենքի բակային տարածքի 11-րդ փողոցին հարակից այգու հիմնանորոգում:
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

3. «Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում»

Ծրագրի նպատակը	Բնակիչների լիարժեք հանգիստը կազմակերպելու համար կանաչապատ, բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովում, էկոլոգիապես մաքուր միջավայրի ստեղծում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է կանաչ տարածքների ընդլայնում, ծառատունկ, ծառերի բնաբաժակների փորում և փխրեցում, սնուցում հանքային պարարտանյութերով և բուժում թունաքիմիկատներով: Ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում: Նախատեսվում է ծառերի և թփերի տնկում չոր և հիվանդ ծառերի մասնակի և խոր էտ, ծառերի սնուցում հանքային պարարտանյութերով, բուժում՝ թունաքիմիկատներով, կրապատում, ջրող մեքենաներից ոռոգում ռետինե խողովակներով: Ծրագրում կներառվեն նաև 6 հուշարձանների հարակից տարածքների պահպանման և խնամքի աշխատանքներ:
Համագործակցություն	«Կանաչապատում և շրջական միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ
Ծրագրի անմիջական նպատակ	Ծաղկապատում և ծառատունկ
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

4. «Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում»

Ծրագրի նպատակը	Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների հիմնանորոգում՝ բնակիչների
----------------	---

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով:
Համագործակցություն	«Նուբարաշեն» համատիրություն
Ծրագրի անմիջական նպատակ	Նուբարաշեն 9-րդ.1-ին, 11փողոց 5-րդ և 12-րդ փողոց 3-րդ, 4-րդ շենքերում կիրականացվի 3,200 քմ թեք տանիքների հիմնանորոգման, ինչպես նաև Նուբարաշեն 11-րդ փողոցի 19-րդ շենքի ամրացման աշխատանքներ:
Ծրագրի հիմնական շահառուները	Բազմաբնակարան շենքերի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

5. «Բացօթյա դաշտերի ստեղծում»

Ծրագրի նպատակը	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչների ներգրավվածությունը սպորտային կյանքին, առողջ ապրելակերպի խրախուսում և ֆիզիկապես պատրաստական երիտասարդության ձևավորում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի նպատակն է մատաղ սերդի մեջ խրախուսել և օժանդակել սպորտային խմբակներին հաճախելը՝ խթանել առողջ ապրելակերպի զարգացումը վարչական շրջանում:
Համագործակցություն	-
Ծրագրի անմիջական նպատակ	Մեկ ֆուտբոլի դաշտի ստեղծում
Ծրագրի հիմնական շահառուները	Վարչական շրջանի բնակիչներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

6. «Մշակութային միջոցառումների անցկացում»

Ծրագրի նպատակը	Մշակութային, պետական, ազգային տոների, հիշատակի օրերի
----------------	--

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	զանգվածային միջոցառումների կազմակերպմամբ բնակչությանը իրազեկելու տոն և հիշատակի օրերի, ազգային ծեսերի, ավանդույթների մասին, հատկապես երիտասարդության շրջանում բարձրացնելու մշակութային արժեքների, ժողովրդական ավանդույթների, ազգային տոնակատարությունների, եկեղեցական տոների կարևորությունը և ապահովելու ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությունը:
Ծրագրի համառոտ նկարագրություն	ՀՀ պետական, ազգային և եկեղեցական տոների, հիշատակի օրերի կազմակերպում և անցկացում բնակչության մասնակցությամբ, նրանց ակտիվ և պատշաճ հանգստի ապահովում: Ծրագրի շրջանակում 2021թ. կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ Հայոց բանակի օր, Տեառնընդառաջի տոն, Կանանց միջազգային օր, Մայրության, գեղեցկության և սիրո տոն, Յեղասպանության զոհերի հիշատակի օր, Աշխատավորի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Նուբարաշենի օր, Գիտելիքի, գրի և դպրության օր, ՀՀ անկախության տոն, Ուսուցչի օր, Գրադարանավարի օր, Ամանորի և Սուրբ ծննդյան տոն:
Համագործակցություն	Վարչական շրջանի ենթակայության կազմակերպություններ, բնակչություն, մշակութային կազմակերպություններ, անհատ կատարողներ, Արարատյան Հայրապետական Թեմ
Ծրագրի անմիջական նպատակ	Տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացում՝ 15 մշակութային միջոցառումներ:
Ծրագրի հիմնական շահառուները	Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ, հյուրեր
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:

7. «Կրթական միջոցառումների կազմակերպում»

Ծրագրի նպատակը	Կրթված, գիտակ, ազգային և համամարդկային արժեքները պահպանող, համակողմանիորեն զարգացած երիտասարդության դաստիարակում: Հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կրթական միջոցառումների կազմակերպում կրթամշակութային կազմակերպությունների սաների և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասնակցությամբ: Ծրագրի շրջանակներում 2021թ. Նուբարաշեն վարչական շրջանում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	Պոեզիայի միջազգային օր, Մայրենիի օր, Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում, Հուշարձանների պահպանության օր, Թանգարանների միջազգային օր, Վերջին զանգ, ՀՀ Պետական խորհրդանիշների օր, սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների հանգստի կազմակերպում Հանքավանի առողջարարական ճամբարներում, Գիտելիքի օր, Ուսուցչի օր: Կազմակերպվեն միջոցառումներ գրողների հոբբեյանական տարելիցներին նվիրված, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, գրքի շնորհանդեսներ, ազգային մշակույթին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակում դպրոցահասակների այցերի կազմակերպում թանգարաններ և պատմամշակութային վայրեր:
Համագործակցություն	Վարչական շրջանի կրթամշակութային կազմակերպություններ, անհատներ, Արարատյան հայրապետական թեմ
Ծրագրի անմիջական նպատակ	Կրթական միջոցառումների կազմակերպում, ծանոթացում արդի գրականության և ժամանակակից գրողների հետ
Ծրագրի հիմնական շահառուները	Դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաներ, մանկավարժներ
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	Ծրագիրը կիրականացվի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում

8. «Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում»

Ծրագրի նպատակը	Սպորտային միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել Նուբարաշեն վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, առողջ ապրելակերպի խթանմանն, ֆիզիկապես ամուր և առողջ երիտասարդության ձևավորմանը, մեծահասակների ներգրավմանը մարզական միջոցառումներին: Ծրագրի նպատակն է նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում, շնորհալի պատանիների հայտնաբերում և ընդգրկում մանկապատանեկան մարզադպրոցներում:
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի շրջանակներում 2021թ. վարչական շրջանում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված հետևյալ սպորտային միջոցառումները. 1. Անկախության 30-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 30-րդ մարզական խաղեր / վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, ֆուտզալ, աթլետիկա մարզաձևեր/, 2. ՀՀ հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների սպորտլանդիա մարզական միջոցառում, 3. Ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղեր 1-6-րդ

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>դասարանցիների միջև / Թեթև աթլետիկա/,</p> <p>4. ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն,</p> <p>5. Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն /վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հեծանվավազք, աթլետիկա, մարզատրամաբանական խաղեր/,</p> <p>6. Նուբարաշեն վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն: Պարգևատրման ցերեկույթ,</p> <p>7. Նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր:</p> <p>Կկազմակերպվեն նաև տոն և հիշատակի օրերին նվիրված հեծանվաշքերթյուներ, շախմատի մրցաշարեր, տարեցների մասնակցությամբ նարդու և շախմատի մրցումներ: Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների մասնակցությամբ կկազմակերպվեն սպորտլանդիաներ:</p>
<p>Համագործակցություն</p>	<p>ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ, մարզադպրոցներ, բնակչություն</p>
<p>Ծրագրի անմիջական նպատակ</p>	<p>օրացույցային պլանով նախատեսված 7 մասսայական միջոցառումների կազմակերպում</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչներ, հյուրեր</p>
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</p>	<p>2021թ. կնքված պայմանագրի համաձայն՝ ըստ սահմանված ժամանակացույցի:</p>

9. «Մոցիալական ապահովության ծրագրեր»

<p>Ծրագրի նպատակը</p>	<p>Նպատակն է վարչական շրջանում իրականացնել սոցիալապես անապահով ընտանիքներին նյութական, պարենային աջակցությունների տրամադրում, սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծում</p>
<p>Ծրագրի համառոտ նկարագրություն</p>	<p>Մոցիալական ծառայությունների իրականացվող միջոցառումների մեջ կազմակերպվում են տարբեր ծրագրեր որտեղ ներառվում են սոցիալապես անապահով ընտանիքներ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձինք, սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքներ, սոցիալապես անապահով բազմանդամ ընտանիքներ, սոցիալապես անապահով հաշմանդամություն ունեցող անձինք, միայնակ անժառանգ տարեցներ, սոցիալապես անապահով գոհված ազատամարտիկների ընտանիքներ, ծնողազուրկ երեխաներ:</p> <p>1. Տարբեր սոցիալական խմբերի համար համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում:</p>

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

	<p>2. Համագործակցության շրջանակներում սոցիալական գործընկերության և ձեռներերության ծրագրերի իրականացում</p> <p>3. Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքներին ըստ կարիքի գնահատման ցուցաբերել աջակցություն:</p> <p>4. Հայրենադարձ և փախստական ընտանիքներին աջակցություն</p> <p>5. Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն</p> <p>6. Հաղթանակի օրվա կապակցությամբ աջակցություն տրամադրվի վարչական շրջանի սոցիալապես անապահով գոհված ազատամարտիկների ընտանիքներին, Արցախյան պատերազմի 1-ին, 2-րդ խմբի սոցիալապես անապահով զինհաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին:</p> <p>7. Սոցիալապես անապահով երեխաներին դպրոցական պայուսակի և գրենական պիտույքների տրամադրում:</p>
<p>Համագործակցություն</p>	<p>«Առաքելություն Հայաստան» բարեգործական Հ/Կ, «Սատար» հաշմանդամների հ/կ, անհատ բարերարներ, Կարմիր խաչի ընկերություն և այլն:</p>
<p>Ծրագրի անմիջական պատակ</p>	<p>Հայտնաբերել կարիքի գնահատում, սոցիալապես անապահով ընտանիքներին համապատասխան աջակցության ցուցաբերում:</p>
<p>Ծրագրի հիմնական շահառուները</p>	<p>Նուբարաշեն վարչական շրջանի սոցիալապես անապահով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, սոցիալապես անապահով զինհաշմանդամներ, սոցիալապես անապահով գոհված ազատամարտիկների ընտանիքներ, սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքներ, միայնակ տարեցներ, սոցիալապես անապահով ծնողազուրկ երեխաներ, սոցիալապես անապահով հաշմանդամություն ունեցող անձինք:</p>
<p>Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց</p>	<p>Ծրագիրը կիրականացվի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում:</p>

ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Վարչական շրջանը գտնվում է երկրաչափերի օջախի Արարատյան տարածքում: Ունի շուրջ 6000-ամյա պատմություն:

Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 140.7 հազ. մարդ:

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց («Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ), 2 երաժշտական դպրոց («Երևանի Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Ստ. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ) և 3 կրթամշակութային կենտրոն (Թիվ 5 մշակութային, Պատանեկան ստեղծագործական և Կ.Նիկողոսյանի անվ. մանկապատանեկան արվեստի կենտրոններ):

Շրջանի մանկապարտեզներից 3-ը (հհ. 126, 134, 139 մանկապարտեզներ), գրադարանները, երաժշտական դպրոցներն ու մշակութային հիմնարկները վերանորոգված են: Թվով 2 մանկապարտեզ՝ հհ.129, 138 նախատեսվում է վերանորոգել ՄԱԿ-ի ծրագրի շրջանակներում, իսկ 2020թ-ին ավարտվել են հհ. 137, 143, 144, 146, 147 մանկապարտեզների նախագծա-հաշվարկային փաստաթղթերի կազմումը: «Երևանի հ. 138 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը գտնվում է ծայրահեղ անմխիթար վիճակում, իրականացվել են ուսումնասիրություններ, ենթակա է հիմնանորոգման:

Վարչական շրջանի տարածքում գործում են առողջապահական կազմակերպություններ, այդ թվում՝ 5 պոլիկլինիկա («Արտաշիսյան», «Արշակունյաց», «Թիվ 13 պոլիկլինիկա», «Կարմիր Բլուր» և «Նորագավիթ»), 3 բժշկական կենտրոն («Շենգավիթ», «Սուրբ Աստվածամայր», «Տոնոյան»), 2 ատամնաբուժական կլինիկա («Դենտա Էլիտա» և Թիվ 3 մանկական ատամնաբուժական պոլիկլինիկա), ինչպես նաև ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ «Երևանի քաղաքային կենտրոն» մասնաճյուղը: Կան բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ: Շրջանում «Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են մի շարք սոցիալապես անապահով ընտանիքներ, միայնակ տարեցներ՝ շուրջ 110 շահառուներ:

Վարչական շրջանի տարածքում մի շարք հասարակական և բարեգործական կազմակերպությունների («Հանս Քրիստիան Կոֆոյեդ» հիմնադրամ, «Շողիկ» ԲՀԿ, «Արդա», «Ալբրս» «Լույսի Աստղ» և այլն) հետ համագործակցության արդյունքում ապահովվում է սոցիալական ծրագրերի առավել հասցեականությունը, հաշմանդամ երիտասարդների զբաղվածությունն ու մասնագիտական ուսուցումը:

Վարչական շրջանում տեղակայված են արտադրական մի շարք ձեռնարկություններ՝ «Գրանդ Տոբակո», «Արաքս Գոլդ» և «Գրանդ Քենդի» համատեղ ձեռնարկությունները, «Հայ-Էլեկտրամեքենա», «Նաիրիտ», «Էլեկտրոն», «Արմեն-Կարպետ», «Երևանի ՋԷԿ» պետական փակ բաժնետիրական և այլ ընկերություններ:

Շրջանն ընդգրկում է Նոր Խարբերդ, Չարբախ, Ն. Չարբախ, Վ.Շենգավիթ, Ն.Շենգավիթ, Ալբրախ, Նորագավիթ թաղամասերը, Արշակունյաց պողոտա, Գ.Նժդեհ, Բագրատունյաց, Արտաշիսյան և հարակից փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանն ունի 636 բազմաբնակարան բնակելի շենք, 139-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 274 վերելակ, 14 վթարային շենք:

Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների թիվը՝ 212, երկարությունը՝ 147,7կմ, մակերեսը՝ 210,9 հազ. քմ: Շրջանում հաշվառված է թվով 124 թեքահարթակ:

Վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 5 աղբյուրից, շրջանում գործում է 1 ջրամբար:

Շրջանի կանաչ տարածքների ընդհանուր մակերեսը 30 հա է, գործում է ընդհանուր 33931 գծմ երկարությամբ ոռոգման ցանց:

Հիմնախնդիրներ

1. Նոր հանգստի գոտիների, խաղահրապարակների ստեղծում,
2. Փողոցների (այդ թվում՝ մայրերի) հիմնանորոգում, հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում (Ն.Չարբախ, Նոր Խարբերդ),
3. Հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացման անհրաժեշտություն,
4. Կամուրջների և ուղետարների հիմնանորոգում,
5. Վերգետնյա անցումների կառուցում,
6. Զբոսայգիների բարեկարգում և ընդլայնում,
7. Վերելակային տնտեսության արդիականացում,
8. Կոյուղու, ջրամատակարարման և ջրահեռացման նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն,
9. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորության ցանցի անցկացում,
10. Վթարային պատշգամբների վերանորոգում,
11. Վնասվածություն ունեցող շենքերի ամրացում և վերանորոգում,
12. Կանաչապատ տարածքների ընդլայնման և ստեղծման անհրաժեշտություն,
13. Նոր ոռոգման ցանցերի ստեղծման անհրաժեշտություն,
14. Նոր Խարբերդ թաղամասում գազատարի կառուցուման անհրաժեշտություն,
15. Բնակֆոնդի (բազմաբնակարան շենքերի) բարելավման անհրաժեշտություն (տանիք, մուտքեր, ջրահեռացման և ջրամատակարարման ցանց),
16. Առողջապահական ծառայությունների որակի բարձրացում (բժշկական ընկերությունների գույքի արդիականացում, վերազինում),
17. Բնակչությանը մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնում,
18. Ավտոմոբիլային և թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց հարկադիր բուժման վերականգնում,
19. Ընտանեկան բռնության ենթարկված քաղաքացիներին ժամանակավոր կացարանով ապահովում,
20. Հ.137, հ.144 և հ.147 մասնկապարտեզների շենքերը գտնվում են վթարային վիճակում: Միջհարկային ծածկերը, պատերը ունեն ճեղքվածքներ, անհրաժեշտ է կատարել մասնագիտական ուսումնասիրություն շենքի վթարային կարգը որոշելու համար,
21. Հ.129 և հ.138 մասնկապարտեզների շենքերը գտնվում են խիստ անմխիթար վիճակում: Հիմք ընդունելով հիմնանորոգման անհրաժեշտությունը, մասնկապարտեզները ներգրավվել են ՄԱԿ-ի ֆինանսական աջակցությամբ իրականացվող վերակառուցման ծրագրի մեջ,
22. Հ.127, հ.128, հ.130, հ.131, հ.132, հ.133, հ.135, հ.136, հ.140, հ.142, հ.143, հ.145 և հ.146 մասնկապարտեզները ունեն բազմաթիվ խնդիրներ և ենթակա են մասնակի վերանորոգման,

Երևան քաղաքի զարգացման 2021 թվականի ծրագիր

23. Նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործող հաստիքացուցակներում հոգեբանի և լոգոպեդի հաստիքի ավելացում՝ հաշվի առնելով մանկապարտեզի խմբերում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առկայությունը,
24. «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տանիքը ամբողջությամբ վնասված է, մարզասրահների պատերն, հատակը և առաստաղը քայքայված են,
25. Մարզադպրոցի արտաքին պատերին առկա են քարաթափումներ,
26. Անհրաժեշտ է մասամբ փոխել շենքի էլ. մալուխները,
27. Մեծ մարզասրահի հատակի ռետինե ծածկը անհրաժեշտ է փոփոխել,
28. Մարզադպրոցի նկուղային հարկը գտնվում է անմխիթար վիճակում,
29. «Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-նի հիմնանորոգման անհրաժեշտություն,
30. Գրադարանային-տեղեկատվական մատչելիության ապահովում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բնակչության համար:

2021 թվականին նախատեսվող աշխատանքներ

1. Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում,
2. Եզրաքարերի հիմնանորոգում և վերանորոգում,
3. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում,
4. Փողոցների պահպանություն և շահագործում,
5. Թեքահարթակների կառուցում,
6. Բակային տարածքների բարեկարգում,
7. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում,
8. Մուտքերի վերանորոգում,
9. Գեղարվեստական լուսավորում, լուսավորության ցանցի վերանորոգում,
10. Վերելակների վերանորոգում,
11. Վթարային պատշգամբների վերանորոգում,
12. Ախտահանման և միջատազերծման ծառայություններ /դեռատիզացիա/,
13. Հենապատերի վերանորոգում,
14. Կոյուղագծերի կառուցում,
15. Ջրագծերի կառուցում,
16. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում,
17. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն,
18. Սոցիալապես անապահով անձանց աջակցություն,
19. Նախադպրոցական կրթություն և արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն,
20. Մշակութային միջոցառումների իրականացում,
21. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում,
22. Սպորտային միջոցառումների կազմակերպում,
23. Գրադարանային ծառայությունների մատուցում:

1. «Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում»

Ծրագրի նպատակը	Ծրագրի անմիջական նպատակը քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է: Կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ շրջանի այն թաղամասերում և փողոցներում, որտեղ առկա են առաջնահերթ խնդիրներ:
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն մի շարք հասցեներում, ինչպես նաև այն հասցեներում, որտեղ կլինի ընթացիկ վերանորոգման անհրաժեշտություն: Կտարվեն մշտական աշխատանքներ՝ պահպանելու ասֆալտբետոնե ծածկը: Կիրականացվեն փոսալցման աշխատանքներ: Նոր Խարբերդ և Ն.Չարբախ թաղամասերում կան գրունտային ճանապարհներ, որտեղ նոր ճանապարհ կառուցելու անհրաժեշտության կա, մի շարք փողոցներում կիրականացվեն նաև հիմնանորոգման աշխատանքներ:
Համագործակցություն	Համատիրություններ, գործարար ոլորտ, բարերարներ
Ծրագրի անմիջական նպատակը	33412,5 քմ
Ծրագրի հիմնական շահառուները	Քաղաքացիները
Ծրագրի սկիզբ և ավարտ, իրականացման ժամանակացույց	2021թ. 1-4-րդ եռամսյակներ

